# ԷՋՄԻԱԾԻՆ



ՌՆԺԶ
ԻԳ ՏԱՐԻ

Ապրիլ

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Դ

1967

ՊԱ-7960.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Էջ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Հարության վկայությունը . . . . . . . . . . 3
Փրկչի հրաշափառ և սուրբ հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և Նվիրապետական Աթոռների և առաջնորդարանների միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները . . . . . . . . . . 6
Վեհափառ Հայրապետի քարոզը ս. Զատկի առթիվ խոսված Մայր տաճարում, կիրակի՝ մարտի 26-ին . . . . . . . . . . 9
Հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագ Մայր տաճարում՝ Փրկչի հրաշափառ հարության տոնի առթիվ . . . . . . . . . . 12
Հայրապետական հանդիսավոր ս. պատարագ և քարոզ Երևանի ս. Սարգիս եկեղեցում . 13
Այցելություն Երևանի քաղաքագլուխ Գ. Հասրաթյանին . . . . . . . 15
Հաղորդագրություն . . . . . . . . . . 17
Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար, դոկտ. Է. Կ. Բլեյկը Մայր Աթոռում . . . . . . . . . . 18
Վեհափառ Հայրապետի հայտարարությունը Երևանի ռադիոյի թղթակցին . . . . 22
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ . . . . . . . . . . 23
Մայր Աթոռի շինարարական ծրագրերը 1967 թվականին . . . . . . 25
Ծայրագույն վարդապետական իշխանության տվչություն . . . . . . 27
Ս. Ներսես Շնորհալու անտիպ տաղերը . . . . . . . . 29
Եկեղեցական կյանք—Բուխարեստ. Եկեղեցական կյանք—Սոֆիա . . . . . . 31
Ա. Հ.—Վարդան քհն. Տյուլքերյան՝ «Կյանքը ցերեկվանեն անցին» (Թեհրան, 1962, 141 էջ), «Կիրակնօրյա խոսքեր» (Երուսաղեմ, տպարան Սրբոց Հակոբյանց, 1966, 223 էջ) 34
Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ—Կոմիտասին հետ . . . . . . . . . . 37
Հ. ԲԱՐԹԻԿՅԱՆ—Իսահակ Անգեղոս կայսեր պատասխան նամակը հայոց կաթողիկոս Գրիգոր Տղային . . . . . . . . . . 50
Ս. Ա. ԱՎԱԳՅԱՆ—Մոռո ձորի վանքը և նրա վիմարձանագրությունները . . . . 56
ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ . . . . . . . . . . 61



**ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝**

**ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ**

**«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS.

**Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1967 թ.**

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

 

# ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

## ՀԱՐՈՒԹՅԱՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

«Վկայ յարութեան նորա ընդ մեզ լինել» (Գործք Ա. 22):

Մեր եկեղեցին ըստ հնավանդ սովորության, հիսնօրյա տոնակատարությամբ է նշում ամեն տարի Փրկչի հարության տոնը, որպես փրկագործության խորհրդի պսակն ու լրումը, շեշտելով հավատացյալի կյանքում Զատկի խորհրդի հոգևոր, բարոյական նշանակությունը:

Եկեղեցական օրացույցում հարության տոնին ու խորհրդին նվիրված այդ օրերի շարքը՝ Զատկից մինչև Հոգեգալուստ, կոչվում է **Յիսունք** (հիսուն օրեր) կամ **Յիսնակաց** շրջան:

Հիսնակաց շրջանի առաջին կիրակին՝ Զատկի կամ Հարության կիրակին է:

Հայաստանյայց եկեղեցին, սրտառուչ բարեպաշտությամբ, ամեն տարի, գարնան, բնության ու կյանքի ուժերի հաղթական տոնի հետ, ցնծագին հռչակում է նաև ս. Հարության տոնի՝ հոգևոր գարունի ավետիսը, Ներսես Լամբրոնացու բերնով.

**«Այսօր յարեաւ ի մեռելոց**
**Փեսայն անմահ և երկնաւոր,**
**Քեզ աւետիք խնդութեան,**
**Հարսն ի յերկրէ եկեղեցի»:**

Հինանց բոլոր կիրակիներն էլ գեղեցիկ, իմաստալից անուններ ունեն և շեշտված արտահայտությամբ Փրկչի հարության և փրկագործության գաղափարի հռչակումն ու պանծացումն են հանդիսանում, ինչպիսիք են՝ **Նոր կիրակի** կամ **կրկնազատիկ, Կանաչ կիրակի** (աշխարհամատրան), **Կարմիր կիրակի, Երևման խաչի կիրակի, Համբարձում, Երկրորդ ծաղկազարդ** և այլն:

Ս. Հարության, որպես Քրիստոսի երկրավոր կյանքի փրկչական գործունեության վերջին դեպքի, հիշատակին են նվիրված տարվա բոլոր կիրակիները:

Մեր Շարակնոցում Հարության տոնի և «Յինանց» բոլոր օրերի համար կան մասնավոր շարական-օրհնություններ, որոնց կանոնը վերագրվում է Ը դարի մատենագիր Ստեփանոս Սյունեցուն. «Բաժանեաց և զութ ձայնսն և կարգեաց շարականս, զյարութեան օրհնութիւնսն, երգեաց և կցուրդս քաղցրահամս, յարմարեաց և զստողոգին յինանցն եօթն եղանակօք» (Ստեփանոս Օրբելյան):

Այնուհետև ԺԲ դարում Ներսես Լամբրոնացին Շարակնոցի հարության օրհնությունները ճոխացրել է երեք կանոն հարության նոր օրհնություններով, ինչպիսիք են Զատկի՝ «Այսօր յարեաւ»-ը, Նոր կիրակիի՝ «Նորոգեալ կղզիք»-ը և Համբարձման՝ «Համբարձաւ Տէրն մեր յերկինս»-ը:

Հարության շարականների մեջ Քրիստոս երգվում է որպես աշխարհի փրկիչ, տիե-

դեպքի և կյանքի վերանորոգիչ, որ հաղթություն տարավ աշխարհի մահացուցիչ և չար ուժերի դեմ և մարդուն կտակեց հավերժական կյանքի հույսն ու խոստումը, որպես անճառելի Լույս, որ լուսավորում է հավատացյալներին, փարատում «անգիտութեան մութն ու խաւարը», որպէս «գիտութեան Լոյս», որ «լուսաւորեաց զաշխարհ» և «նորոգեաց զտիեզերս»:

Ըստ սրբազան շարականագրի, Ադամի մեղքով, մեղանչումով մարդկությունը «մերժեցաւ ի Լուսոյն», իսկ Քրիստոսի հարությամբ «զգեցաւ զանմահութիւն»: Անհավատալին իրականացել է հրաշալի ստուգությամբ, որով շարականագիրը կոչ է անում եկեղեցուն հարության առավոտյան.

**«Այսօր Զատիկ մեր զենմամբ Քրիստոս**
**Արասցուք տօն ցնծութեամբ**
**Նորոգեալքս ի հնութենէ մեղաց»:**

Իրագործվել է աստվածային մեծ խոստումը: Հարության Հավատքն ու Լույսը ճառագայթում են բոլոր ժամանակների վրա: Հոգևոր գարուն է, մարդկային գիտակցության, խղճի և հոգու զարթոնքի լուսաբացը:

Վեհափառ Հայրապետը, Իր հարության գեղեցկահյուս քարոզի մեջ, Զատկի տոնին, Մայր տաճարում խոսված, շեշտում է Փրկչի հարության ոգեկան կարևորությունն ու նշանակությունը աշխարհի և մարդկության համար, **«իբրև լուսաբացը մեր հոգեկան գարունին... բոլոր անոնց համար, որոնք կդավանին իրողությունը և ճշմարտությունը մարդկային հոգեկան աշխարհին, իրողությունը և ճշմարտությունը ոգեկան արժեքներուն և բարոյական սկզբունքներով Քրիստոսի հարությունը առաջքը կհանդիսանա այդ հոգեկան աշխարհին, սկզբնավորողը և բեղմնավորողը ոգեկան արժեքներուն ու նաև վեմը և գերագույն երաշխիքը բարոյական ճշմարտություններուն»:**

Փրկչի հարության պատմական եղելությունը, ըստ Ավետարանի վկայության և մեր հավատքի, հանդիսացավ հուսալի ակիզբը մարդու հոգևոր և բարոյական վերանորոգության, հավիտենական կյանքի ուրախության: Հարությունը անցյալի ու ապագայի լուսավոր կամուրջն է, խոստումը հավիտենականության հավատքին:

Փրկչի հարության ավետիքով գեղեցկացավ կյանքը և նոր արժեք ու իմաստ ստացավ աշխարհը մարդու համար:

Բարոյապես սնանկացած, հավատքից, տեսիլքից դատարկված հին աշխարհը Քրիստոսի հարության ավետիքով վերակենդանացավ, և մարդկությունը գտավ իր ճշմարիտ փրկության և լուսի ճանապարհը:

Հարության հավատքը, քրիստոնեական կրոնի բյուրեղացած ճշմարտություններից մեծագույնը, ոչ միայն դարձավ խարիսխն ու հիմնաքարը եկեղեցու վարդապետական դավանության, այլ նաև նրա գործունեության, կյանքի և քրիստոնեական քարոզության հիմնապայմանն և առանցքը, ավետարաններով, առաքելական քարոզությամբ և նահատակությամբ վավերացված ու կնքված:

Առաքյալների և առաջին հավատացյալների քարոզության և հավատքի վկայության գլխավոր նյութն էր Քրիստոսի հարությունը: Առաքյալ, ավետարանիչ և քրիստոնյա լինել, նշանակում էր վկա լինել Փրկչի հարության. «Վկայ յարութեան նորա ընդ մեզ լինել» (Գործք Ա. 22):

Այսօր էլ, հարության սրբազան այս առավոտյան, մի անգամ ևս մեր դեմ է կանգնել իր աստվածային ու մարդկային բովանդակ փառքին մեջ Քրիստոսը, որպես կյանքի աղբյուր, հարուցյալ կենդանություն, ճշմարտության քարոզ, անմահության հրավեր. **«Ես եմ ճանապարհ, ճշմարտութիւն, կեանք, զի՞ խնդրէք զկենդանին ընդ մեռեալս»:** Քրիստոնեական մեր հավատքը չի հիմնվել Հիսուսի գերեզմանի վրա, այլ կյանքի ու ճշմարտության վրա: **«Մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգևեաց»:**

Հարության տոնը իր խորհրդով, իր այրումներով ու ներշնչումներով խոսում է նաև հայ հավատացյալ ժողովրդի սրտին. **«Քրիստոսի հարության լույսը, պատգամում է Հայոց Հայրապետը, ողողեց նաև աշխարհը հայոց և հիշատակության արժանի իրագործումներով լեցուց պատմությունը մեր ազգին: Այդ լույսով մանավանդ մեր ժողովուրդը իր հոգին պեղեց, իր ինքնությունը գտավ, ինքզինք կերտեց՝ սկսյալ չորրորդ դարու սկզբներեն, հոգևոր, մշակութային ու քաղաքական մեծ նվաճումներով»:**

Մենք որպես եկեղեցի և ժողովուրդ, Քրիստոսի հարության հրաշքին առաջին հավատացյալներից մենք ենք եղել և մեր պատմությամբ, մեր գոյությամբ բերել ենք աշխարհին մեծագույն վկայությունը հարության իրողության. «և մեզ ընդ իւր յարուցէ»:

Հայ ժողովուրդն անցյալի մեջ իր կյանքը, իր գոյությունը, իր մշակույթը պարտական է ամեն բանից վեր և առաջ Քրիստոսի հարության իր հավատքին: Այդ հավատքով հաղթահարել ենք պատմության բոլոր արհավիրքները, ապրել ու ստեղծագործել: Քրիս-

տոսի հայության անխաթ հավատքը մեր ժողովրդին բերել է լավագույն և արդար կյանքի հույսն ու խոստումը: Մեզ չեն կարողացել գերեզմանել ոչ ժամանակը, ոչ արհավիրքները, ոչ էլ մեր թշնամիները: Մենք լույսի, կյանքի, հավերժության ձգտող ժողովուրդ ենք եղել: Մեր խաչելության ճանապարհներից, տառապանքների Գողգոթայից տեսել ու ողջունել ենք մեր հարության լուսաբացը որպես եկեղեցի և ժողովուրդ:

Վերջապես՝ հայ ժողովուրդը մեր օրերին մանավանդ, որպես «ոգեկան հավաքականություն», այդ հավատքով և տեսիլքով վերածնվել է ճշմարտապես իր հայրենի հողին վրա, ս. Էջմիածնի օրհնության ներքո:

Այսօր մեր եկեղեցու, մեր ժողովրդի հավատքի և վերակենդանության գարունն է, նոր կյանքի այգաբացը: Բայց «չխորհենք, թե բավական է լոկ հավատալ այս ճշմարտություններուն ու գոհացում գտնել ինքնաբավ կրավորական կեցվածքի մը մեջ, կարծելով թե ապահովված են մեր հոգիներու արդարացումը, մեր կյանքը, մեր փրկությունը»,— պատգամում է Հայոց Հայրապետը:

Հավատքը գործի վերածված, ապրված ու նուսացված կյանքն է, և հավատքը «առանց գործոց մեռեալ է»:

Հարության «լույսին արժանանալու» և «հարության ապրումի բարձունքին կարենալ հասնելու համար»,— շեշտում է Վեհափառ Հայրապետը ամեն օր,— զՔրիստոս պետք է «կրեմք ի մարմինս մեր», ապրենք «Քրիստոսի հարության լույսին մեջ, Ավետարանի ոգեկանության շողակաթումին ներքո, որպեսզի մեր ժողովուրդը շարունակե ուղիղ ընթանա մեր լուսաբնակ նախնյաց ճամբով»:

Փառք հրաշափառ յարութեան քո Տէր, և փառք հրաշափառ հարության քո, եկեղեցի Հայաստանյայց և ազգ իմ սիրելի, ազգ հայոց:



# ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա-ԻՆ (Անթիլիաս),
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ, ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
Տ. ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ (Երուսաղեմ),
ԹՈՒՐՔԻՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ, ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
Տ. ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ (Ստամբուլ),
ԲԱՐԵԽՆԱՄ ԲՈԼՈՐ ԹԵՄԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ
ԵՎ ԳԵՐԱՊԱՏԻՎ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻՆ։

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»։

Հայոց սուրբ հավատքի կեդրոն սուրբ Էջմիածնեն Ձեզի մեծ ավետիսը կբերենք մեր Տիրոջ և Փրկչի հրաշալի հարության մեր սիրտը հույսով լեցուն, թե հայության ավետիսը ամեն տարի նոր լույս կճառագայթե մեր զավակներու հոգիներու աշխարհին մեջ։

Թող շողա այդ լույսը միշտ պայծառ ու հաղթական նաև մեր եկեղեցվո կյանքին ու գործին մեջ, ի հոգևոր շինություն մեր հավատացյալ ժողովուրդին։

Լույս, օրհնություն և սրտաբուխ մաղթանքներ, սիրելի Հայր Սուրբ, և Ձեր տիրախնամ եկեղեցական վարչության հարգարժան անդամներուն և համայն մեր հավատացյալ զավակներուն։

Շնորհավոր սուրբ Զատիկ։

Շնորհք, սէր և խաղաղութիւն հարուցեալ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ այժմ և յաւիտեանս։ Ամէն։

Սիրո ողջունիվ և հայրական օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

* * *

Նմանօրինակ շնորհավորական գրություններ ուղարկվեցին նաև թեմական և կենտրոնական վարչությանց և խորհուրդներին, Հայկական բարեգործական ընդհանուր միության Կենտրոնական վարչության նախագահ, պրոֆ. Ալեքս Մանուկյանին (Նյու-Յորք), Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության Կենտրոնական խնամակալության նախագահ, դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերտիգային (Լիսաբոն), ս. Էջմիածնի համձնախմբի նախագահ, պրոֆ. Կ. Ալթունյանին (Բեյրութ), Վարդանանց ասպետներին (Ուոտերտաուն), Կալկաթայի հայկական ընկերության վարչությանը (Կալկաթա), գաղութային վարչություններին, հայրենակցական, մշակութային, տիկնանց, երիտասարդաց և օրիորդաց զանազան կազմակերպություններին, Մայր Աթոռի և հոգևոր ճեմարանի բարերարներին և ծանոթ ազգային դեմքերին։

* * *

Ծնորհազարդ և Սիրելի Եղբայր ի Քրիստոս։

Տյառն մերո Հիսուսի Քրիստոսի հրաշափառ հարության ս. տոնին առթիվ Ձերդ Վեհափառության կներկայացնենք Մեր սրտալից շնորհավորությունները ու լավագույն մաղթանքները։

Ի խորոց սրտի կմաղթենք, որ ս. Զատկի տոնը իր կրոնական ներշնչումներում հետ միասին բերե ամենուս ազգային հարության և ազգային վերանորոգության հույսն ու հավատքը։

Կաղոթենք ջերմեռանդ, որ հարուցյալ Տերը ամբողջ և անխռով պահե ու պահպանե Հայոց Առաքելական ս. եկեղեցին, նվիրապետական մեր ս. Աթոռները և հավատացյալ հայ ժողովուրդը՝ ի խնամս մարդասիրության Իւրո և Ձեզի պարգևե քաջառողջ և երջանկալից երկար կյանք։

«Ձեզ և Մեզ մեծ ավետիք.

Քրիստոս հարյավ ի մեռելոց»։

Մնամ օրհնաձայն սիրո ջերմ ողջունիվ.

աղոթակից՝

**ԽՈՐԵՆ Ա**

**Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո**

ԱՆԹԻԼԻԱՍ

* * *

Վեհափառ Տեր,

Մեր Տիրոջ հարության բարեբաստիկ տոնի առթիվ ընդունեցեք իմ, միաբանության և համայն ժողովրդի ամենաանկեղծ շնորհավորանքները։ Ցանկանում ենք Ձերդ Սրբությանը քաջառողջություն և Մայր Աթոռին բարգավաճում։

**ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ**

**Պատրիարք հայոց Երուսաղեմի**

ԵՐՈՒՍԱՂԵՄ

* * *

Վեհափառ Տեր,

Մեր Փրկչին՝ Հիսուսի Քրիստոսի կենսատու հարության տոնին առթիվ կուգանք շնորհավորել Ձեր Ս. Օծությունը թե՛ մեր կողմե և թե՛ հանուն պատրիարքությանս հոգևոր դասուն, պաշտոնական մարմիններուն և համայն հավատացյալ ժողովուրդին։

Կմաղթենք Ս. Օծությանդ ս. Զատկի զվարթ տոնակատարություն և Իր մտահոգության փարատում և արդարության և օրինականության հաղթանակ ամեն մարզի մեջ: Վեհիդ վառ հույսերում իրականացում և խաչված դատերու հարություն, Ձեր թանկ կենաց մշտատույգ առողջություն և ձեռքի գործերում հաջողություն:

Մատչելով Օծելույդ աջին ի համբույր,

Խոնարհ աղոթակից՝

**ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ**
Պատրիարք Հայոց Թուրքիո

ՍՏԱՄԲՈՒԼ

* * *

Ս. Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին նաև ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ այլ շնորհավորական հեռագրեր և նամակներ՝ արտասահմանի և ներքին մեր բոլոր թեմերի թեմակալ առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:



## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ Ս. ԶԱՏԿԻ ԱՌԻԹԻՎ, ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ, ԿԻՐԱԿԻ՝ ՄԱՐՏԻ 26-ԻՆ

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ: Ամէն:

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Ամեն տարի Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին ցնծությամբ կտոնե սուրբ Զատիկը՝ հիշատակը մեր Փրկչի լուսափայլ հարության:

Ամեն տարի գարնան լուսաբացին, վերանորոգյալ հավատքով կողջունենք ավետիսը Քրիստոսի հարության, իբրև լուսաբացը մեր հոգեկան գարունին:

Արդարև, բոլոր անոնց համար, որոնք կդավանին իրողությունը և ճշմարտությունը մարդկային հոգեկան աշխարհին, իրողությունը և ճշմարտությունը ոգեկան արժեքներուն, և բարոյական սկզբունքներով, Քրիստոսի հարությունը առանցքը կհանդիսանա այդ հոգեկան աշխարհին, սկզբնավորողը և բեղմնավորողը ոգեկան արժեքներուն ու նաև վեմը և գերագույն երաշխիքը բարոյական ճշմարտություններուն:

Հարության գաղափարը մարդկային ընկերային պատմական կյանքի բազմահազարամյա փորձի արգասիքն է՝ լիությամբ ու պայծառությամբ բյուրեղացած Քրիստոսի հրաշալի հարությամբ ու հռչակված սուրբ Ավետարանի Աստվածաշունչ մատյանով, որ մարդկությունը ողողած է անսպառ լույսով և լեցուցած զայն սքանչելի իրագործումներով, ահա երկու հազար տարիներն ի վեր:

Աստված լիապես ու ամբողջապես հայտընվեցավ մարդկային աշխարհին՝ Իր միածին Որդվով՝ Քրիստոսով:

Քրիստոս, Իր ծնունդով, երկիր բերավ խոսքը Աստուծո և Իր հարութենեն հետո երկիր թողուց շնորհաբաշխ սուրբ Հոգին Աստուծո: Ահա թե ինչու Քրիստոսի հարության ավետիսը սկիզբն է հավատացյալի բոլոր ուրախություններուն, ստուգությունը փրկության մեծ հույսին, գերագույն երաշխիքը հոգու անմահության:

Այսպես է, որ մեծ առաքյալը իրավամբ կգոչե՝ «Եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ ընդունայն է քարոզութիւնն մեր. ընդունայն են և հաւատք ձեր» (Ա. Կորթն. ԺԵ. 14):

Քրիստոսի հարության լույսը ողողեց նաև աշխարհը Հայոց և հիշատակության արժանի իրագործումներով լեցուց պատմությունը մեր ազգին:

Այդ լույսով, մանավանդ, մեր ժողովուրդը իր հոգին պեղեց, իր ինքնությունը գտավ, ինքզինք կերտեց՝ ակդյալ չորրորդ դարու սկզբներեն՝ հոգևոր, մշակութային և քաղաքական մեծ նվաճումներով:

Հոգևոր նվաճում՝ հաղթանակը նոր ուխտի և Փրկչի իջման տեսիլքը ս. Գրիգոր Լուսավորչին:

Մշակութային նվաճում՝ հայ տառերու գյուտը և հայերեն թարգմանությունը Աստվածաշունչ մատյանին:

Քաղաքական նվաճում՝ ճակատամարտը Ավարայրի:

Այսպես ծնավ ու կազմավորվեցավ հայ ժողովուրդը իբրև ոգեկան իմացական հավաքականություն:

Այսպես լուսավորվեցավ ու զարգացավ անոր առաքելությունը պատմության ընթացքին:

Հայ ժողովուրդը, մեր օրերուն ալ, միշտ նույն ոգեկան իմացական հիմքերու վրա կշարունակե իր երթը քաղաքակիրթ ազգերու կողքին: Ժամանակը և նորագույն պայմանները կյանքի՝ էապես ոչինչ չեն խաթարած անոր հոգեկան աշխարհին մեջ, անոր ստեղծագործ խոյանքին մեջ, դեպի ապագան անոր հայրենաշեն ապասումներուն մեջ:

Տեսիլքը սուրբ Լուսավորչի, գյուտը սուրբ Մեսրոպի և հրամանը Կարմիր Վարդանի կմնան, հետզհետե առավել փայլատակումով, ոգեշնչողը բոլոր հայ սրտերուն, վերածնած մեր հայրենի երկրին մեջ, ինչպես և հայ սփյուռքի տարածքին վրա, ուր մեր պանդուխտ զավակները իրենց հոգիի բոլոր թելերով անքակտելի կերպով կապված կմնան իրենց քրիստոնեական հավատքի գերագույն կեդրոն, աստվածակառույց սուրբ Էջմիածնին և սուրբ-գրական երկրին՝ Հայաստան:

Զատիկ է այսօր, սիրելի հավատացյալներ: Հավատքի, լույսի և հույսի տոն է այսօր: Որովհետև ««յարեաւ Քրիստոս ի մեռելոց», որովհետև «մահուան զմահ կոխեաց» և «մեզ զկեանս պարգևեաց»: Այո, ճշմարտապես հարություն առավ Քրիստոս, ճշմարտապես հաղթեց մահվան, ու ճշմարտապես կյանք պարգևեց մեզի: Սակայն արթուն ըլլանք հոգիով, և չխորհինք, թե բավական է լոկ հավատալ այս ճշմարտություններուն ու գոհացում գտնել ինքնաբավ կրավորական կեցվածքի մը մեջ, կարծելով, թե ապահովված են մեր հոգիներու արդարացումը, մեր կյանքը, մեր փրկությունը:

Աստվածորդին՝ Քրիստոս, պատմականորեն մեկ անգամ հարություն առավ, այո, և ընդմիշտ հաղթեց մահվան, կյանք պարգևելով մարդուն, սակայն որպեսզի մեզմե ամեն մեկը արժանի ու մասնակից դառնա այդ շնորհներուն, պետք է տևապես իր կյանքի ընթացքին Քրիստոս կրե իր սրտին մեջ, տևապես մաքառի մեղքին դեմ, տևապես բարին գործե, կարենալ հասնելու համար հարության ապրումի բարձունքին: Մահվան արմատը չարն է, անոր սկիզբը՝ մեղքը: Չարին հաղթելով, մեղքը խափանելով է, որ ամեն մեկուս հոգեկան աշխարհին մեջ Քրիստոս կրնա հարություն առնել: Մեր հավատքով, մեր կյանքի բարի ու արդար գործերով, չարիքին դեմ մեր արիությամբ պիտի կարողանանք արժանանալ Քրիստոսի հարության լույսին, անոր շնորհներուն: Պողոս առաքյալ կվկայե՝ «արդ ազատացեալք ի մեղացն և ծառայեալք Աստուծոյ՝ ունիք զպտուղ ձեր ի մեղացն և ծառայեալք Աստուծոյ՝ ունիք զպտուղ ձեր ի սրբութիւն, և վախճան նորա կեանք յաւիտենից: Զի թոշակ մեղաց մահ է. այլ շնորհք Աստուծոյ կեանք յաւիտենից ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր» (Հռոմ. Զ. 22—23):

Եվ այն, ինչ ճշմարիտ է մեր ազգի զավակներեն ամեն մեկուն համար առանձին, ճշմարիտ է նաև մեր ամբողջ ազգին համար, իբրև հավաքական ամբողջություն, իբրև եկեղեցի և ժողովուրդ: Հայ ժողովուրդը իր կրոնական հավատքով, իր մայր եկեղեցիով, իր մշակույթով և մեր օրերու իր ազգային-հայրենական վերածնունդով, հոգևոր, մշակութային, բարոյական ամբողջ մըն է, ապրող, աճող ու ստեղծագործող մարմին մը՝ ոչ միայն նյութեղեն, այլ մանավանդ հոգեկան:

Այդ հավաքական հոգին է, որ պիտի պահենք Քրիստոսի հարության լույսին մեջ, Ավետարանի ոգեկանության շողակաթումին ներքո, որպեսզի մեր ժողովուրդը շարունակե ուղիղ գծով ընթանալ մեր լուսաբնակ նախնյաց ճամփով:

Դարերը կանցնին, ժամանակները կփոխվին, սերունդներ կու գան ու կերթան, արտաքին նոր պայմաններ կյանքի կկոչվին, սակայն վավերական ազգի մը հոգին, ինքն ալ թեև հարաշարժ ու մշտանորոգ, կպահե ու կպահպանե իր սկզբնական անհատականությունը, ըլլալու և գործելու իր սեփական ոճը, կյանքն ու աշխարհը ընկալելու իր ուրույն կերպը, այնպես, ինչպես դարավոր կաղնին թեև ամեն տարի իր ոստերն ու տերևները կփոխե, բայց իր արյունը միշտ կստանա իր միևնույն արմատներեն: Ժողովուրդի մը պատմությունը խորքին մեջ պատմությունն է՝ իր հոգեկան ուժերը կենսագործելու անսահմանորեն այլազան կերպերուն:

Արդ, սիրեցյալ զավակներ Մեր, աղոթեցեք և արթուն մնացեք, և գործեցեք այնպես,

որ Քրիստոս չմեռնի ձեր հոգիներեն ներս, որ Քրիստոս չմեռնի մեր ժողովուրդի գիտակցության ու պատմության մեջ: «Զհոգին մի շիջուցանէք»՝ կպատգամե մեզի Պողոս առաքյալ: Քրիստոսի հարության ստուգությամբ, Քրիստոսի հարության լույսով հավետ վառ ու անշեջ պիտի պահենք մեր հոգիները: Զի «յորժամ Քրիստոս յայտնեսցի՝ կեանքն ձեր, յայնժամ և Դուք ընդ նմա յայտնեսջիք փառօք» (Կողոս. Գ. 4):

Զատիկ է այսօր, սիրելի հավատացյալ ժողովուրդ, տոնը Քրիստոսի լուսափայլ հարության, մխիթարությունը և ուրախությունը մեր, կենարար հույսը մեր լինելության և հավերժության:

Ամուր փարած ձեր առաքելական սուրբ եկեղեցիին, Մայր Աթոռ սուրբ Էջմիածնին և ձեր սրտերուն մեջ վառ ու պայծառ պահած անմար ջահը հայության հոգիին, աճեցեք, բազմացեք ու զորացեք Աստուծո օրհնության ներքո:

Եվ այսօր, զատկական այս լույս առավոտյան, բերկրյալ հոգիներով բարձր երգեցեք ու փառաբանեցեք Արարիչը լուսո և առաջին Լույսը մեր՝ զհարուցյալ Փրկիչն մեր Քրիստոս:

«Փառք հրաշափառ յարութեան Քո Տէր»:

Լույս և խաղաղություն համայն աշխարհին, բոլոր ժողովուրդներուն:

Լույս և խաղաղություն մեր հարազատ ժողովուրդին և նոր կյանքի կոչված, վերաշինող ու կենսուրախ մեր մայր երկրին, արնաշող, հավերժական Հայաստանին:

Լոյս և խաղաղութիւն և շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ այժմ և յաւիտեանս: Ամէն:



## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ՝ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

**Մարտի 26-ին՝ կիրակի, *«Զատիկ. Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»***

*Օրվա մեծ տոնի առիթով ուխտավորների հոծ բազմությունը լցրել է Մայր տաճարն ու մայրավանքի շրջափակը։*

*Օրը գարնանային է, ջերմ ու պայծառ։*

*Առավոտյան ժամը 11.30-ին* Վեհափառ Հայրապետը, *եկեղեցական թափորով ու ամպհովանու տակ, հանդիսավորությամբ առաջնորդվում է Մայր տաճար՝ զատկական հայրապետական սուրբ պատարագ մատուցելու։*

*Մայր տաճարը զարդարվել է տոնականորեն։ Ամեն կողմ խունկ ու աղոթքի մրմունջներ։*

*Մայր տաճարի աջակողմյան և ձախակողմյան դասերում տեղ են գրավել Գերագույն հոգևոր խորհրդի, Վերստուգիչ հանձնաժողովի, «Էջմիածին» ամսագրի խմբագրական և ճեմարանի դասախոսական կազմի անդամները, վանքի պաշտոնեությունը և այլ հրավիրյալներ։*

*Սուրբ պատարագի կոմիտասյան երգեցողությունը կատարում է Մայր տաճարի երգեցիկ խումբը։*

*Վեհ, հաղթական ու սրտառուչ հնչում են հարության տաղերն ու մեղեդիները՝ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» և «Գովեա՛ Երուսաղէմ, զՏէր»։*

*«Հայր մեր»-ի ժամանակ քարոզում է Վեհափառ Հայրապետը։*

*Նույն օրը, երեկոյան ժամը 11.30-ին, Երևանի ռադիոկայանից ձայնասփռվում է Վեհափառ Հայրապետի զատկական քարոզը։*

*Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է վեհարան՝ Գահասրահ, ուր ընդունում է շնորհավորություններ։*

*Հանուն Մայր Աթոռի միաբանության և բոլոր ներկաների, Վեհափառ Հայրապետի Զատիկը շնորհավորում է Մայր տաճարի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը։*

*Այնուհետև խոսք է առնում Հայոց Հայրապետը, շնորհավորում՝ հայ եկեղեցու և բովանդակ հայ ժողովրդի տոնը՝ Զատիկը, և օրհնելով ազգն ու եկեղեցին, ժողովուրդն ու հայրենիքը, բարեմաղթություններ է անում Մայր Աթոռ ս. Էջմիածնի, մեր նվիրապետական Աթոռների, թեմերի պայծառության, մայր հայրենիքի և հայ ժողովրդի բարօրության և համայն աշխարհի խաղաղության համար։*

*Բոլոր ներկաները աջահամբույրով շնորհավորում են Վեհափառ Հայրապետի Զատիկը։*

*Խմբովին երգված Տերունական աղոթքով և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով ավարտվում է զատկական տոնի հանդիսությունը Մայր Աթոռում։*

# ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ԵՐԵՎԱՆԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Ապրիլի 2-ին՝ Նոր կիրակի օր, Վեհափառ
յրապետը հովվապետական այցելություն
տալիս Երևանի ս. Սարգիս եկեղեցուն՝
ստկի տոնի առիթով։
Ն. Ս. Օծությունը առավոտյան ժամը
1.30-ին Մայր Աթոռից ժամանում է մայ-
րաքաղաք և ս. Սարգիս եկեղեցու առաջ,
մպհովանու ներքո, եկեղեցական թափորով
«Հրաշափառ»-ով մուտք է գործում եկե-
ղեցի։

Առաջնորդանիստ եկեղեցին լիքն է հա-
ատացյալներով։ Հոծ բազմությունը ջերմո-
ն և ուխտավորի երկյուղածությամբ դիմա-
րում է Հայոց Հայրապետին։

Տոնականորեն զարդարված ու վերջերս
րանորոգված եկեղեցում, Արարատյան
մի փոխանորդ տ. Վահան եպս. Տերյանը,
նուն հոգևորականության, թեմական, ե-
ղեցական վարչության և հավատացյալ-
րի, սրտագին ողջունում է Հայոց Հայրա-
ետի շնորհաբեր այցելությունը։

Ժամը 11-ին սկսվում է հայրապետական
նդիսավոր ս. պատարագը։

Ս. Սեղանին սպասարկում են տ. Հայկա-
ուն, տ. Վահան սրբազանները, տ. Կյուրեղ
տ. Ներսես վարդապետները, տ. Կոմիտաս
տ. Ռուբեն քահանա հայրերը։

Ս. Սարգիս եկեղեցու երգեցիկ խումբը
րնատնից հնչեցնում է ս. պատարագի եկ-
այյան երգեցողությունը։

*«Հայր մերս»-ի ժամանակ քարոզում է Վեհափառ Հայրապետը՝ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց» բնաբանով։*

«Այս առավոտ, այս սուրբ կամարների տակ, Քրիստոսի հարության ավետիսի հետ, ողջո՜ւյն և օրհնությո՜ւն աստվածային բոլորից ս. Էջմիածնից, Ամենայն Հայոց Հայրապետության գահից ս. Լուսավորչի անմար կանթեղից:

Ողջո՜ւյն և օրհնությո՜ւն Արարատյան թեմի փոխանորդ տ. Վահան եպիսկոպոսին:

Ողջո՜ւյն և օրհնությո՜ւն հոգևորական դասուն՝ այս սուրբ տաճարի պահապաններին, թեմական և եկեղեցական վարչության անդամներին, պաշտոնեից, որոնք իրենց նվիրյալ աշխատանքով շեն ու պայծառ են պահում մեր եկեղեցիները Արարատյան թեմում, ողջո՜ւյն և օրհնությո՜ւն երգեցիկ խմբին, որ իր քաղցր ձայնով առավել է քաղցրացնում մեր սրբազան արարողությունները ու մեղեդիները:

Ողջո՜ւյն և օրհնությո՜ւն բոլորին:

Մի շաբաթ է անցել սուրբ Զատկից, բայց մենք քառասուն օրեր շարունակ ս. Հարության տոնի շնորհների ներքո ենք գտնվում: Այդ մեր ուրախությունն է: Մենք ամեն օր հարության շնորհն ու ապրումը ունենք մեր սրտերում և ոչ թե միայն զատկական օրերին: Արդարև, մի օր միայն նշում ենք հա-

ռության տոնը, բայց հավատում ենք, որ Փրկչի ճշմարիտ հարության շնորհները տարածվում են ամբողջ տարվա օրերի վրա: Զատիկը մեր հոգևոր կյանքի բուրմունքն է, որի կատարներից լույս է ճառագայթում տարվա բոլոր օրերի վրա:

Երբ կա մարդեղություն, փրկագործություն, հարություն, ուրեմն Քրիստոս որպես հավիտենական կյանք բաշխվում է մեզ միշտ, կենարար ու կենդանարար:

Քրիստոս տառապեց, չարչարվեց և խաչի վրա մահը ճաշակեց՝ մեզ և համայն մարդկության համար: Մենք խորունկ ապրումը ունենք այն բանի, որ Աստծու Որդին, մարդու Որդին Իր կյանքը զոհեց, որպեսզի մարդիկ հոգով բարձրանան նյութի կապանքներից և իրենց սրտում վառ պահեն բարոյական, իմացական, ոգեկան ճշմարտությունները ու սկզբունքները, որ մարդիկ սիրեն միմյանց անշահախնդիր սիրով ու խաղաղ ապրեն հավիտենական այդ ճշմարտությունների լույսին մեջ, վասնզի նրանց մեջ է խտանում քրիստոնեական սկզբունքների արդարությունն ու հաղթանակը:

Մենք որպես Պետը Հայաստանյայց առաքելական եկեղեցու, ահա տասներկու տարի, Ս. Հարության շնորհների ներքո, կատարում ենք Մեր պարտականությունները մեր եկեղեցու և մեր ժողովրդի հանդեպ: Մեր կյանքի նպատակն է զորացնել, շենացնել է՛լ ավելի Ս. Էջմիածինը, հոգևոր, եկեղեցական կյանքը մեր հայրենիքի մեջ, առավել կենդանություն տալ մեր սրբավայրերին, մեկ և անբաժան պահել ու պահպանել հայ եկեղեցին, որ ի սփյուռս աշխարհի, և նաև աղոթել, աշխատել հանուն խաղաղության ամբողջ աշխարհում:

Ս. Սարգիս եկեղեցու տված Մեր հովվապետական այցելության առիթով նաև ողջո՜ւյն և օրհնությո՜ւն քաղաքամայր մեր Երևանին, որը պատկերն է մեր ժողովրդի վերածննդյան:

Ողջո՜ւյն ու օրհնությո՜ւն մեր հայրենի բարեխնամ կառավարության, մեր մտավորականության, մեր ճարտարապետներին, բանվորներին, որոնք աճեցնում, ծաղկեցնում ու գեղեցկացնում են մեր մայրաքաղաքը, որը դարձել է աշխարհի գեղեցիկ քաղաքներից մեկը:

Ա՛յդ է նաև ապրումը բովանդակ հայ ժողովրդին:

Թո՛ղ խաղաղություն լինի ողջ աշխարհի վրա:

Թո՛ղ խաղաղություն լինի բոլոր հայ երդիկների տակ:

Որպես եկեղեցի և ժողովուրդ՝ կատարենք ինչ բարի է, գեղեցիկ, արդար և օգտակար, որպես Լույսի որդիներ, Աստծու որդիներ՝ արժանի լինելու համար այս սուրբ առավոտյան, երկնքի կատարներից իջնող հոգևոր իմացական շնորհներին: Ամեն»:

# ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ Գ. ՀԱՍՐԱԹՅԱՆԻՆ

*Ապրիլի 2-ին՝ կիրակի օրը, ժամը 2-ին,* Վեհափառ Հայրապետը *պաշտոնական այցելություն տվեց Երևանում՝ քաղաքային խորհրդի նախագահ, պ. Գ.* Հասրաթյանին *և* խորհրդի անդամներին:

*Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին տ. Հայկազուն և տ. Վահան սրբազանները, տ. Կյուրեղ և տ. Ներսես վարդապետները, «Էջմիածին» ամսագրի խմբագիրը, Մայր Աթոռի դիվանապետը և Արարատյան թեմի Թեմական խորհրդի անդամները:*

*Ընդունելությանը ներկա էին նաև Երևանի քաղաքային խորհրդի նախագահի տեղակալներ Ն. Միրզոյանը, Հ. Ավետիսյանը, քաղաքային խորհրդի քարտուղար Հ. Բուդաղյանը, պլանային հանձնաժողովի նախագահ Գ. Փանոսյանը:*

*Որպես հյուր՝ ընդունելությանը ներկա էին նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ* Կ. Դալլաքյանը *և տեղակալ* Ս. Հովհաննիսյանը:

*Վեհափառ Հայրապետը առաջինը ողջունելով պ. քաղաքագլխին, ասաց.*

«Մեծահարգ պարոն քաղաքագլուխ, մեծ ուրախություն է Մեզ համար սույն հարկի տակ երկրորդ անգամ ողջունել Ձեզ և Ձեր գործակիցներին:

Երկու-երեք տարում, երբ մի անգամ պաշտոնական այցով գալիս ենք ս. Սարգիս եկեղեցի, ցանկանում ենք Մեր ողջույնն ու օրհնությունը բերել նաև Ձեզ: Մենք էլ ուրախանում ենք մեր մայրաքաղաքով, որի գլուխը դուք եք: Մեր ողջույնի խոսքը բնական է, որ նախ Ձեզ ուղղվի և Ձեր միջոցով քաղաքային խորհրդի պատվարժան անդամներին, Ձեր գործակիցներին, ճարտարապետներին, շինարարներին, բանվորներին, որոնց միացյալ հարատև ու կազմակերպված աշխատանքի շնորհիվ օր առավոտ գեղեցկանում է Երևանը, Ձեր շինարար գործունեությամբ, գիտությամբ և ճաշակով: Ազգային սնապարծություն չէ, երբ հաստատենք, մեր Երևանը իրոք որ աշխարհի սիրուն քաղաքներից մեկն է:

Շնորհավորում ենք Ձեզ՝ ձեռք բերված կառուցողական փայլուն արդյունքների համար, հայտնում՝ Մեր շնորհակալությունն ու երախտագիտությունը և ցանկանում ենք Ձեզ և Ձեր գործակիցներին նորանոր նվաճումներ, Ձեր հայրենաշեն աշխատանքի ճանապարհին»:

*Մեծահարգ պ. Գ. Հասրաթյանը Հայոց Հայրապետին պատասխանելով ասաց.*

«Ես և իմ գործակիցները շատ ուրախ ենք կրկին անգամ Ձեզ ողջունելու համար այստեղ և շնորհակալություն հայտնելու Ձեր այցելության համար: Մենք էլ երախտապարտ ենք Ձեզ, Վեհափառ, հայկական հուշարձանների պահպանման բնագավառում Ձեր կատարած կարևոր աշխատանքների համար, օրինակ, Էջմիածնում, ուր այցելում են նաև մեր հյուրերն ու բարեկամները՝ խորը տպավորություն ստանալով: Այդ մեզ ուրախացնում է:

Մեր ժողովուրդը հետաքրքիր ժողովուրդ է: Կառուցում է միշտ, երբ խաղաղ է, չի կարողանում հանգիստ նստել: Մենք ողջունում ենք Ձեզ նաև որպես խաղաղության գործի պաշտպանի, որի մասին մենք քաջ տեղյակ

ենք։ Խաղաղության համար մղված պայքարում Ձեր աշխատանքը արժանի է մեր գնահատանքին։ Ցանկանում ենք Ձեզ հաջողություն Ձեր բազմակողմանի գործունեության մեջ»։

*Այնուհետև տեղի է ունենում ջերմ զրույց, որի ընթացքում պ. Գ. Հասրաթյանը խոսում է քաղաքապետության առաջ դրված շինարարական, բարեկարգման այն ծրագրերի և աշխատանքների մասին, որոնք պետք է կատարվեն այս և հաջորդ տարիներին։*

*Ըստ պ. Գ. Հասրաթյանի վկայության, մայրաքաղաքում շինարարական ծավալուն աշխատանքներ են կատարվում Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակի առիթով։*

*Այս տարի կավարտվի նաև Ապիրլյան եղեռնի հուշարձանի կառուցումը, կանաչապատումը, որը մայրաքաղաքի մոնումենտալ կառույցների մեջ իր յուրահատուկ տեղն է գրավելու։*

*Շուտով կսկսվի շինարարությունը Կոմիտասի անվան դասական երաժշտանոց-տան, ճարտարապետ Ս. Քյուրքչյանի նախագծով, ուր հայ դասական ճարտարապետության մոտիվները և ժամանակակից ճարտարապետական ոճը միմյանց կլրացնեն, չափազանց հետաքրքիր, ճարտարապետական նոր մտքի հղացման ու թռիչքի մեջ։*

*1968 թվականի հոկտեմբերի առաջին կեսերին, կնշվի Երևանի հիմնադրման 2750-ամյակը։*

*Վեհափառ Հայրապետը զրույցի վերջում իր խորունկ շնորհակալությունն է հայտնում և հրաժեշտ է առնում լավագույն տպավորություններով։*

*Այս առթիվ պ. քաղաքագլուխը Վեհափառ Հայրապետին նվիրում է Երևանում նոր կառուցվելիք Կոմիտասի անվան դասական երաժշտանոց-տան մակետը։*

*Ժամը 4-ին, Երևանի հայրապետական վիլլայում, թեմական խորհուրդը ի պատիվ Վեհափառ Հայրապետի ընդունելություն է կազմակերպում։*

*Որպես հյուր ընդունելությանը ներկա են լինում նաև Երևանի քաղաքագլուխ Գ. Հասրաթյանը և ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը և տեղակալ Ս. Հովհաննիսյանը։*

*Ընդունելությունը անցնում է ջերմ, հայկական մթնոլորտում։*

# ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հրավերով Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար, դոկտ. Է. Կ. Բլեյկը պաշտոնական այցելություն տվեց Նորին Սրբության, Մայր Աթոռ ս. Էջմիածնում, մարտի 30-ին:

Բարձրաստիճան հյուրը քրիստոնեական եկեղեցիների մեծ կազմակերպության սիրալիր ողջույնը բերեց Ամենայն Հայոց Հայրապետին և մոտիկից ծանոթացավ Մայր Աթոռիս հաստատություններին, հատկապես հոգևոր ճեմարանին և հայ եկեղեցու կյանքին Հայաստանում: Դոկտ. Բլեյկը այցելեց նաև ս. Հռիփսիմեի տաճարը, Երևանի առաջնորդանիստ ս. Սարգիս եկեղեցին և սուրբ Մեսրոպի անվան Մատենադարանը:

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղարը այս առթիվ անձամբ կրկնեց իր նախօրոք կատարած գրավոր պաշտոնական հրավերը Վեհափառ Հայրապետին ուղղյալ՝ սույն թվականի հուլիսի 10—13-ին այցելելու ԺՆև՝ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնը, իբրև Գերագույն Պետ հայ եկեղեցու:

Վեհափառ Հայրապետը սիրով ընդունեց եղած հրավերը:

Մեծարգո հյուրը ս. Էջմիածնից մեկնեց մարտի 31-ին:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈ

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
31 մարտ 1967 թ.



## ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ, ԴՈԿՏ. Է. Կ. ԲԼԵՅԿԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի *հրավերով մարտի 30-ին՝ հինգշաբթի, կեսօրվա ժամը 13-ին, միօրյա այցով Մայր Աթոռ ժամանեց Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար,* դոկտ. Է. Կ. Բլեյկը, *որը Սովետական Միությունում էր գտնվում որպես հյուրը ռուսաց պատրիարքարանի։*

*Հարգարժան հյուրին ուղեկցում էին Մոսկվայի ռուսաց պատրիարքարանի կողմից* գեր. տ. Վլադիմիր եպիսկոպոսը *և թարգման* Ա. Վ. Չիստյակովը։

*Երևանի օդանավակայանում, հանուն Ամենայն Հայոց Հայրապետի, Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղարին դիմավորում և ողջունում է լուսարարապետ,* գեր. տ. Հայկազուն արք. Աբրահամյանը՝ *ընկերությամբ հոգևոր ճեմարանի տեսուչ* տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանի *և դիվանապետ* պ. Հ. Առաքելյանի։

*Դոկտ. Է. Կ. Բլեյկի Երևան ժամանումը ողջունում է նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ* պ. Կ. Դալլաքյանը։

*Մայր Աթոռ ժամանելուց հետո Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղարը և նրան ուղեկցող անձինք վեհարանում պաշտոնական այցելություն են տալիս Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, որը բարի գալուստ է մաղթում նրանց։*

*Այնուհետև Հայոց Հայրապետի և դոկտ. Է. Կ. Բլեյկի միջև տեղի է ունենում ջերմ զրույց՝ սրտագին մթնոլորտում։*

*Փոքր հանգստից հետո, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղարը և նրան ուղեկցող անձինք այցելում են Մայր տաճար, որի դռան առաջ նրանց պատշաճ կերպով ընդունում է Մայր Աթոռի միաբանությունը, լուսարարապետ-սրբազան հոր գլխավորությամբ։*

*Մայր տաճարում աղոթելուց հետո, հյուրերը ծանոթանում են տաճարի պատմությանը, ճարտարապետական կառուցվածքին, մանրանկարչությանը, վերջին տարիներին կատարված շինարարական-վերանորոգչական աշխատանքներին և ապա այցելում տաճարին առընթեր հայ եկեղեցական արվեստի թանգարանը, ուր հարգարժան հյուրերին բացատրություններ է տալիս թանգարանի վարիչ* տ. Նարեկ վրդ. Շաքարյանը։

*Վեհարանում, նախաճաշից հետո, հյուրերը գեր. տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի, տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանի և Հ. Առաքելյանի առաջնորդությամբ այցելում են Երևան՝ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ապա մայրաքաղաքի տեսարժան վայրեր և հուսկ ուրեմն Երևանի ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցին, ուր նրանց ողջունում և բարի գալուստ է մաղթում փոխանորդ,* գեր. տ. Վահան եպս. Տերյանը։ *Ս. Սարգիս եկեղեցում հյուրերը ներկա են լինում ժամերգության, և ապա վերադառնում Մայր Աթոռ։*

*Երեկոյան ժամը 18-ին Մայր տաճարում Վեհափառ Հայրապետը նախագահում է ժամերգությանը, որին ներկա են լինում նաև Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար, դոկտ. Է. Կ. Բլեյկը, տ. Վլադիմիր եպիսկոպոսը, Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները։*

*Ժամը 19.30-ին հարգարժան հյուրը, շրջապատված սրբազան և հոգեշնորհ հայրերով, ներկա է լինում հոգևոր ճեմարանում իր*

պատվին կազմակերպված ուսանողական հավաքույթին։

Հանդիսությունը սկսվում է «Որբ դարդաբեցին» թարգմանչաց շարականով։ Տեսուչ տ. Ներսես ծ. վարդապետ դոկտ. է. Կ. Բլեյկի ներկայությունը Հոգևոր ճեմարանի հարկի տակ ողջունում է ջերմ, բարիգալստյան ուղերձով՝ խոսելով նաև Հոգևոր ճեմարանի նպատակի, առաքելության, ուսման ծրագրի, ուսանողության թվի մասին. «Սույն Հոգևոր, կրթական հաստատությունը Տիրոջ օգնականությամբ կատարում է իր պարտականությունը՝ սպասավորներ պատրաստելով Տիրոջ այգու համար ոչ միայն Հայ եկեղեցու, այլ նաև քրիստոնեական ընդհանուր եկեղեցու սրբազան գործին համար։ Որով ճեմարանի կատարած համեստ գործը առնչվում է այս իմաստով մեր ժամանակների հատկանշող էկումենիկ շարժման հետ»։

Տեսուչ վարդապետը իր խոսքն ավարտում է եկեղեցիների համաշխարհային խորհրդի ապագա գործունեության և ծրագրերի հաջողության բարի մաղթանքներով։

Ճեմարանի երգչախումբը կատարում է Վարդանանց մանկունքը՝ «Արիացեալք», «Նմանեալք Մովսիսի» թարգմանչաց շարականը և ճեմարանի քայլերգը։

Մի խումբ ուսանողներ հանդես են գալիս հայերեն և անգլերեն արտասանություններով։

Հանդիպման վերջում Հոգևոր ճեմարանի ուսանողության ուղղյալ խրատականով հանդես է գալիս դոկտ. է. Կ. Բլեյկը.

«Ջերմ շնորհակալություն՝ գործադրված հաջող ծրագրի կատարման համար։ Չափազանց հետաքրքիր էր ինձ համար լսել ոչ միայն իմ հասկացածները, այլ նաև չհասկացածները։

Ձեզ բերում եմ 80 տարբեր երկրների՝ եկեղեցիների համաշխարհային խորհրդի անդամ 200 եկեղեցիների, ինչպես նաև ավելի քան 500 աստվածաբանական ճեմարանների ուսանողության եղբայրական ողջույնները, ուսանողներ, որոնք Ձեզ նման աստվածաբանություն են սովորում՝ դառնալու համար ապագա քարոզիչներ Քրիստոսի եկեղեցուն և էկումենիկ շարժման։

Երեկ Մոսկվայում ես այցելեցի ռուսական Զագորսկի վանքի հոգևոր ճեմարանը։ Մի ամիս հետո լինելու եմ իմ հայրենիքում, որտեղ դասախոսություն եմ կարդալու մեր արդի ժամանակների բնորոշ էկումենիկ շարժման նշանակության, Քրիստոսի եկեղեցու միության և առաքելության մասին։

Էկումենիկ շարժումը, որն աշխարհով մեկ տարածվում է, ամենից առաջ հավատքի շարժում է, Քրիստոսի եկեղեցու միության համար կատարվող շարժում է։ Այդ աստվածահաճո շարժումը հեշտ ու խաղաղ չի ընթանում։ Նրա ճանապարհի վրա կան մեծ դժվարություններ, ցեղային տարբերություններ, արևելքի և արևմուտքի հատուկ հակասություններ, բայց մենք հավատում ենք, որ այդ դժվարությունները կհարթվեն հետզհետե, և եկեղեցիները կմիանան մեկ հավատքի շուրջ՝ Քրիստոսով, որ է միակ գլուխ հավատացյալների և իր եկեղեցու։

Դուք էլ, սիրելի ուսանողներ, այստեղ պատրաստվում եք ոչ միայն Հայ եկեղեցու, այլ նաև բոլոր եկեղեցիների ապագա ծառայության համար, Աստծու սուրբ գործի առաքելության համար։

Մենք հավատում ենք Ձեզ։

Ես որպես ընդհանուր քարտուղարը եկեղեցիների համաշխարհային խորհրդի, շատ ուրախ կլինեմ, եթե Ձեր ուսանողներից շատերը գան մեզ սովորելու, դառնալու համար ոչ միայն սպասավորները եկեղեցու, այլև հավատավոր առաքյալները ու վկաները էկումենիկ շարժման։

Թող Տերը օրհնի մեր ու Ձեր սուրբ գործը, ամէն»։

Հանդիսությունն ավարտվում է խմբովին երգված Տերունական աղոթքով։

Երեկոյան ժամը 20.30-ին, վեհարանում, ի պատիվ հարգարժան հյուրի, կազմակերպվում է ընդունելություն, որին մասնակցում են տ. Հայկազուն, տ. Հուսիկ, տ. Վահան, տ. Վլադիմիր եպիսկոպոսները, ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող տ. Կյուրեղ վրդ. Գաբիկյանը, տ. Ներսես ծ. վարդապետը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ Միք. Մազմանյանը, Գր. Թեքմեզյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը և դիվանապետ Հ. Առաքելյանը։

Ընդունելության ներկա էր նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը։

Ընդունելության ընթացքում, ջերմ ու սրտագին մթնոլորտում, Վեհափառ Հայրապետը բաժակ բարձրացնելով թանկագին հյուրի կենաց, ողջունում է եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղարի պաշտոնական այցելությունը Մայր Աթոռ և ասում. «Հայ եկեղեցին անդամ է 1962 թվականից եկեղեցիների համաշխարհային խորհրդին: Մենք, որպես Պետր հայ եկեղեցու, շատ գոհ ենք մեր անդամակցության համար և աշխատում ենք ամրապնդել մեր եկեղեցու կապերը խորհրդի անդամ քույր եկեղեցիների հետ: Ընդհանուր քարտուղարի պաշտոնական այս այցելությունը Մայր Աթոռ ս. Էջմիածին էլ ավելի է ամրապնդում մեր կապը խորհրդի հետ: Մենք կձգտենք

նման այցելությունների նաև ապագայում: Այդ իմաստով մենք սիրով պիտի այցելենք Ժնև, առաջիկա նույնիսկ՝ պատասխանելով Ձեր հրավերին, որպեսզի միասին լուծենք անձամբ Ձեզ հետ մեզ հետաքրքրող մի շարք հարցեր, ինչպես քիչ հետո այստեղ՝ Էջմիածնում, այնպես էլ հետագայում Ժնևում՝ Մեր այցելության ժամանակ:

Մենք ուրախությամբ հաստատում ենք, որ այսօր քրիստոնեական եկեղեցիները մերձենում են միմյանց, և էկումենիկ շարժման մեջ իրականանում են եկեղեցու խաղաղության, համերաշխության, համագործակցության պատգամները, որոնց ծարավի է աշխարհը: Հայ ժողովուրդն էլ, որպես հնագույն քրիստոնյա ժողովուրդ, նույն ձևով է զգում և մտածում քրիստոնյա եղբայր ժողովուրդների հետ: Միաժամանակ Մենք համոզված ենք, որ էկումենիկ շարժումը հզոր ազդակ է այսօր աշխարհում խաղաղություն և արդարություն հաստատելու ճանապարհի վրա:

Այս զգացմունքներով Մենք ողջունում ենք ներկայությունը մեր ընդհանուր քարտուղարին՝ մաղթելով նրան քաջառողջություն, որպեսզի իր հուժկու բազուկներով ղեկավարի էկումենիկ շարժման նավը: Ե՛վ Մենք, և՛ հայ եկեղեցին Հայաստանում թե սփյուռքում կհետևենք նրան:

Հաջողություն Ձեզ: Թող Աստված օրհնի մեր բոլորի բարի գործերը»:

*Ընդունելության ժամանակ հարգարժան հյուրին ողջունում է նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը.*

*«Սիրով ողջունում եմ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար, դոկտ. Է. Կ. Բլեյկի այցելությունը հայկական հինավուրց այս հողի վրա։ Շեշտում եմ «հինավուրց» բառը, որովհետև այս բիբլիական հողը իր պատմության հազարամյակների ընթացքում տեսել է բազում արհավիրքներ։*

*Մեր ժողովուրդը իր պատմության վերջին հիսնամյակին միայն կարողացել է նվաճել իր պետականությունն ու խաղաղությունը, ու ստեղծված նոր պայմաններում ցույց տվել իր հանճարի փայլատակման պտուղները, ինչպես ամեն մի ժողովուրդ, երբ խաղաղություն է ունենում:*

*Այսօր աշխարհի գլխին մի մեծ վտանգ է կախված։ Մեր սերնդի և ներկա մարդկության առաջ դրվել է «լինել չլինելու» հարցը։ Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը իր առաջ դրված կարևոր հարցերից մեկն է համարում նաև խաղաղության ու արդարության պաշտպանության հարցը։ Մենք սովետական քաղաքացիներս պատրաստ ենք պայքարելու միշտ հանուն խաղաղության և բռնելու այն ձեռքերը, որոնք նույնպես պայքարում են հանուն խաղաղության։ Մենք ողջունում ենք Եկեղեցիների համաշխարհային խորհրդի նման գործունեությունը և Ձեզ, դոկտ. Է. Կ. Բլեյկ, որպես խորհրդի ընդհանուր քարտուղարի, ցանկանում ենք ամենայն հաջողություն Ձեր կարևոր, խաղաղության պաշտպանության, մարդասիրական աշխատանքներում»։*

*Այնուհետև բոլոր ներկաները Վեհափառ Հայրապետի կենաց բաժակ են բարձրացնում տ. Հայկազուն արքեպիսկոպոսի առաջարկով, որը Ն. Ս. Օծության կյանք ու գործունեությունը բնութագրում է որպես ավետարանական սիրո և եղբայրության վրա հիմնված քրիստոնեական եկեղեցիների համագործակցության և խաղաղության ջերմ պաշտպանի։*

*Ընդունելության ժամանակ հարգարժան հյուրին ողջունում են նաև տ. Կյուրեղ վրդ. Գաբիկյանը՝ հանուն Երուսաղեմի Հայոց պատրիարքության և պատրիարք տ. Եղիշե արքեպիսկոպոսի, և տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը՝ հանուն Մայր Աթոռի միաբանության և Հոգևոր ճեմարանի։*

*Վեհափառ Հայրապետը բաժակ է բարձրացնում Մոսկվայի և համայն Ռուսաստանի պատրիարք, Ն. Սրբություն Ալեքսիի և ռուս պրավոսլավ եկեղեցու կենաց, շեշտելով, որ* «Մայր Աթոռում հաճախ նման ուրախ առիթներով մեզ հետ են լինում ռուս պրավոսլավ մեծ եկեղեցու մեր եղբայրները: Այսօր էլ պարագան նույնն է: Մեր սիրեցյալ տ. Վլադիմիր եպիսկոպոսին խնդրում ենք, Մոսկվա իր վերադարձին, Մեր եղբայրական ջերմ զգացմունքների թարգմանը լինել սրբազան պատրիարքի և Նիկոդիմ միտրոպոլիտի մոտ: Այս առիթով մեծ ուրախություն է Մեզ համար բաժակ բարձրացնել Մեր մեծ եղբոր՝ Ն. Սրբություն Ալեքսի պատրիարքի կենաց: Մենք էլ մեր ռուս եղբայրների նման գուրգուրում ենք նրա կյանքի վրա և աղոթում, որ Ն. Սրբությունը երկար ապրի»:

*Տ. Վլադիմիր եպիսկոպոսն իր պատասխան խոսքում շնորհակալություն և երախտագիտություն է հայտնում Հայոց Հայրապետին՝ Ն. Սրբություն Ալեքսի պատրիարքի մասին հայտնած եղբայրական ջերմ խոսքերի և բարեմաղթությունների համար։*

*Ընդունելության վերջում խոսք է առնում նաև հարգարժան հյուրը և ասում.*

*«Մեծ ուրախություն է ինձ համար այսօր այստեղ՝ ս. Էջմիածնում լինելը։ Ես չէի սպասում այսքան շուտ հանդիպել Հայոց Հայրապետին, և չէի կարծում, որ այս անգամ ժամանակ կունենամ այցելելու ս. Էջմիածին։*



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ, ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ, ԴՈԿՏ. Է. Կ. ԲԼԵՅԿԸ՝
ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՎ

Ես շատ գոհ եմ, որ ծանոթացա հայ եկեղեցու կենտրոնին և Ամենայն Հայոց կաթողիկոսին, որին շուտով պատիվը պիտի ունենանք ընդունելու մեզ մոտ՝ Ժնևում։ Պետք է ուրախությամբ նշեմ, որ արևելքի եկեղեցիները ավելի ակտիվ մասնակցություն են բերում էկումենիկ շարժման, մանավանդ վերջին տարիներին։ Եկեղեցիների Համաշխարհային խորհուրդը արևմտյան տիպի կազմակերպություն էր։ Մինչ մենք աշխատում ենք փոխել նրա ձևը, բնույթը, որպեսզի այդ շարժումը լինի ճշմարտապես էկումենիկ։ Այսօր խորհրդի անդամ են բազում արևելյան եկեղեցիներ, որոնց ներկայացուցիչները միասնաբար աշխատում և գործում են արևմտյան եկեղեցիների ներկայացուցիչների հետ։ Այս համագործակցությունը հուսալի երաշխիք է հանդիսանում էկումենիկ շարժման ապագա գործունեության ընդարձակման և արդյունավորության համար։

էկումենիկ շարժման համար կարևոր իրադարձություն կհանդիսանա 1968 թվականի Եկեղեցիների համաշխարհային խորհրդի չորրորդ համագումարը, որը հրավիրվելու է Ուպսալայում։ Արևելյան եկեղեցիները առաջին անգամ պիտի մասնակցեն այդ համագումարին, որպես անդամ գործող եկեղեցիներ։ Համագումարը պիտի ընթանա ավետարանչության (էվանգելիզմ) և առաքելության (միսիոնարություն) սկզբունքներով։

Համագումարի օրակարգում լինելու են վեց հարցեր, որոնք քննվելու են վեց առանձին սեկցիաներում, և որոնց ընդունած բանաձևերն ու որոշումները բերվելու են համագումարին։

Թող Տերը օրհնի մեր գործերը և առաջնորդի մեզ բոլորիս իր կամքի համաձայն, ամեն։

Ընդունելության ավարտից հետո, գիշերվա ժամը 23-ին, վեհարանում, Վեհափառ Հայրապետի և Եկեղեցիների համաշխարհային ընդհանուր քարտուղարի միջև տեղի է ունենում պաշտոնական տեսակցություն, հայ եկեղեցու և Եկեղեցիների համաշխարհային խորհրդի փոխհարաբերությունների և եղբայրական կապերի ամրապնդման նվիրված։

Մարտի 31-ին՝ ուրբաթ օրը, առավոտյան ժամը 8-ին, դոկտ. Է. Կ. Բլեյկը հրաժեշտ է առնում Հայոց Հայրապետից, Մայր Աթոռի միաբանությունից՝ իր հետ տանելով ս. Էջմիածնի և Հայոց Հայրապետի օրհնությունները Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ապագա գործունեության համար։

Մայր տաճարում աղոթելուց հետո հարգարժան հյուրը և նրան ուղեկցող անձինք մեկնում են օդանավակայան։ Հանուն Վեհափառ Հայրապետի հյուրերին ճանապարհում են տ. Հայկազուն արքեպիսկոպոսը, տ. Ներսես ծ. վարդապետը և Հայկ Առաքելյանը։

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղարին ճանապարհում է նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը։

Հյուրերը հրաժեշտ են առնում բոլոր ներկաներից։ Ժամը 9-ին ինքնաթիռը օդ է բարձրանում՝ տանելով հյուրերին Մոսկվա։



# ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆԻ ՌԱԴԻՈՅԻ ԹՂԹԱԿՑԻՆ

(7 ապրիլի 1967 թ.)

*ՀԱՐՑ.— Ինչպես արդեն հայտնի է, Երուսաղեմի հայերեն ձեռագրերը վերադարձվել են Երուսաղեմ՝ Հայոց պատրիարքարան։ Այս առթիվ, Վեհափառ, ի՞նչ կկամենայիք հաղորդել մեր ունկնդիրներին։*

ՊԱՏԱՍԽԱՆ.— Մենք երջանիկ ենք, որ Երուսաղեմի մեր պատրիարքության գանձատնից անհետացած տասներեք թանկագին ձեռագրերը, միացյալ ճիգերով փրկվեցին վաճառքից և ձեռամբ տ. Շահե եպիսկոպոսի վերադարձան իրենց տեղը, ուր դարեր շարունակ ապահով պահպանվել էին նրանք՝ մեծ խնամքով ու գուրգուրանքով, իբրև հայ եկեղեցու և ազգի սեփականությունը եղող սրբություններ և հայ արվեստի գլուխ-գործոցներ։

Այսու, մեկ անգամ ևս Մեր խնդակցությունն ենք ներկայացնում Երուսաղեմի հայոց պատրիարքին և միաբանության և, հանուն մեր եկեղեցու, Մեր ջերմագին շնորհակալությունն ենք հայտնում բոլոր այն սրտացավ անձանց՝ եկեղեցականներ և աշխարհականներ, որոնք բանիվ և գործով ու կորովի կեցվածքով մեծապես նպաստեցին նիշյալ ձեռագրերը օտարացումից փրկելու գործին։

Մենք հույս և վստահություն ենք հայտնում, թե Երուսաղեմի պատրիարքությունը ի գործ կդնի բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի հետ այսու այլևս երբեք հնարավոր չդառնան նման ցավալի երևույթներ։

*ՀԱՐՑ.— Վեհափառ, թույլ տվեք իմանալ Ձեր կարծիքը՝ ձեռագրերի անհետացման պատասխանատուների մասին։*

ՊԱՏԱՍԽԱՆ.— Թե որո՞նք պետք է պատասխանատու նկատվեն ձեռագրերի՝ գանձատնից անհետացման համար, անշուշտ, այդ տակավին հայտնի չէ, և Մենք կարծում ենք, թե այդ հնարավոր կդառնա պարզել ու ճշտել ապագային, երբ խաղաղ և առարկայական պայմանների մեջ կարելի կլինի քննել բոլոր տվյալները, եկեղեցական իրավասու իշխանությունների կողմից։

Այսու, Մենք պիտի կամենայինք ջերմապես կոչ անել մեր հանրային կարծիքին և մամուլին, որ այդ իմաստով ամեն կասկածանք ու վեճ վերջ գտնեն, ինչ որ ծանրորեն վնասաբեր ենք նկատում մեր եկեղեցու և ժողովրդի անվան ու նրանց բարի համբավին համար։

Բոլորս պետք է մեր խնդությունը հայտնենք, որ կորսված գանձը գտնվեց, ի մխիթարություն համայն մեր ժողովրդի, որ ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի։



# ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մարտի 15-ին՝ չորեքշաբթի.— *Հոգևոր ճեմարանում դասախոսություն կարդաց աշխարհագրագետ Կամսար Ավետիսյանը՝ «Աշխարհի քարտեզի առջև» թեմայով։*

*Դասախոսության վերջում տեսուչ Հայր սուրբը շնորհակալություն հայտնեց հարգելի դասախոսին՝ շահեկան բանախոսության համար։*

* * *

Մարտի 19-ին՝ Ծաղկազարդի կիրակի.— *Մայր տաճարում պատարագեց հոգ. տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը, քարոզեց «Ով է սա որ երևեալ է իբրև զառաւօտ, գեղեցիկ իբրև զլուսին, մաքուր իբրև զարեգակն» բնաբանով։*

*Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։*

* * *

Մարտի 21-ին՝ երեքշաբթի.— *Ժամը 13-ին հոգևոր ճեմարանում դասախոսություն կարդաց ամերիկահայ երաժշտագետ Միհրան Թումաճանը՝ «Մեր պատարագի կատարումը» թեմայի շուրջ։*

*Դասախոսության ավարտին տեսուչ Հայր սուրբը շնորհակալություն հայտնեց հարգելի դասախոսին՝ շահեկան բանախոսության համար։*

* * *

Մարտի 23-ին՝ Ավագ հինգշաբթի.— *Յիշատակ ընթրեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։*

*Մայր տաճարում «միջօրէի» պատարագը մատուցեց տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը։*

*Ս. պատարագի ժամին, «Հայր մեր»-ից առաջ, ընթերցվեց սուրբ Բարսեղ Հայրապետի մեծ ճառը։*

*Երեկոյան ժամը 5-ին Մայր տաճարում ավանդական հանդիսությամբ կատարվեց «ոտնլուայ»-ի կարգը՝ լուսարարապետ տ. Հայկազուն արքեպիսկոպոսի հանդիսադրությամբ։*

*Իսկ ժամը 8-ին Մայր տաճարում պաշտվեց «Ի գիշերին հակումն»՝ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ։*

*Խավարման գիշերի քարոզը խոսեց հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը՝ «Սիրտ իմ, սասանի, սարսափ զիս ունի, վասն Յուդայի» բնաբանով։*

* * *

Մարտի 24-ին՝ Ավագ ուրբաթ.— *Յիշատակ չարչարանաց և խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։*

*Առավոտյան Մայր տաճարում կատարվեց «կարգ խաչելութեան»՝ մասնակցությամբ Մայր Աթոռի միաբանության։*

*Երեկոյան ժամը 5-ին Մայր տաճարում, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ կատարվեց «կարգ թաղման»՝ Մայր տաճարի շուրջ, եկեղեցական հանդիսավոր թափորով։*

* * *

Մարտի 25-ին՝ Ավագ շաբաթ.— *Ճրագալույց Զատկի։*

*Առավոտյան ժամերգությունը կատարվեց Մայր տաճարում։*

*Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետին այցելեց մեծանուն երգահան Ա. Խաչատրյանը։*

*Երեկոյան ժամերգության ժամանակ Վեհափառ Հայրապետը ընթերցեց արարչագործության պատմությունը՝ «Ծննդոց գրքից»։ Ճեմարանի ուսանողները կարդացին «Դանիելի գիրքը»։ Ավագ Սեղանի վրա ճրագալույցի պատարագը մատուցեց տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը։*

*Ծրագրավորյալ ս. պատարագի երգեցողությանը իր մասնակցությունն էր բերել շնորհալի երգչուհի Գոհար Գասպարյանը՝ Մայր տաճարի երգեցիկ խմբի հետ՝ ղեկավարությամբ խմբավար Խորեն Մեխանաջյանի։*

* * *

Մարտի 27-ին՝ Երկուշաբթի.— *Ցիշատակ մեռելոց։ Մայր տաճարում պատարագեց հոգ. տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը։*

*Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգիստ «Համօրէն ննջեցեալս ազգիս հայոց»։*

*Ս. պատարագին Հոգևոր ճեմարանի ուսանողությունը հաղորդվեց ս. Զատկի տոնի առիթով։*

* * *

Ապրիլի 2-ին՝ Խրկնազատիկ.— *Նոր կիրակէ։ Մայր տաճարում պատարագեց արժ. տ. Հակոբ քհն. Հակոբյանը։*

* * *

Ապրիլի 6-ին՝ հինգշաբթի.— *ժամը 3-ին Հոգևոր ճեմարանում դասախոսություն կարդաց պրոֆ. Բագալյանը՝ «Տոմարագիտություն» ընդհանուր թեմայի շուրջ։*

*Հոգևոր ճեմարանի տեսուչ Հայր սուրբը շնորհակալություն հայտնեց դասախոսին՝ հանուն բոլոր ներկաների, շահեկան դասախոսության համար։*

* * *

Ապրիլի 8-ին՝ շաբաթ.— *Աւետումն ս. Աստուածածնի։ Մայր տաճարում պատարագեց արժ. տ. Նշան քհն. Բեյլերյանը։*

* * *

Ապրիլի 9-ին՝ Աշխարհամատյան (Կանաչ կիրակի).— *Մայր տաճարում պատարագեց գեր. տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը և քարոզեց հոգ. տ. Կյուրեղ վրդ. Գաբիկյանը «Թէ մոռացայց Երուսաղէմ, մոռացի զիս, աջ իմ» բնաբանով։*

*Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։*

*Պատարագի երգեցողության նորից իր մասնակցությունն էր բերել տաղանդավոր երգչուհի Գոհար Գասպարյանը։*

* * *

Ապրիլի 10-ին՝ Երկուշաբթի.— *Այսօր առավոտյան Երուսաղեմ՝ իր պաշտոնատեղին մեկնեց հոգ. տ. Կյուրեղ ծ. վրդ. Գաբիկյանը։*

*Երեկոյան ժամը 8-ին վեհարանում պրոֆ. Ռ. Աթայանը դասախոսություն կարդաց «Առ գետս Բաբելացւոց» սաղմոսի վրա հորինված (XIX) երաժշտական գործերի և մասնավորապես Կոմիտաս վարդապետի նորագյուտ գործի մասին։*

*Դասախոսության ավարտին հարգելի պրոֆեսորի ղեկավարությամբ մի խումբ երգիչներ կատարեցին վերոհիշյալ սաղմոսի բնագրի վրա հորինված Մակար Եկմալյանի և Կոմիտաս վարդապետի գործերը։*

*Վեհափառ Հայրապետը, որ ներկա էր դասախոսության և համերգին, վերջում շնորհակալության և շնորհավորության ջերմ խոսք ասաց երաժշտագետ պրոֆ. Ռ. Աթայանին և համերգին իրենց մասնակցությունը բերած երաժիշտներին։*

* * *

Ապրիլի 12-ին՝ չորեքշաբթի.— *Երեկոյան ժամերգությանց հետ, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, լուսարարապետ, գեր. տ. Հայկազուն արքեպիսկոպոսը Մայր Աթոռի միաբան, հոգ. տ. Պողոս աբեղա Տէր-Նշանյանին շնորհեց մասնավոր վարդապետական չորս աստիճան՝ խարտավիլակությամբ գեր. տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի։*

* * *

Ապրիլի 13-ին՝ հինգշաբթի.— *ժամը 13-ին Հոգևոր ճեմարանում իր երկրորդ դասախոսությունը կարդաց պրոֆ. Հայկ Բագալյանը՝ «Հայկական տոմարի» թեմայի շուրջ։*

* * *

Ապրիլի 16-ին՝ Կարմիր կիրակի.— *Մայր տաճարում պատարագեց արժ. տ. Նշան քահանա Բեյլերյանը։*

## ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 1967 ԹՎԱԿԱՆԻՆ

*Սրտի մեծ գոհունակությամբ ցանկանում ենք այստեղ արձանագրել ի մխիթարություն և հուրախություն մեր ժողովրդին, որ այս տարի էլ մեր շինարար Հայրապետի ծրագրով և նախաձեռնությամբ շարունակվելու են* Մայր Աթոռի շրջապատում և նրա սահման-ներից դուրս *շինարարական-վերանորոգչական աշխատանքները՝ նոր ծավալով և թափով։*

*Վերջերս Վեհափառ Հայրապետի նախագահությամբ ներքո գումարվեց Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովի հերթական նիստը, որտեղ քննարկվեց և հաստատվեց 1967 թվականի շինարարական և վերանորոգչական աշխատանքների ծրագիրը։*

*Սույն ընթացիկ տարում Մայր Աթոռի շրջապատում նախատեսվել են հետևյալ շինարարական աշխատանքները.*

*1. Հոգևոր ճեմարանի նախորդ տարում թերի մնացած շինարարական աշխատանքների ավարտում.*

*2. միաբանական շենքի (Երեմյան խուցերի) տանիքի ամբողջական նոր թիթեղապատում և ներքին վերանորոգություններ.*

*3. հին վեհարանի շենքի հիմնական վերանորոգում և արտաքին պատերի քարապատում.*

*4. վանքի հարավային հին հողաթումբ-պարսպի մնացորդների քանդում և նոր պարսպի կառուցում.*

*5. աղբյուր-հուշարձանի կառուցում՝ դեպի Մայր տաճար տանող գլխավոր ճանապարհի վրա՝ ճարտարապետ Ռ. Իսրայելյանի նախագծով, նվիրատվությամբ ամերիկահայ բարերար Ստեփան Տեր-Գրիգորյանի՝ ի հիշատակ 1915 թվականին Արևմտյան Հայաստանում Կաթնաղբյուր ավերված գյուղի.*

*6. պատմական արժեք ներկայացնող խաչքարերի և այլ հուշարձանների տեղադրում մայրավանքի շրջապատում։*

*Մի տարի է, ինչ վանքում, Վեհափառ Հայրապետի նախաձեռնությամբ, բացվել է հայկական հին սրբապատկերների վերանորոգման արհեստանոցը, ուր խղճմտորեն աշխատում են Լենինգրադից հրավիրված երկու մասնագետ-արվեստագետներ՝ Սերգեյ Իգնատևիչ Սոլոգովնիկովը ու պ. Վասիլի Դիմիտրիևիչ Ֆրոլովը, որոնք ցարդ նորոգել ու վերակենդանացրել են շուրջ 25 սրբապատկերներ։ Հայկական հին սրբապատկերների վերականգնման աշխատանքների հսկողությունը սիրով ստանձնել է հայտնի նկարիչ Գր. Խանջյանը։ Մի այլ առիթով հանգամանորեն կխոսվի նորաբաց նկարչական արհեստանոցի կատարած շնորհակալ աշխատանքների մասին։*

Մայր Աթոռի շրջապատից դուրս *այս տարի շինարարական աշխատանքների կենտրոն կհանդիսանա* Գեղարդի վանքի *միաբանական շենքի վերակառուցումն ու, ընդհանրապես, պատմական այդ չքնաղ վանքի շրջապատի բարեզարդումը, որի համար հատկացվելու են մեծ գումարներ։*

*Գեղարդի վանքի շինարարական-վերանորոգչական աշխատանքներում ծրագրվել են այս ընթացիկ տարվա համար.*

1. Քանդում՝ վանքի հարավային կողմում գտնվող միաբանական խարխուլ սենյակների երկրորդ հարկի, որոնք պատմական, հնագիտական արժեք չեն ներկայացնում։

2. Վանքի գավիթի ընդարձակում, սալահատակում, բարեկարգում և հնագիտական արժեք ունեցող արևելյան պատի վերանորոգում.

3. Կառուցում նոր շենքի՝ միաբանների բնակության համար։

Այս տարվա շինարարական աշխատանքների մեջ են մտնում նաև հատկապես ս. Հռիփսիմեի և ս. Մեսրոպ Մաշտոցի անվան եկեղեցիների բարեզարդումները և վերոհիշյալ տաճարներում հայկական զարդաքանդակներով և կոփածո պղնձից պատրաստած, գեղարվեստականորեն ձևավորված գեղեցիկ ջահերի տեղադրումը, որոնք Մայր Աթոռի կողմից ներկայացված նախագծերի հիման վրա պատրաստվելու են Իտալիայում՝ նվիրատվությամբ Հայկ և Թորգոմ Ղազարոսյան եղբայրների՝ ս. Մեսրոպի (Օշական) եկեղեցում, և Եր. Հյուսիսյանի՝ ս. Հռիփսիմեի համար։

# ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

Ապրիլի 9-ին՝ կիրակի օրը, երեկոյան ժա-
րգությունից հետո, Վեհափառ Հայրապետը
այր տաճարում ծայրագույն վարդապետա-
ան գավազանի իշխանություն շնորհեց Ե-
ուսաղեմի Հայոց սրբոց Հակոբյանց վանքի
փարան, Հոգեշնորհ տ. Կյուրեղ վրդ. Գա-
իկյանին, որն ուխտավորաբար, ս. Զատկի
ոիթով, գտնվում էր Մայր Աթոռում։
Խարտավիլակի պաշտոնը կատարում էր
ուսարարապետ տ. Հայկազուն արքեպիսկո-
ոսը։
Տ. Կյուրեղ վրդ. Գաբրիկյանը ծնվել է Երու-
աղեմում՝ 1921-ին, ս. Հակոբյանց վանքի
ամարների տակ։ Որդին է հայտնի բանա-
ծր և պատմաբան, սեբաստացի Կարապետ
աբրիկյանի։
Ավազանի անունով՝ Գեղամ։ Նախնական
րթությունը ստացել է Երուսաղեմի Հայոց
. Թարգմանչաց վարժարանում և ապա եկե-
նցական իր մասնագիտությունը՝ վանքի
առանգավորաց ընծայարանում։
1950 թվականին սարկավագ է ձեռնա-
դրվում և դառնում անդամ ս. Հակոբյանց
իաբանական ուխտին։
Այնուհետև վանքում վարում է ուսուցչա-
ան, վանական, վարչական պատասխանա-
ու պաշտոններ։
1952 թվականից ի վեր ձեռնհասորեն վա-
ում է ս. Թարգմանչաց վարժարանի տեսչ-
ությունը։ Նրա ջանքերով այդ նախակրթա-
անը վերածվում է երկրորդական հայկական
իջնակարգ դպրոցի։
1954—56 թվականներին, որպես նվիրակ,
անական իշխանության կողմից ԱՄՆ է ու-

ղարկվում հանգանակություն կատարելու համար՝ ի նպաստ Երուսաղեմի Հայոց վանքի։

1956—1961 թվականներին անդամակցում է վանքի տնօրեն ժողովին։

1962 թվականին Երուսաղեմի ս. Հարության տաճարի նորոգության համար, որպես նվիրակ, նորից հանգանակություն է կատարում Հարավային և Հյուսիսային Ամերիկաներում ու հայ Երուսաղեմի մասին իր խանդավառ դասախոսություններով ջերմացնում սրտերը։

1964 թվականի սեպտեմբերին, առաջին անգամ որպես ուխտավոր, այցելում է Մայր Աթոռ և հայրենիք։

1966 թվականի հոկտեմբերին, նորից հանգանակության համար, մեկնում է Հարավային Ամերիկա։

1967 թվականի մարտի 23-ին, երկրորդ անգամ, ուխտի է գալիս Մայր Աթոռ։

Հոգեշնորհ տ. Կյուրեղ վրդ. Գաբրիկյանը հավատավոր, իր կոչման նվիրված, պարտաճանաչ հայրենասեր հոգևորական է։ Նա գտնվում է իր ուժերի հասունության շրջանում։

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է ջերմորեն Հոգեշնորհ տ. Կյուրեղ ծայրագույն վարդապետին՝ մաղթելով նրան նորանոր հաջողություններ այն խորը հավատքով, որ նա իր հետագա ծառայություններով և նվիրումով կարդարացնի Մայր Աթոռի և Երուսաղեմի Հայոց պատրիարքության կողմից իր անձի հանդեպ տածված վստահությունը։

# Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ԱՆՏԻՊ ՏԱՂԵՐԸ*

## ՏԱՂ ԾԱՂԿԱԶԱՐԴԻՆ ՆԵՐՍԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԷ ԿԼԱՅԵՑՈՅ

*Ոստս արմաւեննաց հատեալ, տերև ձիթենեաց առեալ,*
*այն նորոգաւղին բերեալ, թագաւորին ընծայեալ։*
*Աստ երրայեցոց մանկունքն, զերգրս սերովբէիցն առեալ,*
*հեթանոսական զասուքն, տաւնակից վերնոցն եղեալ։*
*Յայս նոր աւետեաց աւուրս, երկիրս պանծացեալ բերկրի,*
*ծով զարնանայ շարժալեաւք, ծով երկնատարած ծրփի։*

---

* *Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրերաց Մատենադարանում, Ներսես Շնորհալու մատենագրական-երաժշտական վաստակի մասին պրպտումներ կատարելիս, մի շարք ձեռագրերում հանդիպեցինք, մինչև օրս հայ բանասիրությանը անծանոթ և Շնորհալու գրչին պատկանող, շուրջ երեսուն տաղերի, որոնք գրված են տերունական և մարտիրոսաց տոների առթիվ, եկեղեցում, պաշտամունքի ժամանակ երգվելու համար։*

*Սույն տաղերը անտիպ են և չեն մտել 1830 և 1928 թվականների վենետիկյան հրատարակությունների «Բանք չափաւ» Շնորհալու անունով տպագրված ժողովածուների մեջ։*

*Շնորհալու նորահայտ երեսուն անտիպ տաղերից, հոգևոր գողտրիկ այդ բանաստեղծությունների «էջմիածին» ամսագրի սույն համարում հրատարակում ենք մի քանիսը, այդ թվում՝ «Տաղ Ծաղկազարդին ի Ներսէս կաթողիկոսէ Կլայեցոյ», «Տաղ յարութեան Տեառն Ներսիսի», «Տաղ և գովասանք Աստուածածնի, ի խնդրոյ Մեծին Թորոսի», Մատենադարանի № 2672 ձեռագիր տաղարանից քաղված։*

*Մեկ խոսք, որ Շնորհալու հրատարակված և անտիպ տաղերը, նրանց բովանդակությունը, թեման, երգարվեստը, ոճական-մեղեդիական առանձնահատկությունները կարոտ են տարիների խորը և համադամանալից ուսումնասիրության, որպես մեր հոգևոր բանաստեղծության անկրկնելի գանձերը։*

ԱՐՍԵՆ ՎՐԴ. ԲԵՐԲԵՐՅԱՆ

Մայր Աթոռ

*Դաշտք կարմիր վարդեաւք վառեալ, կանաչ սաղարթիւք թերթեալ,*
*հեթանոսական դասուքն, տաւնակից վերնոցն եղեալ։*
*Զայս նահապետաց տեսեալ. պետք իշխանական եկեալ,*
*առ նախ Դաւթի գուշակեալ, յերինք բարձունք զուարճացեալ։*
*Զաքարիաս քարոզեալ. Թագաւոր քո հեզ եկեալ,*
*նոյն Երրորդութեան և մի, փառք յաւիտեանս ամէն։*
*Փոխէ որոյ քերովբէք յաթոռ փառաց. Նըստաւ ի Նուաստ իւր արարած,*
*և զոր աւրհնեն դասք հրեշտակաց, գովեն մանկունք բատընդիաց։*
*Էշն աւրհնակ հրէից ազգաց, և յաւանակն հեթանոսաց,*
*ումն աւրհնաւքն ըզգաւնացած, ոմըն տըրմուղ ըզհետ կամաց։*
*Յորս բազմի Բանն Աստուած, մաքուր ոգիս երկուս ազանց,*
*որպէս բըվէմ անկեան քարանց, միացուցիչ կըրկին կոչմանց։*
*Ոստս ի ծառոց առեալ ծերոց. ի ձիթենեաց պարարելոց,*
*Իմաստութեան նըմանելոց. ողորմութեան տիպ ցուցելոց։*
*Արմաւենիս բերեալ տղայոց, ի բարձութեան ձև արդարոց,*
*ընդ յառաջ խաղան ձայնիւ երգոց. սուրբ Արարչին արարածոց։*
*Որ յաւրհնակ հրէականին, և անմաքուր հեթանոսին,*
*նըստար ի յէշ յաւանակին, զգաւնացելոյ և տըրմըղին։*
*Մաքրեա՛ և զիս ըստ առակին, և յիս հանգի՛ր սիրով քոյին,*
*արա՛ յաթոռ քեզ երկնային, բազմեա հոգիս ըստ քերովբէին։*

## ՏԱՂ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ

*Ոչ արգելեաց վէմն երկրաւոր, նկից ըզվէմըն հոգևոր,*
*այլ առաւատն երրորդ աւուր, ծագեաց յերկրէ լոյս երնակուր։*
*Ի կոյս մաւրէ ծընեալ մարմնով, ըզկուսութիւն ոչ խախտելով,*
*ի կոյս յերկրէ նոյն յառնելով, և զկնիքն ամբողջ իսկ պահելով։*
*Մի զաւրականն ըզնա տեսեալ, դասք զինաւորացն եղեն մեռեալ,*
*ըզկափարիչ վէմըն բարձեալ, ահեղ լուսով վերանըստեալ։*
*Զայն աւետեաց կանանցն երգէր, Նըման փողոյ հընչմամբ փչէր,*
*յարեա՜ւ խաչեալըն, զի՞ խընդրէք. մի զարհուրիք այլ ցընծացէք։*
*Աշակերտացըն պատմեցէք. և զԵւայի պարտսըն լըցէք,*
*ի Գալիլիա երթայք տեսէք. և աշխարհի քարոզեցէք։*
*Այլոցն երթեալ վաղվաղակի, բայց Մարիամ կայր արտասուի,*
*նոցա ի գնալըն պատահի, յողջոյն ոտիցն երկըրպագի։*
*Մարիամու Մագդաղենի, ցուցաւ Նըմա պարտիզպանի,*
*կարծէր ըզնա անյուսալի, բարձաւղ մարմնոյն տիրականի։*
*Ծանաւթըս տայր ընդ ել ձայնով, ի յանուանէ զնա կոչելով,*
*զոր Մարիամ բաղձմամբ սիրով հըպեալ ի նա փափաքելով։*
*Տէրն արգելու զնա ասելով, մի՛ մերձենար սգալի գըթով,*
*զի չեմ ելեալ առ Հայր ամպով, ադամային զգեցեալ մարմնով։*
*Զի յերկնային ծառըն կենաց, նախադամեանքըն մերձակաց,*
*և ոչ Եւայ ձըգմամբ ձեռաց, որ հան զԱդամ յանճառ փառաց։*
*Այլ զյարութեան պտուղս առաջին, պարտ է Նուիրել Հաւրըն վերին,*
*որ իմ բնութեամբ է Հայր յերկին, և ձեր շնորհաւք աւազանին։*
*Աստուած կոչի իմ ըստ մարմնոյ, զի է սա մասն արարածոց,*
*և ձեր Աստուած բնութեամբ բարւոյ, Տէր և ստեղծիչ գոլ յանգոյ։*
*Ընդ հակառակսն ընթանալով, Պետրոս և Յոհաննէս սիրով,*
*զպատանսըն լոկ տեսանելով, և զվարշամակն ուրոյն գնելով։*
*Ի հրեշտակաց ծայեալ գոլով, առ ի պատիւ մեծ խորհրդով,*
*զինքըն զըլուխ մեր պատմելով, և զմեզ յանդամըս յաւգելով։*
*Բայց զինուորացն անդըէն դարձեալ, հրէից պատմեն զհրաշքըն տեսեալ,*
*զոր արծաթով կուրացուցեալ, յիւրոցն ասեն զնա գողացեալ։*

## ՏԱՂ ԵՒ ԳՈՎԱՍԱՆՔ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ
## (Ի ԽՆԴՐՈՅ ՄԵԾԻՆ ԹՈՐՈՍԻ)

*Իմանալի սերովբէ, բանին աթոռ քերովբէ,*
*Խորան լուսոյ արքային, հարսն մաքուր փեսային.*
*Նոր բուրաստան ծաղկեր անդ, ողկուզաբեր բարունակ.*
*Դրախտըն կրկին քե տուաւ, մայրն Եւայի որ մեղաւ.*
*Բոտեալ զերկունս տըրտմական, փոխադրեցեր ըրախճան,*
*Ուրախութիւն երկրայնոցս, հարսն ի յերկրէ երկնայնոց.*
*Մայր կենդանեացըն հոգոց, զոր նախահայրըն ծանոյց,*
*Երկոտասանեան վըտակաւ, վէմն առ ի քէն շնորհեցաւ.*
*Ծընար քառիցըն խիկոց, հոգոյն յոգիդ խառնեալոց,*
*Իմաստութիւն զաւրութիւն, արդարամետ մաքրութիւն,*
*Նարդոս զըմուռ ծովային, և կինամոն մեծագին.*
*Թագ և պըսակ զարմազան, զըմրոյթ և կայծ կարգեհան.*
*Ո՛վ դու քաղաք կենդանի, տաճար շինեալ Յիսուսի.*
*Բարունոյն Տեառն Քրիստոսի, ծընաւղ մարմնով ի յերկոի.*
*Որով հայցեմք մայր լուսոյ, զերգաւղ նորոյս և զտաղոյ.*
*Սըրբել ըզմեզ ի մեղաց, լեր բարեխաւս անմոռաց.*
*Ի զըւարթնոց կային, երգել ըզփառս ընդ նոսին.*
*Երրորդութեան անեղին, յաւէտ ի նոյն միշտ էին.*
*Դու շուշան ծաղիկ անապական ծընար, զվայելուչ ծաղիկն որ ի հաւրէ անմայր.*
*Աղբէր յորդառատ այսաւր ի քէն բըխեալ, արեգակն արդար այսաւր ի քէն ծագեալ.*

# ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՅԱՆՔ — ԲՈՒԽԱՐԵՍՏ

Ռումինահայ թեմի առաջնորդ տ. Տիրայր եպիսկոպոսի նախագահության ներքո սույն թվականի հունվարի 29-ին, տեղի առաջնորդարանին կից թանգարանի սրահում, առաջնորդ հոր նախագահությամբ, տեղի է ունեցել 1967 թվականի ընթացքում կայանալիք միջոցառումների (դասախոսություններ, հանդիպումներ, հանդիսություններ և այլն) հանդիսավոր և պաշտոնական բացումը։

Իր բացման խոսքի մեջ թեմական առաջնորդը հատկապես շեշտում է հայ եկեղեցու դերը արտասահմանում, հայապահպանման գործի մեջ։ Առաջնորդ սրբազանը նշում է նաև, որ ռումին կառավարության բարեխնամ և հոգատար վերաբերմունքի շնորհիվ հնարավոր եղավ կազմակերպել եկեղեցական իրերի թանգարան, որը հնարավորություն կտա հաճախակի կազմակերպելու զանազան միջոցառումներ։

Իր խոսքի վերջում սրբազանը շնորհակալության և գնահատանքի խոսքեր է ուղղում կրոնից նախարարությանը։

Այնուհետև ձայնաժապավենի վրա ունկնդրվում է՝ 1966 թվականի հոկտեմբերի 2-ին ս. Էջմիածնում տեղի ունեցած Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի գահակալության 11-րդ տարեդարձին նվիրված հանդիսությունը, որին մասնակցել էր նաև ռումին օրթոդոքս եկեղեցու պատվիրակությունը՝ ամենապատիվ տ. Ժուստինիան սրբազան պատրիարքի գլխավորությամբ։

Իր հերթական նիստում թեմական խորհուրդը լսում է և հավանություն տալիս՝ ս. Էջմիածնից ստացված № 1120 (17 դեկտեմբեր 1966 թ.) հաղորդագրության բովանդակությանը, որտեղ ասվում է, որ Հայաստանյայց Առաքելական ս. եկեղեցին իր մասնակցությունը չի բերի Անթիլիասում տեղի ունենալիք (29 հունվար — 10 փետրվար 1967 թ.) արևելյան եկեղեցիների խորհրդակցությանը։

Թեմական խորհրդի որոշմամբ այդ նամակը եկեղեցու մեջ ընթերցվում է ի լուր հավատացյալ ժողովրդի։

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՅԱՆՔ — ՍՈՖԻԱ

Տ. Մեսրոպ քհն. Թենլիյանը՝ Սոֆիայի ս. Աստվածածին եկեղեցու ծխատեր քահանան, գրում է մեզ՝ եկեղեցական ու ազգային այն տոնակատարությունների մասին, որոնք հանդիսավորությամբ տեղի են ունեցել Սոֆիայում՝ ս. Աստվածածին եկեղեցում։

Հունվարի 6-ին՝ Քրիստոսի ս. Ծննդյան և Ջրօրհնյաց տոների առթիվ, իր ցանկալի մասնակցությունն է բերում հայ եկեղեցու հանդիսությանը գեր. տ. Նիկոլայ եպիսկոպոսը՝ Սոֆիայի բուլղար օրթոդոքս եկեղեցու հոգևոր ակադեմիայի ռեկտորը։ Հավարտ ս. պատարագի, ի պատիվ հարգարժան սրբազանի, կազմակերպվում է ընդունելություն, որի ընթացքում գիտնական հոգևորականը՝ տ. Նիկոլայ եպիսկոպոսը, հանդես է գալիս հայ եկեղեցու և հայ ժողովրդի մասին ջերմ խոսքերով, որոնք բխում են քույր եկեղեցիների միջև եղբայրական սիրո զգացումներից։

Հունվարի 29-ին՝ կիրակի օրը, մեծ շուքով և հանդիսավորությամբ նշվում է «Ս. Վարդանանց զորավարաց» ազգային-եկեղեցական մեծ տոնը, որին նվիրված հանդեսին և ս. պատարագին ներկա է գտնվում նույնպես դեր. տ. Նիկոլայ եպիսկոպոսը՝ իր շքախմբի անդամներով (8 քահանա և 12 ուսանողներ)։

Օրվա տոնի ս. պատարագին իր մասնակցությունն է բերում նաև եկեղեցու «Զվարթնոց» երգչախումբը։

Իր քարոզի մեջ տ. Մեսրոպ քահանան ջերմորեն ողջունում է բուլղար եկեղեցու հյուրերին և իր ու ժողովրդի ուրախությունը հայտնում նրանց հաճելի մասնակցության առթիվ։

Իր պատասխան խոսքում տ. Նիկոլայ եպիսկոպոսը շնորհակալություն է հայտնում իր և իր շքախմբի անդամների անունից՝ ջերմ ընդունելության համար։ Նա մաղթում է, որ Վարդանների և Ղևոնդների պայծառ ոգին միշտ վառ մնա հայերի հոգիների և գիտակցության մեջ։ Նա նշում է նաև, որ 451 թվականի Վարդանանց պատերազմը հայերի ներկա գոյության ամենագլխավոր ազդակներից մեկն է հանդիսացել։

Հավարտ ս. պատարագի տեղի է ունենում ընդունելություն՝ ի պատիվ օրվա տոնի հիշատակի և հյուրերի։ Տ. Նիկոլայ եպիսկոպոսը բաժակ է բարձրացնում Վազգեն Ա Հայոց Հայրապետի թանկագին կենաց, իսկ ուսանողները հոգեթով երգում են Հայրապետական Մաղթանքը՝ „Многая лета"-ն (երկար տարիներ)։

Հունվարի 25-ին, տ. Նիկոլայ սրբազանի հրավերով, տ. Մեսրոպ քահանան դասախոսություն է կարդում Սոֆիայի հոգևոր ակադեմիայի բարձր լսարանի ուսանողության համար՝ Հայ եկեղեցու ծիսական պաշտամունքը և ժամերգությունը թեմայով։ Դասախոսության վերջում տ. Մեսրոպ քահանան պատասխանում է ուսանողության զանազան հարցերին։

Վերջում տ. Մեսրոպ քահանան գոհունակությամբ ընդունում է տ. Նիկոլայ սրբազանի հրավերը՝ հաջորդ անգամ դասախոսելու՝ քրիստոնեական հնագույն տաճարներից մեկի՝ ս. Էջմիածնի մասին։

## Գ Ր Ա Խ Ո Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

### ՎԱՐԴԱՆ ՔՀՆ. ՏԵՕՒԼԿԵՐԵԱՆ՝ «ԿԵԱՆՔԸ ԳԵՐԵԶՄԱՆԷՆ ԱՆԴԻՆ»

(Ֆրեզնօ, 1962, 141 էջ)

### «ԿԻՐԱԿՆՕՐԵԱ ԽՈՀԵՐ»

(Երուսաղեմ, տպարան Սրբոց Հակոբյանց, 1966, 223 էջ)

Խմբագրության սեղանի վրա է Ֆրեզնոյի Հայոց ս. Պողոս Մայր եկեղեցու հոգևոր հովիվ, արժանապատիվ տ. Վարդան քհն. Տյուլկերյանի տպագրված քարոզների երկու հատորները՝ «Կյանքը գերեզմանեն անդին» և «Կիրակնօրյա խոհեր»:

Արժանապատիվ հեղինակը ողջունելի գործ է կատարել՝ իր համեստ լուման ներդնելով մեր ժամանակակից սուրբ գրական մատենագրության հետզհետե աղքատացող հոգևոր գանձարանին մեջ։ Քարոզների սույն երկու հատորները կոչված են մասամբ լրացնելու կրոնական դպրության այն պակասը, որն անցյալի մեր եկեղեցական մատենագրության ամենասիրված ու մշակված գրական տեսակն է հանդիսացել։

Հարգելի հեղինակը իր հրատարակած երկու քարոզգրքերի մեջ կրոնական վերամշակման է ենթարկել սուրբ գրական, ավետարանական, առաքելական առանձին մտքերն ու թեմաները, նոր մեկնություն ու շունչ է տվել դրանց, քրիստոնեական կրոնի վեհ սկզբունքները, ճշմարտություններն ու պատգամները տոգորել հայ շնչով ու մտայնությամբ՝ հավատարիմ մնալով սակայն միշտ նրանց բնագրերի քրիստոնեական իմաստին ու բովանդակությանը։ Հեղինակն իր առջև նպատակ է դրել՝ քարոզգրքերի հրատարակությամբ իր հավատացյալների ու ընթերցողների միտքը կրթել, հոգիները «շահել ի Քրիստոս», անտարբեր սրտերն ու թմրած խղճմտանքները արթնացնել, քրիստոնեական լույսին ու կյանքին կանչել մարդկանց։ Ավետարանական բացատրությամբ հին, անմահական գինին՝ Ավետարանի ճշմարտությունները, նոր լույսով և նոր բաժակով ու նոր տիկի մեջ մատակարարել՝ հոգևոր սննդի ծարավը ունեցող հոգիներին։ Ազնիվ և վեհ նպատակ։

Արդարև, գրախոսվող երկու քարոզգրքերի էջերից նորից հնչում են Ավետարանի հավիտենական ճշմարտությունները, խաղաղության, սիրո, եղբայրության, մարդասիրության, հավիտենական կյանքի պատգամները։

«Կյանքը գերեզմանեն անդին» և «Կիրակնօրյա խոհեր» քարոզաշարքերում արտահայտված զգացմունքներն ու զարգացրած, խորացրած մտքերը հեղինակի ներքին աշխարհից, համոզմունքներից, հավատքից են բխում և դրա համար էլ ս. գրական այդ խորհրդածությունները, ընդհանրացումները, հորդորներն ու խրատները անմիջական են, ջերմ, արտահայտիչ ու պատկերավոր՝ համեմված միաժամանակ ժողովրդական իմաստուն խոսքերով, առակներով։

Առաջին քարոզգիրքը՝ «Կյանքը գերեզմանեն անդին», բաղկանում է տասնինը կրոնաշունչ քարոզներից։ Գիրքը բացվում է «Անմահություն» նկարով (գործ՝ արվեստագետ Ստեփան Նալբանդի)։ Այդ նկարն առնչվում է քարոզգրքի անվան հետ և է՛լ ավելի թելադրական է դարձնում այն։ Արդարև, մարդը կոչված է անմահության, որ գերեզմանից «էն դին» կողմը քրիստոնյաների համար շարունակվում է ճշմարիտ ու հավերժական կյանքը։

Առաջին քարոզգրքի մեջ ամփոփված տասնինը քարոզներից առաջինը, որը կրում է «Ժամանակին արժեքը, հույսերու մայրամուտ, հույսերու արևածագ» բանաստեղծական վերնագիրը (էջ 9—16), անցնող տարվա և ամանորի խոհերով, կյանքի և ժամանակի մասին խորհրդածություն է։ Կյանքը սպիտակ, երկնատուր մատյան է, որը պետք է լցվի ժամանակի ընթացքում աստվածահաճո, մարդասիրական, եկեղեցաշեն և հանրօգուտ գործերով։ «Էականն ապրված կյանքի տարիները չեն, այլ կատարված բարի գործերը»։ Մեռնող տարվա մասին խորհրդածելիս «ամանորի կազդուրիչ զորությունն ու ուրախությունը պիտի զգանք լիապես այն ատեն, երբ մեր հոգին ջահավորենք Քրիստոսի կյանքին հավերժական լույսով» (էջ 10)։

Հատորի հաջորդ մի շարք քարոզները գրված են տոնական մեծ օրերի առիթով, եկեղեցական օրացույցի գլխավոր տոների ներշնչումի ներքո, ինչպիսիք են Փրկչի ծննդյան, Վարդանանց, Մեծ պահոց, Ծաղկազարդի, Հարության, Աստվածածնի տոները (էջ 17—64), իսկ մնացած քարոզները ընդհանուր հանգամանք կրող սուրբ գրական խոկումներ են, «Ազատություն և գթություն», «Հավիտենական արժեք», «Ճշմարիտ փառք», «Աստծու ձայնը մարդոց սրտին մեջ», «Խոնարհություն և անկեղծություն» և այլն (էջ 65—118)։

Ս. Ծննդյան քարոզը գերազանցապես սիրո, արդարության և խաղաղության երկնատուր ավետիսն է մեր մոլորակին։ Այսօր էլ աշխարհը, խաղաղության Իշխանի ծննդից քսան դարեր հետո էլ, տառապում է ի խնդիր խաղաղության. ինչո՞ւ, որովհետև մարդիկ մոռացել են ծննդյան պատգամը ու չեն ցանկանում լսել խաղաղության ավետիսը, որովհետև «ճշմարտություն է, որ այսօր սակավաթիվ հավատացյալներ միայն կհասկնան ու կզգան Բեթղեհեմի հրաշատեսիլ եղելության խորհուրդը... ու կզգան այն մեծ ուրախության կազդույրը» (էջ 27)։

Մինչև որ Փրկիչը վերստին չծնվի սրտերի մեջ, աշխարհ չի կարող տևական խաղաղություն վայելել։ Խաղաղության ճանապարհը, եզրակացնում է հեղինակը՝ «Մսուրի ճամփան է» (էջ 24)։

Գեղեցիկ ու բովանդակալից քարոզներից մեկն է աղոթքի կարևորության նվիրված խորհրդածությունը (էջ 25—32)։ Աղոթքը ոչ միայն «Աստուծո զգացումով իր հոգին սնուցանող», ճշմարիտ քրիստոնյայի ամենօրյա պարտականությունն է՝ «միջոց, որ մեր բարեպաշտությունը կբարձրացնե Աստծո սրբությունը», այլ մանավանդ արվեստ է աղոթելը։ Ամեն հավատացյալ չէ, որ աղոթել գիտի։ Քրիստոսի առաքյալները մի օր իրենց Վարդապետին խնդրեցին՝ «Ուսո մեզ կալ յաղօթս»։ Արդարև, «աղոթքի զգացումը այնքան խորարմատ է մարդկային հոգիին մեջ, որ հոգեբուխ աղոթքին պարգևած սփոփանքը մեզի չեն կրնար տալ ո՛չ այս աշխարհի փառքերը, ո՛չ հարստությունները» (էջ 27)։

Հայրենասիրական, կրոնաբույր շնչով է գրված Ղևոնդյանց և Վարդանանց հիշատակին նվիրված քարոզը (էջ 33—41), ուր արժանապատիվ հեղինակը խոսում է նաև սփյուռքում մեր ազգային մտահոգությունների, «ազգային ձուլումի վտանգի, մռայլ ճակատագրի», ձուլման, արդի քաղաքակրթության «փորձիչ» ազդեցությունների մասին ևս։ Ղևոնդի, Վարդանի «Հավատքի, հայրենասիրության և ազատության այդ իդեալը՝ առաջնորդող աստղը, պետք է մնա սփյուռքի հայության... Վարդանի սերունդը իր ազգային դավանանքով ու դյուցազնական ոգիով փրկեց ո՛չ միայն իր կյանքը... Հիմա կարգը մեր սերունդինն է՝ պահելու և պաշտպանելու ազգին ամբողջությունը» (էջ 39—40)։

Անառակի առակը Ավետարանի անկրկնելի գանձերից մեկն է, Ավետարան՝ Ավետարանների մեջ։ Տ. Վարդան քահանան ևս իր քարոզի նյութ է դարձրել այդ սքանչելի առակը (էջ 41—45)։ Հեղինակն իր քարոզի մեջ շոշափում է մեղքի և պատժի, զղջման ու ներումի, և մանավանդ աստվածային ներողամտության մեծության ու անդիմադրելի ուժի հարցերը։ Անառակի կերպարի մեջ մեր նայվածքի առաջ պատկերվում է մարդկային կյանքը իր լույս ու ստվերոտ կողմերով, մարդու հոգեկան աշխարհը, նրա տատանումներն ու ընդվզումները, նրա անկումն ու ողբերգությունը և փրկվելու հավատքը։ Իր քարոզի մեջ հեղինակը կարողացել է մի անգամ ևս գեղեցկացնել անառակի առակը՝ իր հավատացյալների հոգևոր մխիթարության ու դաստիարակության համար։

Նշված արժանիքներով չի սպառվում, իհարկե, առաջին քարոզգրքի նշանակությունն ու կարևորությունը, ուր հանգամանորեն խոսվում է նաև քրիստոնեական կրոնի, կենցաղի, հասարակաց վարքի, քրիստոնեական

...յանի, առաքինությունների և գործ-
...ցած նշանակություն ունեցող այլ հարցերի
...սին։
...րժանապատիվ հեղինակի երկրորդ քա-
...գիրքը՝ «Կիրակնօրյա խոհեր»-ը, քաղվա-
...ծ է հիսուներկու քարոզներից։ Հեղի-
...ն այստեղ վերահրատարակել է հա-
...յա ամբողջությամբ իր նախորդ քարոզ-
...ի մեծ մասը։ Գիրքը ճաշակով և գեղեց-
...ձեն ձևավորել է Ղևոնդ աբեղա Սամուր-
...ը։ Ամերիկահայ ծանոթ գրող Վահե Հայ-
...գրքի «Հառաջաբան»-ում ներկայացնում
...հեղինակին, «որուն ամենօրյա ծառայու-
...ները միայն հայաստանյայց եկեղեց-
...խորհրդասքող կամարներուն տակ չեն
...փակվիր, այլ դուրս կելլեն անկե և կտա-
...վին նաև մեր ազգային և ժողովրդական
...ների վրա» (էջ 6)։
...րդարև, քարոզգրքի ընթերցումը մեզ բե-
...մ է այն վկայությունը, որ հեղինակը
...հոգվել է խորապես ԱՄՆ-ում հասակ
...ած հայ նոր սերնդի դաստիարակության,
... ժողովրդի ազգապահման և մեր հոգևոր
...քների (կրոն, եկեղեցի, լեզու, մշա-
...յթ, տոհմիկ ավանդություն) պահպան-
...ն հարցերով։ Տխուր է արձանագրել, որ
...ղի քաղաքակիրթության» պայմաններում
...ո քան է քայքայվում նոր սերնդի հոգու
...այնության մեջ։ Հոգևոր, ազգային մշա-
...ային արժեքների տախտակները գլխի-
...ր են շրջվել։ Հարկ է հայ հավատքի, բա-
...պաշտության, եկեղեցասիրության, հայրե-
...սիրության շինուկը ներարկել նոր սերնդի
...ում, ջերմացնել նրա սիրտն ու միտքը
...ստոնեական կրոնի կրակով, մեր նախ-
...ց սուրբ հավատքի լույսով, հայ ազգա-
...-եկեղեցական արժանապատվության
...զգմունքով։ «Ահա այս ազնիվ ու մեծ
...տակին ծառայելու բաղձանքով է, որ
...կա գեղեցկահյուս մատյանը կհանձնե
...ղինակը) սփյուռքի հողմացրիվ հայության
...նոր ազգանվեր ճիգերուն» (էջ 9)։
...եղինակն արդարորեն սփյուռքում հայու-
...ն պահպանումը կապում է ս. Էջմիածնի
...նության և հովանու ներքո հայ եկեղեցու
...քելության դերին ու նշանակության
...։ Ա՛յդ է պատմության դասը և ա՛յդ է
... ժամանակների հրամայականը։ «Հայ
...հատակ եկեղեցին իր ծագումեն մինչև
...օր խանդակաթ մոր մը պես իր տարուկ
...ին մեջ պատսպարել է հայությունը» (էջ
..., իսկ հայ եկեղեցու պատմական ու դա-
...վոր կենտրոն Մայր Աթոռ ս. Էջմիածինը
...յ ժողովրդի խորագույն անցյալեն ժա-
...նգված մնայուն արժեքներու մեջ, մեզի
...մար, իր կրոնական նվիրականությամբ,
... պատմական նշանակությամբ և իր ազ-

գային կարևորությամբ ստորադասված հաստատություն է... ամեն հավատացյալ ու հայրենասեր հայու հավերժական հպարտությունն ու փառքը» (էջ 19)։

Հեղինակն արտահայտելով բովանդակ հայ հավատացյալ ժողովրդի խոհերն ու զգացմունքները, Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի գահակալության իններորդ տարեդարձին նվիրված իր քարոզին մեջ «Մայր Աթոռը և իր գահակալը» (էջ 19—21), եզրակացնում է.

«Հարազատ հայը, հայրենասեր հայը, հավիտենական հայը՝ Ս. Էջմիածնի զավակ հավատացյալ հայն է» (էջ 23)։ (Ընդգծումները մերն են—Ա. Հ.)։

Արժանապատիվ տ. Վարդան քահանան վերջերս՝ 1967 թվականի հունվարի 24-ին, իր մի այլ հոդվածում, որը կրում է «Հայաստանյայց եկեղեցին և Կիլիկիո Աթոռը» վերնագիրը, որը գրված է վերոհիշյալ քարոզի ոգով, սրտցավորեն, բայց և՛ համոզմունքով, և՛ արիությամբ անդրադառնում է, այսօր սփյուռքում, և մանավանդ ԱՄՆ-ում, մեր ազգային-եկեղեցական ներքին միությունը և խաղաղությունը պառակտել փորձող տխուր աշխատանքներին, և որպես եկեղեցու սպասավոր և հայրենասեր հոգևորական, դատապարտության և վրդովմունքի իր արդար խոսքն է ասում մամուլի էջերից.

«Հայ առաքելական եկեղեցին մեկ գլուխ ունի և մեկ կեդրոն իր հաստատված օրեն ասդին։ Այդ գլուխը Ն. Ս. Օծությունն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց սրբազնագույն կաթողիկոսն է... Մեկ կեդրոն ունի, որ Մայր Աթոռ ս. Էջմիածինն է...

Կիլիկիո Աթոռը ընդհանրական հայրապետություն չէ։ Մասնավոր կաթողիկոսություն է՝ սահմանափակ իրավունքներով և աշխարհագրականորեն ճշգրտված սահմաններով, որուն հոգևոր իշխանության ենթակա են Սուրիա, Լիբանանի և Կիպրոսի թեմերը միայն։

Ամերիկայի հայոց եկեղեցվո թեմին մասին խոսելով, ակիզբեն ի վեր եղած է և կմնա ճշմարիտ հավատացյալին համար, Ամենայն Հայոց Հայրապետության ենթակա թեմ մը մեկ գլխով, մեկ առաջնորդով և մեկ առաջնորդարանով։

Կիլիկիո կաթողիկոսության ներկայությունը ամերիկահայ թեմին մեջ օրինավոր չէ, ամենահստակ որակումով բմբոստություն է, իրավունքներու ակնհայտնի բռնաբարում է և չի կրնար արդարանալ ոչ մեկ պատճառաբանությամբ։

Մենք՝ որպես Հայց. եկեղեցվո հոգևորական, չենք կրնար ընդունիլ այդպիսի օրինախախտում մը և միասնականության սիրույն

օրինականացնել կատարված ապօրինություն մը։

Քարոզգիրքը հեղինակի մտքի և սրտի բյուրեղյա բնարերգությունն է։ Բոլոր էջերի վրա և տողերի մեջ բաբախում է հեղինակի հավատավոր ու բարի սիրտը։ Քարոզգիրքը հայելին է, հանդիսարանը, արժանապատիվ տ. Վարդան քահանայի հոգեկան ապրումներին, խոհերին, ազգային-եկեղեցական մտահոգություններին և իր կոչման բարձրության վրա գտնվող, իր ժողովրդի հանդեպ պատասխանատվության խորունկ զգացմունքով գործող ազնիվ հոգևորականին։ Պայծառ ոճ, սահուն լեզու։

Հեղինակը, նախկին ուսուցիչ և դաստիարակ, այժմ Հայ եկեղեցու սպասավոր, աշխատել ու գործել է, խոսել ու գրել իր ժողովրդի հանդեպ ունեցած սյարտքի և կոչման խորը գիտակցությամբ։

Նրա կյանքը կենդանի խարոզ է հանդիսացել նրա հավատքին, սկզբունքներին ու համոզմունքներին։

Ահա տասը տարի է, ինչ տ. Վարդան քահանան որպես «մշակ առանց ամոթոյ» խոսել ու մխիթարել է իր հավատացյալ ժողովրդի որանիւ և գործով», և ամեն տեղ, եկեղեցա կամարների տակ թե ընտանեկան օջախնե րի մեջ, թե մամուլի էջերում, հնչեցրել է Ա վետարանի պատգամները որպես հոգևո հովիվ, բանին կենաց քարոզիչ, ուսուցիչ հրապարակախոս։

Երկու քարոզգրքերը ջերմ ընդունելությու են գտել ընթերցողների կողմից։ Դա մե երաշխիք է արժանապատիվ հեղինակին հա մար՝ շարունակելու այսուհետև էլ իր բեղմ նավոր սուրբ գրական աշխատությունները Վստահ ենք, որ արժանապատիվ հեղինակ կարդարացնի իր ժողովրդի սերն ու վստա հությունը նորանոր գործերով։

«Էջմիածին» ամսագրի խմբագրությու ողջունելով հարգելի հեղինակի քարոզգրքեր հրատարակությունը, նրան հաջողությու ցանկանում, նոր, կրոնաշունչ, հայրենաբու գրվածքներով ճոխացնելու մասամբ խոպա մնացած մեր եկեղեցական գրականությա անդաստանը։

Ա. Հ.

Յ. ՍԻՐՈՒՆԻ

# ԿՈՄԻՏԱՍԻՆ ՀԵՏ*

## VII.— Կոմիտասը մեր կողքին

նույն այդ օրերուն, իր ամենէն խանդա-
ռատ պահը կապրեր Պոլիսը: Թոթափած վա-
ւից Հուրրիեթի դինովությունը ու անոր հա-
որդող կրքոտ պայքարներու թափը, Պոլիսը
որ հանգրվան մը թևակոխեր էր։

Ազանայեն սթափած և վրդով, նոր այլա-
Ներպութենեն, որուն ենթարկված էր թուրքը
ր աչքերը հառելով Թուրան, հայ ժողովուր-
ը սկսեր էր ինքն ալ մտածել իր գոյության
ասին։ Հայկական դատը սեղան էր եկեր
ւնգամ մը ևս, ու հայը գացեր էր նորեն ծե-
եյու եվրոպայի դուռները՝ թուրքեն այլևս
ույսը կտրած։ Պահը շատ էր դժնդակ. որ-
եսզի հայ ժողովուրդը շարունակեր տարի-
եր վատնել ունայն վեճերու մեջ։ Համերաշ-
ության նոր ալիք մը ման եկավ անոր բոլոր
ավերեն ներս՝ միակ զանգված մը դարձնե-
ու համար զանոնք վտանգին առջև, և միակ
ակատ՝ հայ ժողովուրդի գոյության սիրույն։
ոնը, զոր հայ ժողովուրդը պիտի տարքեր
յդ տարին հանուն Սահակ—Մեսրոպին, մե-
ադույն առիթն էր միացնելու անոր բոլոր
ավերն ու դավանանքները։

Բայց ամենեն առաջ իրարու պետք է տաք-
ային հայ մտավորականները։

* * *

Կոմիտաս այդ օրերուն հոգեկան կապ մը
դարձավ բոլորիս միջև։ Առանց անոր ներկա-
յության մեր մեջ, պիտի չջերմանային կար-
ծես մեր հոգիները, ու ցուրտ պիտի մնային
դեպի իրար։ Դժվար էր, արդարև, եղբայրակ-
ցություն ստեղծել քաղաքի մը մեջ, ուր ան-
հատական գիծը միշտ զորավոր էր եղեր
մարդոց մոտ և զանոնք զրկեր էր հավաքա-
կան հուզումներու և հավաքական ճիգերու
հնարավորութենեն. մարդիկ դժվար կմոտե-
նային իրարու, ամեն մեկը փորձելով իր
պատյանին մեջ աշխատել։ Բայց պահեր
պետք էր, որ պատահեին, որպեսզի մարդիկ
դուրս գային իրենց խեցիեն,— հասարակաց
հոգեր պետք էին Պոլիսը բռնկած գտնելու
համար պահ մը հասարակաց ճիգերով։ Ու
դեռ ավելին կար։ Պոլիսը հին օրերու Բյու-
զանդիոնը մնացած էր միշտ, ունայն վեճե-
րու դասական քաղաքը, ուր ամեն վեճ հե-
տը քեն կմնար, կմնային փոխադարձ ոխն ու
ատելությունը։ Բյուզանդական այդ վեճերը
Պոլիսը բորբոքեր էին Հուրրիեթի առաջին
րանի մը տարին, ու հայ կյանքը լեցուցեր
թույնով ու թշնամանքով։ Կուսակցական
պայքարները, Ազգային երեսփ. ժողովի սրա-
հեն մեկնած, մտած էին բոլոր խավերը,
զինելով հարեանը հարեանի, եղբայրը եղ-
բոր դեմ։ Հայ մտավորականությունը, կու-
սակցական այդ կռիվներուն ազդեցության

* Շարունակված «էջմիածին» ամսագրի 1965 թվա-
անի № № Ա-ից, Ե—Զ—Է-ից, Ը—Թ—Ժ-ից, 1966
վականի № № Ա—Բ—Գ-ից, Դ—Ե—Զ-ից, Ը—Թ—Ժ-ից
1967 թվականի № Գ-ից։

տակ. բաժան-բաժան էր եղեր ինքն ալ. Չլատեր, խամրեր և ուժ չունեին իր քենը թոթափելու նույնիսկ այնպիսի պահու մը, երբոր հայկական դատը իր նոր հունը մտած սիրո և եղբայրության, ինչպես և գործակցության կկանչեր բոլորը։ Անշուշտ բոլոր կուսակցություններու մեջ ալ կային կրքերեն զզված և կուսակցական վեճերու վրա վերեն նայող մարդիկ, բայց ուժը կպակսեր անոնց կամուրջ նետելու մեկ ափեն մյուսը։ Կուսակցական վեճերեն բոլորովին վեր ու հայ ժողովուրդի մեծ հուզումներեն զատ ուրիշ գրգիռ չճանչցող մարդիկ պետք էին, որպեսզի օղակ դառնային խորթ եղբայրներու միջև, ու ցըրվեին փոխադարձ քենը։

Կոմիտասի ներկայությունը մեր մեջ 1912—1913 տարիներուն, մեծապես սատարեց հոգիներու խորը կուտակված թույնը ցրվելուն համար։ Եթե կրցանք այդ տարիներուն մերձեցման փորձեր ընել և միևնույն սեղանին շուրջը խմբել դժտված եղբայրակիցներ, բան մը կպարտինք և Կոմիտասին։ Սիրո մթնոլորտը իր օճախեն սկսավ, հոն կհավաքվեին այնքան հոծ թիվով հայ գրչի և արվեստի մարդիկ՝ տարբեր-տարբեր հոսանքե ու համոզումե, եղբայրանալու սիրո այդ մթնոլորտին մեջ։

***

Այդ օրերուն էր, որ խումբ մը մտավորականներ գաղափարն հղացանք կազմակերպություն մը մեր շուրջը համախմբելով հայ գրականության և արվեստի նախաձեռնությամբ տոգորված մարդիկ, առանց հարցնելու անոնց տարբեր դավանանքները։ Պահը այլապես ալ բարեդեպ էր։ Գրական նոր դեմքեր, որոնք հետո մեկ-մեկ փառք պիտի հանդիսանային մեր գրականության մեջ, որպիսին Սիամանթոն, Վարուժանն ու Կոստան Զարյանն էին, Պոլիս էին արդեն այդ պահուն, Պոլիս էր նաև դեռ անտաշ այն գավառացին, որ Օշականը պիտի դառնար հետագային։ Կոմիտասն էր, սակայն, որ իր հովանին տվավ մեզ։

Պաշարման վիճակի օրեր էին Պոլսո մեջ, ու արտոնություն պետք էր, որպեսզի կարենար քով-քովի գալ մեր «Աստեղատուն»-ը, ինչպես կուզեինք կոչել մեր ծրագրած այդ կազմակերպությունը։

Ցանկին մեջ, զոր կառավարության ներկայացուցինք իբրև «Աստեղատան» հիմնադիր, հետևյալ անունները կային.

Կոմիտաս վարդապետ
Տիկին Զապել Եսայան
Նկարիչ Փանոս Թերլեմեզյան
Նկարիչ Սարգիս Քյուրքճյան
Դանիել Վարուժան
Սիամանթո
Կոստան Զարյան
Հակոբ Քյուֆեճյան
Գեղամ Բարսեղյան
Հրանդ Նազարյանց
Ահարոն
և այս տողերը գրողը

Ցուցակը, զոր կազմեր էինք, չէր ընդգրկեր անշուշտ, օրվան գրչի և արվեստի բոլոր մարդիկը, ոչ ալ մեր զատածները կարկառուն դեմքեր էին բոլորն ալ։ Նախաձեռնողներու նպատակն էր եղեր. իրար հասկցողներու խմբակ մը կազմել գրական շարժում մը սկսելու համար Պոլսո մեջ՝ կարկառուն դեմքերու կարգին առնելով քանի մը համեստներ ալ, որոնք պիտի կրնային ստանձնել գործնական աշխատանքներու բեռը։ «Աստեղատուն»-ը ոչ հայ գրողներու և արվեստագետներու միություն պիտի ըլլար ուրեմն, ոչ ալ այլամերժ շրջանակ մը, ինչպես մեր տիտղոսը թերևս ենթադրել տար։ Զարմանալի չէր հետևաբար, եթե մեր ցանկին մեջ ոչ Զոհրապը կերևար, ոչ Զարդարյանը, ոչ Թեքեյանն ու Շանթը, ոչ Սիպիլն ու Երուխանը, ոչ Կյուրճյանն ու Դուրյանը, ոչ Զրաքյանն ու Գոլանճյանն, ու դեռ շատ-շատերը, որոնց ալ դիմում պիտի ընեինք գործունեության ատեն։ Իսկ այդ գործունեությունը ուրիշ բան պիտի չըլլար առայժմ, բայց եթե հիմը դնել գրականության և արվեստի տարեգրքի մը, որ «Աստեղատուն» պիտի հորջորջվեր, գրչի և արվեստի մարդոց հանդիպումներ սարքել հաճախակի, երաժշտական հավաքույթներ ունենալ, ցուցահանդեսներ նախաձեռնել, հրապարակային գրական դասեր ու վեճեր կազմակերպել ի հարկին։

Չուզեցինք մամուլով աղմուկ ընել սկիզբեն։ Պարսամյանի «Շանթն» էր միայն, որ սա քանի մը տողը արձանագրեց. «Կիմանանք, թե մեկ քանի թրքահայ երիտասարդ գրողներ նախաձեռնությունը ունեցած են Պոլսո մեջ հիմնելու «Աստեղատուն» մը, իբր ժամադրավայր մեր երիտասարդ ուժերուն՝ բանաստեղծ, նկարիչ, երաժիշտ և այլն։ Որքան ալ դեռ սաղմնային վիճակի մեջ ըլլա այդ ծրագիրը, մեր անկեղծ ցանկությունն է, որ գոնե այս անգամ մարմին գտներ ան։ Հաճույքը պիտի ունենանք մոտ ատենեն մեր ընթերցողներուն ներկայացնելու «Աստեղատուն»-ի ծրագիրը»[17]։

«Աստեղատուն»-ը մյուս, սակայն, չծնավ։ Նիստ մը միայն ունեցանք Կոմիտասի նա-

[17] «Շանթ», 1912 դեկտ. 1/14, թիվ 35։

խաղաղության տակ՝ Վարուժանի տանը մեջ։ Ժամ մը, երկուք, աղվոր-աղվոր խոսեցանք ու թաղեցինք «Աստեղատուն»-ը, որովհետև իմացեր էինք, որ ճիշտ քանի մը օր առաջ խումբ մը ուրիշ գրողներ, որոնց անունը հայ գրականությունը վաղուց է մոռցած, ու լավ կըլլա, որ չհիշեմ ես ալ, հավաքույթ մը ունեցեր էին, իրենք ես գրական ընկերություն մը սարքելու համար միշտ «Աստեղատուն» տիտղոսին ներքև։ Այլուր պատմած եմ մանրամասնությունները ու հարկ չեմ տեսներ անդրադառնալ այստեղ ես։ Ըսեմ միայն, թե ինչ որ «Աստեղատուն» անունով պիտի ընեինք, շուտով փորձեցինք ընել ուրիշ տիտղոսներու տակ։ Ու մեր բոլոր փորձերուն մեջ մեր կողքին մնաց Կոմիտաս, ու մեր վրա անոր հովանին։

* * *

Մեր գործունեությունն սկսանք «Գրական ասուլիս»-ներով։ Ինչ որ հնարավորություն չունեցանք «Աստեղատուն» անունով ընել՝ փորձեցինք ընել ուրիշ ֆիրմայի մը ներքև։ Այդ ֆիրման Եսայան Սանուց Միությունն էր, որ Թերայի մեջ միակ միությունն էր այդ պահուն, որուն շուրջ հավաքված էր երկսեռ երիտասարդություն մը, և ուր ղեկավար դեր ուներ այս տողերը գրողը ես։

Երբ 1913-ի գարնան «Գրական ասուլիս»-ները կը նախաձեռնեի, զիս առաջին խրախուսողներեն մեկը Կոմիտաս եղավ։ Բոլորը վախցուցեր էին զիս, թե հայ գրողները պիտի չգնան քով-քովի։ Կոմիտաս, ընդհակառակն, այն կարծիքն ուներ, որ այնպիսի պահու մը, երբ հայ ժողովուրդը հոգեկան մերձեցում մը կփորձե հասարակաց ճակատ կազմելու համար՝ հանուն հայ դատին, հայ մտավորականությունը չի կրնար չմոռնալ իր փոքրիկ քեները։

«Գրական ասուլիս»-ներն սկսանք 1913 մարտ 3։ Առաջին մեր ասուլիսը նվիրված էր Շանթի «Հին Աստվածներ»-ուն։ 1909-ին Թիֆլիզի մեջ գրված և Պոլսո մեջ տպված 1912-ին, Կովկասի մեջ բեմադրվելե հետո էր միայն, որ ընդհանուր հետաքրքրության առարկա էր սկսած դառնալ Շանթի այս թատերախաղը՝ գրական դատերու իսկ նյութ հանդիսանալով։ Նման դատի մը նյութ դարձնելու փորձ մըն էր նաև մերը, որ հորդագին բազմություն մը համախմբեր էր այդ օրը Եսայան վարժարանի սրահին մեջ։

Կոմիտաս մեկն էր գրական սույն դատին ժյուրիին անդամներեն և մեկն եղավ անոնցմե, որոնք Գրիգոր Զոհրապին հետ մեկտեղ, մերժեցին գրական դատի հանգամանք տալ Շանթի թատերախաղին շուրջ արտահայտված այս թեր ու դեմ կարծիքներուն, և ստիպեցին մեզ՝ կազմակերպողներս, որ «Գրական ասուլիս»-ի համեստ տիտղոսով բավականանանք մեր հետագա համախմբություններուն առթիվ, որոնց նյութ պիտի դառնային հետզհետե Գրիգոր Զոհրապ, Դանիել Վարուժան, Ռուբեն Զարդարյան, Սիամանթո և Հովհաննես Սեթյան, շարք, որ պիտի տևեր, եթե աննպաստ պայմաններ չկաշկանդեին մեզ հետո։

Սխալ է, թե Կոմիտաս կնախագահեր առհասարակ «Գրական ասուլիս»-ներուն[18]։ Ամեն «Գրական ասուլիս»-ի նախագահը կփոխվեր։ Անոնց նախագահեցին, օրինակ, Գ. Խաժակ, Ռ. Զարդարյան, Ե. Օտյան, Ալեքսանդր Փանոսյան, Մելքոն Կյուրճյան։ Կոմիտաս Ռուբեն Զարդարյանի նվիրված ասուլիսին էր, որ նախագահեց, 1913 մայիս 5-ին, և այդ առթիվ արտասանած իր փակման խոսքը գովատիքն էր գավառին ու անոր ծոցեն հասունցած գրչի մշակներուն։ Գավառի հոգեկան գեղեցկություններուն փառաբանությունն ընելե հետո, Կոմիտաս կանդրադառնար Զարդարյանի գրական վաստակին, այդ վաստակին մեջ անգամ մը ես պանծացնելով գավառը.

«Ռուբեն Զարդարյան, որուն Եսայան Սանուց Միությունը կնվիրե իր չորրորդ գրական ասուլիսը, մեկն է հայ գրականության սակավաթիվ դեմքերեն, որոնք ճանչցած են գավառը իր բնական և հոգեկան հարստություններով, և իրենց գործը կերտած են այդ հարստություններուն վրա, որոնք ժողովուրդինն են։ Զարդարյան, իբր հեղափոխական, իր սիրտը կապած է ժողովուրդին սրտին, և իբր գրագետ իր միտքը կապած է ժողովուրդին մտքին հետ։ Ժողովուրդին զավակն է Զարդարյան։

Ես իր «Ցայգալույս»-ը դեռ այս տարի կարդացի։ Երբ զայն կարդացի, Զարդարյանը չպատկերացուցի բնավ աչքերուս առջև, այլ ամբողջ ազգ մը, ամբողջ ժողովուրդ մը՝ իր գեղեցկությամբն ու շքեղությամբ։ Այդ մատյանը գրքի մը տպավորություն չէր, որ թողուց վրաս, այլ կյանքի մը՝ իր բաբախումներովն ու իր զգայնությամբը։

«Երբ կթղթատեի իր էջերը, բառեր ու նախադասություններ չէր, որ կպատկերանային աչքիս առջև, այլ կարծես անծանոթ էակ մը իմ ձեռքես բռնած կառաջնորդեր զիս անծանոթ վայրեր, դեպի գանձեր բյուրազան ու դեպի պերճություններ շողշողուն։ Ու երբ Զարդարյանի վրա կխոսինք, կարծես թե ինքը բնավ գոյություն չունի ինծի համար, այլ

---

[18] Աղավնի Մեսրոպյան՝ «Ժամանակակիցները Կոմիտասի մասին», էջ 248։

կյանքը, այդ երկիրը, այդ հայրենիքը, որ այնքան գեղեցկություններ ունի։ Իր գործին մեջ ես չտեսա ածականներ, այլ պատկերներ լին ամբողջ աչքիս առջև, զորս այնքան բանաստեղծներ կփնտրեին ու չէին գտներ, և զորս սակայն գրած է Զարդարյան, որովհետև զգացած է զանոնք, իրենց բովանդակ գեղեցկության մեջ։

«Ահա մարդ մը մեր առջև՝ արժանի ամեն հարգանքի։ Մարդ մը, որ գավառի շունչը տվավ մեզի։ Շնչենք այդ շունչը, մանավանդ դուք երիտասարդներ, շնչեցեք զայն երիտասարդական շունչով մը, որովհետև ան գավառեն կու գա, մեր հայրենի բնավայրեն, որուն արևը քաղցր է, ջուրը անուշահամ, երկինքը վճիտ և օրը կենսատու և պայծառ, և որուն վրա կսավառնի գեղեցկությունը։ Շնչենք այդ գեղեցկությունները»[19]։

Կոմիտաս զարդն էր նաև թեյասեղաններուն զորս Եսայան Սանուց Միությունը կսարքեր ամեն մեկ ասուլիսե հետո, վարժարանի սրահներեն մեկուն մեջ։ Իրականին մեջ այս հանդիպումները ավելի հաճելի սկսած էին դառնալ, քան բուն ասուլիսները։ Անոնք առաջին առիթներն էին Պոլսո հայ մտավորականներուն համար քովքովի գալու, վիճելու և կատակելու, իրարու կենաց խմելու... Թեյի բաժակներով։ Կոմիտաս օր մը դիտել կուտար այդ հանդիպումներեն մեկուն միջոցին թե հոգին եթե տրամադիր է կրնա գինովնալ և թեյով։ Թեքեյան որ միշտ սրամիտ էր և պատրաստաբան՝ ընդմիջեց իսկույն.

— Մինչև Կոմիտասը չերգե, մեր հոգիները գինովնալու տրամադիր չեն...

«Մոկաց Միրզեն» թնդացուց իսկույն սրահը։

Վարուժանին նվիրված ասուլիսին հաջորդող թեյասեղանին էր, որ առիթը ունեցանք Կոմիտասը լսելու արվեստի մասին իր ներբողին մեջ։ Եսայան վարժարանի ուսուցիչները օր. Զապել Նորիկյանի գլխավորությամբ, այդ օրը թամադա առաջարկեր էին Սիմոն Զավարյանը։ Զավարյան համակիր չէր այս ասուլիսներուն, ինչպես օր մը բացե ի բաց հայտնեց «Ազատամարտ»-ի մեջ տպված իր մեկ կծու հոդվածով այս տողերը գրողին և իր գործակիցներուն դեմ, ստիպելով Շավարշ Միսաքյանը, որ անոնց պաշտպանությունն ստանձնե նույն իսկ «Ազատամարտ»-ի մեջ։ Զավարյան իր թամադայութենեն օգտվեցավ գրողներու այս հավաքույթին մեջ գրողները խծբծելու համար, իր խծբծանքը ուղղելով, սակայն, առավելապես անոնց դեմ, որոնք «արվեստը արվեստին համար» կըսեն։ Ու իր թամադայական պատգամը վերջացուց ջերմ գրվատիքովը Թոլսթոյին, որ ժողովուրդին բարիքը միայն կմտածե իր ստեղծագործությանց մեջ և որուն պետք է հետևին ուրեմն բոլորը։

Առաջին «ռեպլիկան» Կոմիտասեն եկավ։ Ան իմաստ չգտավ սահմաններ գծելու արվեստի երկերու միջև։ Ամեն գործ, ըսավ, օգտակար է ժողովուրդին, երբ արվեստագետը չի հեռանար բնութենեն, անկեղծ է իր արտահայտության մեջ, և ունի նաև մտահոգությունը ձևին, երբ կստեղծագործե։ Տգեղ երկերը բարիք չեն բերեր, եթե բարիք ընել ալ ուզեն։

Հետո քանի մը ջերմ խոսքեր ուղղեց Վարուժանի հասցեին, որ ներկա չէր իր ասուլիսին և անոր հաջորդող այս հանդիպումին, ինչպես ներկա չէին ըլլար անոնք, որոնց մասին կխոսվեր։

«Նավասարդ»-ն եղավ մեր հերթական ձեռնարկը։ Տարեգիրքը, զոր կուզեինք պահ մը «Աստեղատուն» անունով լույս ընծայել, մեր ուսին առինք Վարուժանն ու ես։ Տեղը չէ հոս պատմելու ընդունելությունը, զոր «Նավասարդ»-ը գտավ։ Լույս տեսած Մեսրոպյան տառերու ոգեկոչության օրերուն՝ գրական շարժման մը սկիզբը պիտի դառնար ան, եթե հետագա դեպքեր մեզ չկեցնեին մեր թափին մեջ, ինչպես ըրին «Մեհյան»-ին ալ, որ ծնունդ առած նույն խանդավառության օրերուն՝ Կոստան Զարյանի, Հակոբ Օշականի, Գեղամ Բարսեղյանի նախաձեռնությամբ, պիտի ստիպվեր նույնպես կանգ առնել իր խանձարուրին մեջ, աղվոր սկզբնավորութենե մը հետո։

Կոմիտաս մեկն էր «Նավասարդ»-ի առթիվ ևս մեզ խրախուսողներեն, և առաջիններեն, որ իր աշխատակցությունը խոստացավ մեզի։ Եթե չճանչցաք դուք Կոմիտասը, իր բծախնդրությունը, իր տատամսումները հրապարակ իջնելե առաջ, պիտի չկրնաք ըմբռնել ուրեմն չարչարանքը, զոր ես կրեցի մինչև որ կրցա գրել տալ իրեն «Լոռու գութաներգը»։ Տառապանք մը եղավ ինծի համար ամեն օր իր դուռը ծեծել՝ հարցնելու, թե ե՞րբ պատրաստ կըլլա հոդվածը։ Ան միշտ կհամառեր երկար խոկալ իր մշակման վրա, որովհետև առաջին անգամ էր, որ պիտի ներկայանար տեսական լրիվ նյութով մը, մինչև մենք՝ Վարուժան և ես, անհամբեր էինք «Նավասարդ»-ը հրապարակ հանել Մեծ Հոբելյանեն առաջ։ Վերջին պահուն էր միայն, որ

---

19 «Գրական ասուլիսներ», Դ, Ռուբեն Զարդարյանի «Ցայգալույս»-ը, Կ. Պոլիս, 1913, էջ 37—38 (Կոմիտասի փակման խոսքը նոթագրված է այս տողերը գրողին կողմե, որ կխմբագրեր ամեն մեկ գրական ասուլիսե հետո լույս տեսնող գրքույկը, սակայն Կոմիտաս տպվելե առաջ տեսած է զայն)։

Կոմիտաս իր հոդվածը մեզ հանձնեց, և «Նավասարդ» հպարտ պետք է սեպե զինքը, որ այս երաժշտության նման թանկագին էջ մը պարգևեց։

***

Տարին պիտի փակեինք տոներուն ամենեն շքեղովը։

Տոնական տարի հռչակված էր 1912 հոկտեմբեր—1913 հոկտեմբերը։ Ամբողջ տարին պետք է ան տոնվեր հայաշատ բոլոր քաղաքներուն մեջ, ու 1913 հոկտեմբեր 13-ին փակվեր փառաշուք կերպով։ Պոլիս սակայն քնացեր էր բովանդակ տարին, ու դեռ կքնանար, մինչև հոկտեմբերը կմոտենար արագ-արագ, և որևէ պատրաստություն չկար պատվով դիմավորելու համար զայն։ Ազգային իշխանությունները ոչ իսկ այդ մասին մտածած ունեին դեռ։

Թաղային միություններուն կմնար տեր կանգնիլ տոնին։ Նախաձեռնությունն առինք Տիգրան Չեոկյուրյանն ու ես, ան՝ կռվան առած Պերպերյան վարժարանը, ես՝ կռնակս տված Եսայան Սանուց Միության։ Անոնց անունով ժողովի կանչեցինք, կեդրոնական վարժարանի դասարաններեն մեկուն մեջ, մեկ-մեկ ներկայացուցիչ Պոլսո թաղային միություններեն, ու հիմա, ավելի ևս զորացած, վճռեցինք շարժման անցնիլ։

Չեոկյուրյանին հետ Կոմիտասին վազեցինք։ Ան միայն կրնար տոնը փառաշուք ընել։ Խոստացավ, ու իրավ ալ փառաշուք ըրավ տոնը։

Իր մասին հուշեր գրողներ, և անոնցմե առնելով իր կենսագրությունը հորինողներ ալ այնպես ցույց կու տան, որ իբր թե Կոմիտասն ըլլա Տառերու Գյուտի տոները սարքող։ Կոմիտաս պաշտոնական ոչ մեկ դեր ունեցավ անոնց կազմակերպման մեջ։ Անոր դերը շատ ավելի շքեղ էր։ Ան տոներուն ուղղակի հոգին եղավ։ Եվ արդարև առանց Կոմիտասին տոները պիտի չունենային բացառիկ այն փայլը, զոր ունեցան իրապես։

Ան իսկույն լծվեցավ գործի, և իր առաջին հոգն ըրավ դաշնակել «Ով մեծասքանչ դու լեզու»-ն։ Հետո սկսավ «Գուսանս» երգչախումբը մարզել, համերգի մը համար, զոր պիտի սարքեր Եսայան Սանուց Միությունը հոկտ. 13-ի կիրակին, Փըթի-Շանի մեջ։

Մինչ այս, մինչ այն Ազգային իշխանությունները ևս արթնցան, և տեր կանգնեցան տոնին։ Պաշտոնապես պիտի տոնվեր ուրեմն Մեծ Հոբելյանը, որ իր մեջ կմիացներ 1500-ամյակը հայ տառերու գյուտին, և հայ տպագրության 400-ամյակը, հոբելյան, որ տոնվեցավ այնպիսի շքեղությամբ, որպիսին Պոլիս չէր արձանագրած երբեք իր տարեգրության մեջ։

Տոները բացվեցան հանդիսավոր այն նիստով, որ 1913 հոկտ. 11-ին ի մի գումարեց երեք հայ տարանվանությանց երեսփոխանական ժողովները՝ հայ ժողովուրդի հոգեկան միությունը հռչակելու համար համազգային այս տոնին առթիվ։ Առաջին սփոփարար դեպքն էր՝ երեք հայ դավանանքներու հանդիսավոր այս համախմբումը հորմե հետե մրրիկ մը ճեղքեր էր հայ ժողովուրդը ներսեն։ Նման հանդիսավոր նիստեր մեկ ալ Ջինադադարին պիտի ունենայինք՝ մեծ աղետեն հետո պահ մը կրկին եղբայրացած։

Հաջորդ օրը, հոկտեմբեր 12, Տոն Թարգմանչաց, հանդիսավոր պատարագ տեղի ունեցավ Մայր Եկեղեցվո մեջ։ Կոմիտաս և Շահմուրադյան մասնակցեցան երգեցողության՝ կրկնապես հանդիսավոր դարձնելով օրը։ Պատարագը Ղալաթիո Դպրաց Դասն էր, որ երգեց Կոմիտաս վարդապետի ղեկավարությամբ։

Ժամվան մը դադարե հետո Մայր Եկեղեցվո մեջ տեղի պիտի ունենար պաշտոնական տոնախմբությունը։ Հրավիրված էին օտար հյուրեր ալ, ինչպես Թուրք կառավարության անդամները և ներկայացուցիչներ բոլոր հայ կազմակերպություններեն։ Աննկարագրելի էր խանդավառությունը, որ կտիրեր եկեղեցվո մեջ ու շուրջը, ու շրջակա փողոցներուն մեջ ալ։ Հյուրերը բազմության մեջեն հազիվ ճամփա կգտնեին պահարանի դռնեն ներս սպրդելու համար։ Երեք հայ տարանվանությանց կողմե ճառեր ըրին դոկտ. Վ. Թորգոմյան, Գրիգոր Ասլյան և վերապատվելի Ա. Շմավոնյան, իսկ պրոֆ. Աբրահամ Տեր-Հակոբյան, Ազգային ժողովի ատենապետը, որ պիտի նախագահեր հանդեսին, չէր կրցած եկեղեցիեն մտնել ներս։ Թուրքերեն խոսեցավ Ստեփան Կուրտիկյան։ Հանուն կառավարության խոսք առավ Թալեաթ Բեյ։ Հայ ժողովուրդի դահիճը հայության փաղաքուշ խոսքեր ուղղած այդ պահուն, ո՛վ գիտե ինչ կզգար հոգվով։ Նախանձն ու ոխը հավանաբար զայն կշարշարեին այդ պահուն։ Կոստան Զարյան հատված մը արտասանեց Սիամանթոյի զմայլելի «Սուրբ Մեսրոպ»-են, զոր մեծ բանաստեղծը հորինել էր տոներուն առթիվ։ «Գուսանս» երգչախումբն էր սակայն, որ Կոմիտաս վարդապետի ղեկավարությունը, ավելի ևս պաշտելի պիտի դարձներ տոնը իր «Մեծասքանչ»-ով և ուրիշ երգերով։

Ժողովրդական հանդեսները պիտի սկսեին շաբաթ գիշերվընե, Փըթի-Շանի մեջ սարքված երեկույթով մը, զոր կազմակերպած էին դաշնակցական և հնչակյան ուսանողա-

կան միությունները։ Հանդեսին նախագահեց և բացման խոսքն ըրավ ինքը՝ Կոմիտաս վարդապետ, որ մեներգեց նաև հանդեսին ընթացքին։ Օրվան բանախոսներն եղան է. Ակնունի և դոկտ. Պեննե, որոնք տոնը փառաբանեցին, իբրև մեծագույն դեպքերեն մեկը հայոց պատմության։ Երկու տարի չանցած Ակնունի պիտի հոշոտվեր Միջագետքի անապատներուն մեջ, իսկ Պեննե կախաղան պիտի բարձրանար Պոլիս, Բայազեդի հրապարակին վրա։ Հանդեսը գեղարվեստական բաժին ալ ուներ, որուն մաս առին Սինանյան եղբայրներ, օր. Աղավնի Մեսրոպյան և Թորգոմ Պեզազյան։

Գեղարվեստական հանդեսներուն գեղեցկագույնը հաջորդ, կիրակի օրվան, վերապահված էր։

Բայց նախքան այդ...

Կիրակի առտու կանուխ ոստիկան մը կներկայանա տունը։ Զիս Կալաթա-Սերայի պահականոցը կկանչեն։ Հազար կասկածի կերթա միտքս, մինչև պահականոց կհասնեմ։ Հոն միայն կիմանամ, թե կանչած են զիս բացատրություն ուզելու «դավաճանական դեպքի» մը համար, որ տեղի ունեցած էր նախընթաց գիշերը։ Շաբաթ գիշերվան հանդեսը թեև կազմակերպված դաշնակցական և հնչակյան ուսանողական Միության նախաձեռնությամբ, ոստիկանությունը զիս պատասխանատու կսեպեր «խռովարար փորձին» համար, որովհետև Բերայի բոլոր հանդեսներուն արտոնությունը իմ անունովս առնված էր։ Քիչ մնաց ոստիկանատուն պիտի բերեին Կոմիտասն ալ՝ գիշերվան հանդեսին նախագահած ըլլալուն համար։ Ինչ էր սակայն պատահած դեպքը։ Վահան Զարդարյան, ծանոթ գրավաճառը հանդեսի պահուն մոգական լապտերով ցույց տված էր գրերու գյուտին հետ առնչություն ունեցող կարգ մը պատմական դեմքեր, որոնց կարգին Վռամշապուհ թագավորն ալ, և այս արդեն ոճիր էր...։ Հազիվ կհրաժարին Կոմիտաս վարդապետը ձերբակալել բերելու միտքեն, ու դժվարավ կրնամ օձիկս ազատել ես ալ՝ պատրվակելով, որ պետք է անհապաղ Փըթի-Շան գտնվիմ ցորեկվան հանդեսին պատրաստության համար։ Այնուամենայնիվ վար կդնեն երկու ուսանողական միության վարիչները, զորս հազիվ հաջորդ օրը կարձակեն բազմաթիվ միջամտություններե հետո։

Կիրակի ցերեկույթը, Եսայան Սանուց Միության կողմե կազմակերպված, արվեստի փառատոն մը եղավ։ Կնախագահեր Ռուբեն Զարդարյան։ Հանդեսը բացվեցավ «Նմանեալ Մովսեսի» շարականով, զոր դաշնակած էր Կոմիտաս, և զոր երգեց «Գուսան» երգչախումբը իր ամենեն լրիվ կազմով։ Երգչախումբը հանդեսին ընթացքին պիտի երգեր նաև «Տէր կեցո», «Ով մեծասքանչ դու լեզու», «Ես լսեցի մի անուշ ձայն»։

Օրվան բանախոսներն էին Դանիել Վարուժանը և Գ. Խաժակ։ Կոստան Զարյան հատված մը արտասանեց Սիամանթոյի «Սուրբ Մեսրոպ»-են, ջերմ մթնոլորտ մը ստեղծելով իր կարգին, և երբ արտասանությունը լմնցուց՝ Կոմիտաս վարդապետ բեմ հրավիրեց Սիամանթոն, որ կերևեր քովնտի օթյակե մը, և զոր սրահը ողջունեց ջերմագին։ Գեղարվեստական հայտագրին մասնակցեցան նաև Սինանյան եղբայրները, և Մ. Ջանան, որ արտասանեց Ցոպանյանի «Գեղոն հայ լեզվի»-ն։ Դերասան Ադյան կենդանի պատկերներ պատրաստած էր երկու հանդեսներուն ալ։

Պոլսո բոլոր թաղերը հանդեսներով ու ճառերով թնդացին այդ կիրակի օրը՝ ցորեկին թե գիշերը։ Թաքսիմի պարտեզին մեջ խոսեցան պրոֆ. Հակոբոս Ճեճիզյան, Գրիգոր Մալխաս և Թեոդիկ, իսկ թուրքերեն՝ Ստեփան Կուրտիկյան, Բերայի կառավարիչ Քիանի Բեյ, և Ջեմալ Բեյ, հայոց ուրիշ մեկ թշնամին։ Գատըգյուղի մեջ խոսք առին Եղիշե արք[illegible] Դուրյան, Գրիգոր Զոհրապ և Արշակ Ալպ[illegible]ճյան, Պեշիկթաշի մեջ՝ Դանիել Վարուժան, Ռուբեն Զարդարյան, Միհրան Թապաքյան և նաև Մեհմեդ Էմին Բեյ, որ դեռ բարեկամ կձևանար հայերուն, Սկյուտարի մեջ՝ Հ. Մրմրյան, Տիգրան Ջեոկետյան, Տիրան Ցրաքյան և Շահան Պերպերյան, Գընալըի մեջ՝ Հմայեակ Խոսրովյան և Արշակ Ալպոյաճյան, Ռոբերթ քոլեջի մեջ՝ պրոֆ. Աբրահամ Տեր-Հակոբյան և Հովհ. Հակոբյան, ու Շահզադե Բաշըի մեջ՝ պրոֆ. Ա. Խաչատրյան։

Պոլիս այդ օրերուն շարժման մեջ դրած էր իր բովանդակ մտավորականությունը ի փառս Մեսրոպին ու Մեղապարտ Հակոբին, իսկ բովանդակ հայությունը կցնծար արբեցությամբ և հպարտությամբ մինչ ով գիտե ինչ թշնամանքով ու ինչ թունավոր նախանձով կդիտեին մեզ մեր հարևանները։ Եվ դեռ, հայոց պատրիարքարանի խառն ժողովի որոշմամբ, դանց առնվեցան, պաշարման վիճակը նկատի ունենալով, ժողովրդական թափորը Գումգափուեն դեպի Բերա, և գիշերվան ջահագնացությունը, որոնք նախատեսված էին իբրև հանդիսության մաս։

Հայ ժողովուրդը, երկու տարի չանցած, պիտի պատժվեր, որովհետև շատ մեծ էր եղեր հոգվով, և շատ փառած իր հոգեկան հարստությանց ու իր ավանդություններուն...

***

Գրեթե կես դար հետո երբոր կգրեմ ես այս տողերը, խանդավառության, վերացման, հոգեկան կազդույրի օրեր կապրի նորեն հայ ժողովուրդը։ Դարձյալ կտոնվի Մեսրոպ Մաշտոցը։ Նույն տոնն է, նույն մեծարանքը, բայց որքա՜ն տարբեր պայմաններու մեջ։ Երեկ սփոփանքի պահ մըն էր ան հայ ժողովուրդին համար, անուշ ովասիս մը՝ լույսին, կյանքին ետևեն անոր խոլ վազքին մեջ։ Երախտագիտության տուրքն էր հայ ժողովուրդին դեպի շքեղ այն դեմքը, որ գիր ու լույս էր տվեր իրեն և ուխտ մը՝ հավատարիմ մնալու մեծ պատգամներուն, զորս դարերը կբերեին մեզ, մինչև դային սպասված օրերը։ Այդ օրերը եկան, ու մեր կարծածեն ավելի արագ։ Բայց եկան սարսափներու ծոցեն անցընելով հայ ժողովուրդը։

Հիմա դարձյալ Մեսրոպ Մաշտոցը կտոնեն։ Բայց այս անգամ հայրենի հողին վրա։ Երախտագիտության տուրք մըն է դարձյալ այս տոնը անմահ այն մարդուն հանդեպ, որ մեզ դիմացուց դարերուն ու սարսափներուն, և ուխտ մը դարձյալ՝ կանգ չառնելու դեպի լույսը մեր գրոհին մեջ։

Օրացույցիս կնայիմ։ 1962 մայիս 26։ Երևանի մեջ կտոնեն Մեսրոպ Մաշտոցն այս պահուս։ Վար կդնեմ պահ մը գրիչս։ Վայրկյան մըն է, երբ մարդ պետք է խոնարհի դարերուն առջև, որոնք մաքառեցան, տքնեցան, ստեղծեցին մեզ համար։ Որոնք արյան ծովերեն անցան ու չվհատեցան։ Որոնք հեգնեցին աշխարհի բոլոր փորձությունները, բոլոր խութերը իրենց ճամփուն վրա։ Որոնք մեզ Մաշտոցը տվին ու Կոմիտասը։

Ամփոփման ի՜նչ քաղցր վայրկյան։ Կփակեմ պահ մը աչքերս, որպեսզի այն օրերը անգամ մը ևս վերապրեմ հիմա։ Ցնծությունը. որ մեզ վարակեց բոլորս այն ատեն, ու դարերը, որ հանկարծ խլրտեցան մեր ներսը։ Աշխարհը, որ զարմացած մեզի կնայեր, տեսնելով ժողովուրդ մը այնքան ջերմ փարած իր հոգեկան գանձերուն, ու թշնամին, որ կարմրեր էր ամոթեն ու նախանձեն, որ մեզ կժպտեր, բայց ցասումեն կդողար։

Կտողանցեն այս կարգավ մտքիս առջևեն, ա՜հ, ինչքա՜ն սիրելի դեմքեր, որոնք տոնական այն օրերը ապրեցան մեզ հետ,— Սիամանթոն ու Վարուժանը, Զոհրապն ու Զարդարյանը, Սևակն ու Չեոկյուրյանը, Կյուրճյանն ու Երուխանը, ու ամբողջ հույլը նվիրյալներուն, մեծ ու պզտիկ, ու անզուգական մեր Կոմիտասը, որ կկոթողանար անոնց բոլորին մեջ։

Իզուր կփորձեմ աչքերս բանալ. մտածումս թևեր առած կթռչի։ Կանցնի զիս արյան գետերու մեջեն, դիակներու կույտեր կհանե դեմս, ու կկեցնե զիս տեղ-տեղ ու կխաչակնքե երկյուղած։ Մոխիրներու կույտին ու որբերու արցունքին մեջեն ափ կհանե զիս, դարձյալ կլեցնե հոգիս հույսով ու արբեցությամբ, ցնորքներ կբոնկցնե մեջս ու կմարե շուտ մը ու մեկեն կնետե անծանոթ ափ մը։

Եվ ահա, հանկարծ, Երևան ենք։ Կտոնենք Մեսրոպ Մաշտոցը։ Դարերը ծունկ են չոքեր մարդու մը առջև, որ հայ ժողովուրդին բացեր էր լույսի մեծ ճամփան, ջահեր վառելով անոր ոտք կոխած տեղը։

Երևանը կխայտա, ու անոր հետ բովանդակ հայ ժողովուրդը։ Դարերը, իրենց գերեզմանեն ելած, կհամբուրվեն ցնծությամբ։ Կողջագուրվեն ողջերն ու մեռելները։ Ահա հոն են բոլորը հին ու հոն՝ բոլոր մեր փառքերը։ Եկեր են անգամ մը ևս տոնելու Մեսրոպ Մաշտոցը։

Սիամանթոն է ահա, որ Մաշտոցի արձանին դեմը հպարտ ցցած հասակը՝ կաղաղակե խանդաբորբ.

Մեսրոպ, հայ դարերուն դիմաց կեցող
Դուն ադամանդյա ապառաժ...
... Դուն բարբառի արարիչ, բանի իշխան,
Դուն անբավ բավիղ տևողության...
Դուն անվանելի ցորյանի դաշտ, դուն ծրի
հաց.
Դուն հունձք հարուստ, և դուն հնձան
հրաշէկ...

Վարուժանն ահա, որ միտքած իր հոգին ծոցը դարերուն և հին ավանդության, կհնչեցնե քնարին վրա.

Զի մենք հանուն սերին, սերմին
Քու հին ցեղիդ մարմարենե կույս.
Մենք, զավակներդ օգոստափառ,
պիտի կերտենք նոր արշալույս...

Եվ ահա Կոմիտասը ինքն է անուշ, ինչպես «Անտունի»-ն մեզ երգած պահուն, շքեղ ինչպես երբ մեզ կորոտար «Մոկաց Միրզեն», կու գա համբաքայլ, լուռ ու խոհուն, ու կողջագուրվի Մեսրոպ Մաշտոցին հետ։
Ու Մասիսը կժպտի հեռուն...

## VIII.— Նոր սերունդին հետ

Բայց Կոմիտաս նոր սերունդին եղավ առավելապես։ Անոր վրա էր դրած իր բովանդակ հույսը, և անով էր որ կոգեորվեր միշտ։

Ռուբեն Զարդարյանի նվիրած մեր ասուլիսին, ան սապես կսկսեր իր փակման խոսքը.

«Ահա երիտասարդությունը որ մեր առջին է։ Ահա չորրորդ անգամն է որ ան խուռներամ կվազե հոս՝ իր գրականությամբն ու գեղարվեստովն հետաքրքրվելու և խանդա-

վառվելու համար, մինչ մենք... ծերացածներս, Զարդարյանի նկարագրած գամփռին նման քոսոտած, փողոցի տղոց քար նետելուն կսպասենք շարժելու համար։ Մինչ երիտասարդությունը,— որ կյանք ու արև կսիրե,— կվազե կերթա հոն ուր գեղարվեստը կփառաբանվի։ Ու գեղարվեստը արդեն ազգի մը արեն ու կենսունակության ջիղը չէ՞ միթե»[20]։

Գրականության և արվեստներու հանդեպ երիտասարդության ցույց տված ոգևորությունը չէր միայն որ կխանդավառեր զինքը, այլ ամեն շարժում որ երիտասարդությունը կկապեր իրեն։ Մարզական շարժումը, օրինակ, մեկն էր անոնցմե որոնց փրկարար դերին հավատացած էր Կոմիտաս։

Ինչպես հայտնի է՝ հայ մարզական շարժումը ես խանդավառ օրեր ապրեցավ հուրրիեթի տարիներուն։ Համիդի ամբողջ շրջանին՝ հայ երատասարդությունը սպորտեն հեռու էր ապրեր, եթե չհաշվենք Պոլսո և գավառի ամերիկյան քոլեճները հաճախող հայ աշակերտները որոնք բախտավոր էին եղեր, և մեկ ալ կեդրոնական տղաքը որոնք ունեին ֆութպոլի իրենց համեստ խումբը։

Սահմանադրությունը սակայն բռնկցուց իսկույն հայ պատանեկությունը։ Պոլսո բոլոր թաղերուն և գավառական կեդրոններուն մեջ վայրկյանին բուսան ֆութպոլի խումբերը։ Սանձված ոգևորությունը ավելի ևս թափ ստացավ երբ 1911 հունվարին սկսավ լույս տեսնել հայ առաջին մարզական թերթը «Մարմնամարզ»-ը, Շավարշ Քրիսյանի խմբագրությամբ, ու նույն տարվան մայիս 1-ին սարքվեցավ «Հայկական առաջին ողիմպիականն»-ը Գատըգյուղի Յունիոն Քլյուպի մարզադաշտին վրա։

Անշուշտ կծիծաղի հիմա ընթերցողը հանդուգն տիտղոսին համար զոր տվեր էինք այն ատեն ատլետիկ այդ համեստ մրցումներուն, և այն ոգևորության վրա զոր պարգևեր էին մեր տղոց շահած նույնքան համեստ մրցանիշերը։ Բայց միտք բերեք շրջանը, երբ հայ ժողովուրդը կապանքներե նոր ազատած, բռնկած էր հույսերով և գինովությամբ, ու երիտասարդություն մը կար արդեն որ կվազեր սանձարձակ անհնարին երազներու ետևեն։ Ո՞վ կրցավ իր հուզումը զսպել այդ օրը երբ հայ մարզիկները իրենց առաջին տողանցքն ըրին զույգ մը ֆանֆառ առջևնուն, և երբ օրվան թագուհին մեդալ կկախեր օրվան հաղթանակներուն կուրծքեն։

Հայկական Գ. ողիմպիականը պահ մը շեղեցավ ընդունված կարգեն։ «Օրվան թագուհի»-ի տեղ ուզեց ունենալ «Օրվան նախագահ» մը։ Բոլորին մտածումը Կոմիտասին գացեր էր իսկույն։ Երիտասարդության կուռքն էր ան այդ տարիներուն. և միայն ան կրնար հովանավորել հայ երիտասարդության տոնը։ Երբ Շավարշ Քրիսյանի, Գրիգոր Հակոբյանի և ժիրայր Խորասանճյանի հետ մեկտեղ գացինք առաջարկելու իրեն «Օրվան նախագահ»-ն ըլլալ, Կոմիտաս հրճվանքեն խայտաց, և հայ երիտասարդության այդ օրվան տոնը՝ տոնական օր մը եղավ և իրեն համար։ Մանկական ոգևորությամբ ան հետևեցավ մրցումներուն, և ցնծության պահ մըն էր երբ մեդալները կդետեղեր օրվան հաղթականներուն կուրծքին։

## IX.— «Ռուս քեռին»

Հուրրիեթի չորս տարիները հուսախաբ ըրած էին հայ ժողովուրդը։ Հայ և թուրք եղբայրությունը լղրճված էր իր մեղրալուսինին մեջ իսկ. Ադանայի կոտորածը, 1909 մարտ 31-ին և հաջորդող օրերուն, եկած էր խորտակել հայկական միամտությունը։ Հայ ժողովուրդը, մեկեն արթնացած իր գինովություններեն, շվարած էր պահ մը։

«Երիտասարդ թուրքեր»-ու մենատիրությունը հաջորդեր էր համիդյան բռնակալության։ Ոչ թուրքը խորթ զավակ կնկատվեր միշտ երկրին։ «Օսմանցի»-ությունը, որուն նշանաբանով իշխանության գլուխ էին եկեր «Երիտասարդ թուրքեր»-ը, փլեր էր խավաքարտե աշտարակի մը պես, և դժգոհության ալիքը կտարածվեր տակավ բաղկացուցիչ բոլոր ոչ թուրք տարրերու ծոցին մեջ։ Քրիստոնյաներուն հետ մեկտեղ թուրքին դեմ լարված էին ոչ թուրք իսլամներն ալ, մանավանդ արաբն ու ալբանացին, և կորոնեին արդեն թուրք լուծը թոթվելու ճամփան։

Հայը, դարավոր ռայյան, որ ամենեն շատ խանդավառվեր էր օսմանցիությամբ և ամենեն շատ հուսախաբ եղեր, չէր կրնար ավելի երկար իր ճակատագիրը վստահել թուրքին բարյացակամությանը։ Համաթրքության ցնորքը՝ զոր որդեգրեր էին «Երիտասարդ թուրքեր»-ը՝ չէր կրնար, իր կարգին, բացառապես չմտահոգել հայը, որ թուրքիո բաղկացուցիչ տարրերեն գրեթե միակն էր Թուրան տանող ճամփուն վրա։

«Թուրք օճաղի»-ն, որ կհիմնվեր 1912 մարտ 26-ին՝ իր անմեղունակ կերպարանքին մեջ, Թուրանի ճամփան կբանար, անոր պատրաստելով թուրք երիտասարդությունը։

Մյուս կողմե վրդովիչ լուրեր կհասնեին հայկական գավառներեն։ Համիդի օրերը ի նորս կենդանացեր էին հայկական շրջաննե-

---

[20] «Գրական ասուլիսներ», Գ. Ռուբեն Զարդարյանի «Ռայգալոյս»-ը, Կ. Պոլիս, 1919, էջ 36։

րու մէջ։ Պատրիարքարանը կողոզվեր արտաճրմլիկ տեղեկագիրներով և իր կարգին իր թաքրիրներով կռմբակոծեր Բարձրագույն Դուռը, առանց դույզն արդյունքի։

Այլևս թմրած մնալ հնարավոր չէր։ Հայ ժողովուրդը ստիպվեցավ սեղան բերել իր դատը, և անգամ մը ևս երթալ բախել քաղաքակիրթ աշխարհի խղճմտանքին, որպեսզի նոր աղետ մը խնայվի անպաշտպան այս ժողովուրդին։

Այս պայմաններուն տակ էր որ վերստին արծարծվեցավ հայկական բարենորոգումներու խնդիրը։ Ժողովուրդը մեկ մարդու պես փարվեցավ իր դատին։ Ձեռք-ձեռքի տվին հեղափոխականն ու պահպանողականը, համազգային ընդհանուր ոգևորության մը մեջ։ Պոլիս իր ցավը արձագանք կու տար Ազգ. Երեսփ. ժողովի բեմեն, իսկ Մայր Աթոռը ազգային պատվիրակություն մը կստեղծեր Փարիզի մեջ՝ հայկական դատը հետապնդելու համար Մեծ պետությանց մոտ։ Ու մինչ Բալկանյան պատերազմը կու գար, ճիշտ այդ օրերուն, ազատագրել քրիստոնյա ժողովուրդները եվրոպական Թուրքիո մեջ, վեց Մեծ պետությանց Պոլսո դեսպանները նիստ-նիստի վրա կընեին բարեկարգությամբ օժտելու համար Թուրքիո հայաբնակ շրջանները։

Հույսը, խանդավառությունը վարակեր էին այդ պահուն բովանդակ հայ մտավորականությունը։ Այդ ընդհանուր ոգևորութենեն վարակված էր նաև Կոմիտաս։ Իր հրճվանքը կրխեր մանավանդ անկե, որ վեց Մեծ պետություններեն առավելապես ռուսն էր զորավիգը բարենորոգումներու նոր ծրագրին։

1912 դեկտեմբեր 25-ին, ճիշտ այն օրերուն, երբ Պոլսո Ազգ. ժողովը պաշտոնապես կորդեգրեր հայկական հարցը, Կոմիտաս կգրեր Արշակ Չոպանյանին.

«Ինձ այնպես է թվում, թե մենք մինչև նվազագույնով առաջին և դրական քայլը չընենք, երբեք չենք կարող երկրորդի մասին մտածել կամ մեծամեծս ձգտել։ Արդ, մեր երկիրն սկզբեն եղել է կռվախնձոր արշավող և շրջակա հզոր պետությանց աշխարհակալության ճանապարհի վրա և պահել է ցարդ նույն վիճակը։ Մենք այժմ իրապես ռուսաց շահի առարկան ենք. մեր երկիրն արդեն որոշված է, այսօր կամ վաղը ռուս պետության բաժին դառնալու։ Ուրեմն պիտի ձգտենք մեզ ազատագրել երկու կերպ, թեպետ և երկուքի վերջակետն էլ նույնն է, տարբեր ուղիով միասին։ Առաջինն է առավելագույնը՝ ինքնուրույն ու անկախ լինելով իբր պատվար ցցվել ռուս դիվանագիտության առջև, և երկրորդը՝ նվազագույնը՝ ապավինե։ Քեռի Ռուսին և միաձույլ հայության առ՝մանել։ Երկուքն էլ նույն է. բայց երկրորդն իրագործելի՝ շահերի նույնության վրա հենվելով, իսկ առաջինը անիրագործելի։ Ռուս կառավարությունը ծայրագույն արևելքն տուժեց, ուրեմն ընդարձակման ճանապարհը այս կողմը մնաց. արդեն Պարսկաստանը բաժանված է իրապես Անգլիո և Ռուսիո միջև. այսպես հայերը պարսկական լծեն պիտի ազատվեն և միանան ռուսահայոց և փոխադարձաբար ուժովնան. արդ հերթն եկել է մեզ՝ տաճկահայերիս։ Ես չեմ կարող մտքես անցնել, որ ռուս կառավարությունը իր շահերը զոհե մեզ. մի նա չէ՞ կարող թույլ տալ, որ այս բաժինն ավելի լավ վիճակ ունենա, քան իր երկրի հայերը. ուրեմն միշտ ձգտելու է պահել մեզ (եթե իրան չմիանանք) իրան կարոտ վիճակի մեջ, որպեսզի ապագա գրավման ձեռնտու տարր հանդիսանանք. արդեն մեր մեծ ջարդերն ապացույց են ասածներիս։ Ռուս թերթերն էլ միշտ այս կետն է, որ շարունակ շեշտում են, թե մեր փրկությունը կոչելու և կոփելու ենք Փե[թե]րբուրգի պարիսպներու դռներուն առաջ. այս էր պնդել ժամանակին Լոռիս Մելիքով Գևորգ Դ. կաթողիկոսին զգուշացնելով (երբ սա ռուս տաճկական պատերազմի ժամանակ, փրկությունը տեսնելով ու հուսալով տաճիկներեն, գրեթե բացարձակապես սպասելիս է եղել տաճիկներին էջմիածնի մեջ)։ Արդեն քաջ գիտես, որ Անգլիո, Ֆրանսիո և Ռուսիո միության գլխավոր նպատակն էլ այս էր։ Ուրեմն չիք փրկություն արտաքո Ռուսիո։ Պետք է նախ բոլոր հայերը խմբվեն մեկ տերության, մեկ օրենքի տակ, աճեն ու զարգանան բարոյապես ու նյութապես և ապա ժամանակն ինքն է, որ պիտի բերե մեզ մեծ ազատությունը. շտապելով, առաջինը չարած երկրորդ քայլի դիմելով բոլորովին պիտի կորչենք. տաճիկեն ոչ մի հույս մի ունենաք, մի՛ սպասեք. նորա ուղեղը քարեժայռից է, զարգացման անընդունակ, լոկ փշրվելու համար պիտանի և ռաքի տակը սայահատության համար։

Չպետք է բաժանվենք, չպետք է խաբվենք Եվրոպայի զանազան խոստումնալից խարկանքներեն, միանալու ենք և գործնական ճամփան բռնելու. ըստ իս, առաջին քայլն է բոլոր հայության ամփոփել ռուսի իշխանության տակ. երկրորդ քայլն է տնտեսապես և բարոյապես, զուտ ազգային, առանց օտարեն ու մեզ անմարս գաղափարներով առաջնորդվելու՝ զարգանալ. երրորդ քայլն արդեն ինքը ռուս հեղափոխությունն է, որ պիտի անե, ոչ թե մենք. իսկ մենք ազգվելու ենք այդ քայլեն, սակայն պատրաստվելով, լեհերու պես զուտ ազգային շավիղը բռնելով. եվրոպական մարդկային գաղափարները որ-

*քան որ ընտիր են ու փափագելի, բայց մեզ անպետք են. պաղ երկրի բույսերը մեր չերմ արևի տակ կկիզվեն։*

*Ես վախ չունիմ, թե ռուս կառավարության մեջ կհալենք, որքան ալ որ հալինք, այնուամենայնիվ մեր ինքնագիտակցությունը զարթնած է և եթե խելոք շարժվենք՝ կվաստըկենք. ես այս կարծիքն ունեմ»*[21]։

*Կոմիտաս եւ բացառիկ շահագրգռությամբ կհետեւեր բանակցություններուն զորս Մեծ պետությունները կընեին ինքն իրենց միջև և Բարձրագույն Դրան հետ, և իրեն համար ալ տոնական օր մըն էր երբ թերթերը ավետեցին թե 1914 փետր. 8-ին հայկական բարենորոգմանց մասին համաձայնություն մը կնքված է Ռուսիո և Թուրքիո միջև։ Կոմիտաս հավատք ունեւր ռուս ժողովրդին վրա և հայուն փրկությունը անկե կսպասեր։*

*Պրոֆ. Հայկ Արամյանը կպատմե իր մեկ այցը Կոմիտասին, 1914 օգոստոս 28-ին, Բանկալթիի անոր բնակարանին մեջ։ Հոդվածագիրը Պոլսեն անցնելով Բեռլին կերթար ուսանելու և չուզեր Պոլիսը թողուլ առանց Կոմիտասին այց մը տված ըլլա։ Վարդապետը դայն կընդունի հաճույքով, և իմանալով որ իր խոսակիցը Զեյթունեն է՝ կփափագի լսել Ուլնիո շրջանի երգերը։ Միշտ այդ պահուն սվարը փողոցին հայ լրագրավաճառ մը պոռաց.—*Ռուսերը ջախջախած են Ավստրիական բանակը և գրաված Լեմբերգը: *Պատուհանի փեղկերը բանալ, վեր կանչել, թերթը առնել մեկ եղավ։ Երաժիշտ Կոմիտասը մեկեն դարձավ քաղաքագետ-ռազմագետ։ Այնքա՞ն խանդավառված էր այս լուրով. այդ վայրկյանին ուշի ուշով դիտեցի իր Ներքակազմ հասակին, պարզ և արտահայտիչ աչքերուն հմայքը։ Անհագ կլափեր հուսատու լուրեր։ Ինձ դառնալով կարծես հայ ազգին բնածին հույսերու և հույզերու այդ պահուն թարգման եղավ, հայտնելով որ շատ կըպարտվին կեդրոնական տերությունք, Թուրքիան ստիպյալ անձնատուր կըլլա, Կ. Պոլիսը կդառնա միջազգային ազատ քաղաք, հայերս կմտնենք ռուս մեծ ազգի պաշտպանության տակ։ Եվ որքա՞ն կհրճվեր այն հեռապատկերով, որ ինք այդպիսի վոսփորյան միջազգային ոստանին մեջ կհիմնե հայկական երաժըշտանոց, Բեռլինի իր ուսած կոնսերվատորիայի կազմակերպության հիման վրա»*[22]։

*... Որուն մտքեն կանցներ այն ատեն, թե այլապես պիտի դասավորվեին դեպքերը, թե Թուրքիա կովի պիտի մտներ Գերմանիո կողքին, պիտի ձմռթկեր բարենորոգումներու թուղթը. և Թուրան հասնելու իր ցնորքին անձնատուր՝ պիտի ամայացներ հայկական նահանգները։*

## X.— Վերջին ելույթները Պոլսո մեջ

*1914 տարվան առաջին ամիսները ոգեորության նոր շրջան մը եղան Կոմիտասի համար։ Մեսրոպյան տոներուն ստեղծած խանդավառությունը դեռ կհամենար հոգիներու մեջ, իսկ հույսերը, զորս եկեր էր արծարծելու հայկական դատին հաջող ընթացքը՝ կկրկնապատկեր զայն։*

*Կոմիտաս անձնատուր էր ինքն ալ այդ ոգեորության։ Բայց այդ ոգեորության վրա կավելնլար խանդավառության ուրիշ առիթ մըն ալ։ Հրավեր էր ստացած Միջազգային երաժշտական ընկերութենեն մասնակցիլ ընկերության համաժողովին, որ տեղի պիտի ունենար նույն տարվո ամրան, և զեկուցումով հրապարակ գալ համաժողովին մեջ։*

*Երկու սիրելի նյութեր պիտի ընդգրկեին իր զեկուցումները։ Հայ դեղջուկ երաժշտությունը պիտի ըլլար անոնցմե առաջինը։ Շատ ատեն անցած էր իր վերջին զեկուցումեն ի վեր ընկերության նախընթաց համաժողովին մեջ, որ տեղի ունեցեր էր Փարիզ 1907 հունվարին, և յոթը տարվան մեջ, որ սահեր էր անկե հետո, Կոմիտաս շատ բան էր գտեր ու շատ բան էր ճշտեր հայ դեղջուկ երաժշտության հետ կապված։ Պիտի երթար զանոնք իմացնելու երաժշտական աշխարհին։*

*Նյութերեն մյուսը հայկական խաղերը պիտի ըլլային։ Տասնյակ տարիներե ի վեր ան զբաղեր էր անոնցմով, պրպտեր ու զններ, ու ամեն անգամ գտնվեր նոր հայտնության մը առջև։ Հիմա այլևս ատենը եկած կսեպեր երաժշտական աշխարհին ալ բանալ խաղերուն գաղտնիքը՝ հիմնված եզրակացությանց վրա, որուն կըցեր էին հանգիլ իր պրպտումները։*

*Տարված այս նյութերու մշակմամբ՝ Կոմիտաս տրամադրելի ատեն քիչ ուներ հրապարակային ելույթներու համար։ Եվ սակայն զանոնք ևս բոլորովին զանց չըրավ։*

*Նոր տարվան իր առաջին ելույթը Եսայան Սանուց Միության տարեկան հանդեսին էր, որ տեղի կունենար, ինչպես միշտ, Եսայան վարժարանի կարոտ աշակերտներու օգտին։ 1913 դեկտեմբերին էր, որ դացեր էի Կոմիտասին՝ ապահովելու իր ևս մասնակցությունը ան սիրով ընդուներ էր։ Ինչպես հիշած ենք Եսայան վարժարանը մոտ էր իր սրտին։ Մեր կազմակերպած ցերեկույթը տեղի պիտի ունենար հունվար 9-ին Ցունիոն-Ֆրանսեզի մեջ։ Կարժե՞ արդյոք հիշել, որ այդ ցերեկույ-*

[21] «Պատմա-բանասիրական հանդես», 1958, Ա, էջ 264—265։

[22] «Սիրանի գոտի», Բոստոն, 1960, թիվ 2—3, էջ 22։

ն անձամբ ներկա չկրցա գտնվիլ, ավա՜ղ։ անոտն էի ես այդ գիշերը, «Ազատամարտ»-ի ղթերը քավելու համար հոն չորս ամիս, ու անտեն է, որ հուղմունքով լեցուն նամակ ղրկեցի ցերեկույթի կազմակերպիչներուն։ Քիչ հետո, 1914 տարվան մարտ 4-ին, Կոեմաս պզտիկ համերգ մը տվավ ամերիկյան սարանատան մեջ «Գուսան» երգչախումբեն սարված 24 երգիչներով, միասին ունենալով ոմենակ Շահմուրադյանը, որ Պոլիս էր այդ չերոցին։

Ինչպես Արամ Անտոնյան ալ իր հուշերուն եջ կպատմե, վարդապետը ծանոթ դեմք մըն ամերիկյան դեսպանատան մեջ, ուր շատ ւրբեին զինքը։ Տիկ. Մորկընթաու (ամերիկան դեսպանին կինը) հաճախ կհրավիրեր այն իր երեկույթներուն և Կոմիտաս կերգեր կնվագեր այդ ընդունելու թիվոց ընթացն)։

Իսկ 1914 մայիս 3-ին (ապրիլ 20) Կոմիտաս Փըթի-Շանի մեջ համերգ մը կուտար, ո վերջինը պիտի ըլլար, ավա՜ղ, ու զայն ըլեն բեմի վրա պիտի չտեսնեինք Պոլսո ծեջ։ Ալ պիտի զրկվեինք իսպառ իր կախարանքեն։

Այդ համերգեն անմիջապես ետքն էր, որ իտի մեկներ Փարիզ, վերջին անգամ մըն աշխարհին ներկայացնելու համար հայ ոգին իր մեղեդիներուն մեջ։

## XI.— Ջենով Օհանը գտնելու համար

Սրվանձտյանի բացած զմայլելի այն ածուն ատ քիչ մշակող ունեցավ սահմանեն ասին, մինչ Կովկասի մեջ ամբողջ գրականություն մը սկսեր էր ստեղծվիլ հայ ժողովուրդի հին բարքերուն և սովորություններուն, որեմնի նիստ ու կացին, առակներուն և առածներուն, և բոլոր այն ամենուն մասին, որ ժողովուրդի մը հոգին կրերե դարերուն եջեն, ավանդության և զրույցներու, երգեու և տոներու ձևին տակ։

Հայ ավերակները ես պեղող չունեցան սահմանեն ասդին։ Հայ ճարտարապետության պատմությունը զրկված մնաց ճանչնալ կոթողներն ու հիշատակարանները, որոնք փռված էին Արևմտյան Հայաստանին մեջ։ ղթամարն անգամ դիպվածին կպարտի իր ացած շքեղ գլուխը այդ պատմության մեջ։ որամանյան չկրցավ ընել Հայոց Աշխարհին Թուրքիո գրաված մասը։

Արևմտահայ վանքերը կզպած պահեցին րենց գանձերը։ Մագաղաթները լույսին ելլել ուզեցին։ Ինչ որ դիպվածը փրկեց, ան միայն նցավ արվեստներու պատմության։ Ու որա՞ն հրաշալիքներ չքացան զացին գինք ծնող ժողովուրդին հետ։ Հայ բանասիրությունն ու հայ մանրանկարչությունները ինչե՞ր պիտի շահեին, եթե առնեին պրպտված ըլլային անոնք։

Հայ երգը ես, ինչպես տեսանք իր տեղին, մոռացության տրվեցավ մեր մեջ։ Հայուն գեղջուկ երգերը պրպտող չունեցան սահմանեն ասդին։ Ինչ որ Կոմիտաս կրցեր էր փրկել անոնց զմայլելի գանձեն, միշտ դիպվածին է, որ պարտական է հայ երաժշտության պատմությունը, Մուշեն ու Վանեն Կովկաս ինկած գյուղացիներու կամ պատահական հանդիպումներու առիթե առիթ։

⁂

Գավառը, մեկեն, մտահոգության առարկան դարձավ բոլորին ճիշտ այն օրերուն, երբ հայ միտքը ես Նոր հանգրվան կմտներ հայկական դատին հետ մեկտեղ։ Մինչ մարդոց հոգին կփորձեր մխրճվիլ դարերուն խոր հին փառքեր ու գեղեցկություններ որոնելու համար հոն ու զանոնք խառնել նոր օրերու ներշնչումներու, բնական էր, որ հետաքրքրություն ստեղծեին նաև այն գեղեցկությունները, որոնք կշարունակեին դեռ ապրիլ հայրենի հողին վրա իբրև վերջին մնացորդները հին դարերու ավանդության։

Հայոց աշխարհը մոգական ուժ մը ստացավ մեկեն բոլորիս համար։ Արցունքի հովիտ մը չէր ան հիմա մեր աչքին, ուրկե միայն ողբ ու հառաչ կլսեն, ոչ ալ Ավետյաց Երկիր մը արդեն, ուր մարդ պիտի վազեր երթալ թուղ ու խնձոր քաղելու համար։ Ուստի վայր մըն էր հիմա ան, ուր պետք էր երթալ հոգեպես կազդուրվելու և թարմանալու, նոր ավիշով ու նոր ավյունով լեցվելու համար, այն մեծ ճիգեն առաջ, որուն լծվելու կանչված էինք բոլորս, որպեսզի «կերտենք նոր արշալույսը»։

Փակման խոսքին մեջ՝ այն գրական ասուլիսին, զոր 1913 մայիս 5-ին նվիրեցինք Ռուբեն Զարդարյանին, Կոմիտաս, օրվան նախագահը, տեսակ մը ոգեկոչումը կըներ գավառին ու անոր հոգեկան արժեքներուն.

«Մեր մեջ կենսունակության ջիղը խաթարված է, որովհետև, մայր երկրեն հեռացած, գաղթավայրերու մեջ է, որ կուզենք բղխեցնել։ Գաղթականությունը չէ, որ սնունդ պիտի տա գրականության, այլ բուն իսկ հայրենի հողը, ուրկե հեռացած է ան, և որուն վերադառնալու կոչ եղավ այստեղ։

Կովկասյան գրականության հայտնի դեմքերեն մեկը՝ Խորեն եպիսկ. Ստեփանե, իր կատարած ուսումնասիրություններեն ետք կու գար կովկասյան մամուլին մեջ իր ձայնը հնչեցնել թե հայ ժողովուրդը փտած է, որովհետև գեղարվեստ չունի։ Այո՛, ազնիվ ներ-

կանէր. մանավանդ արժանի է այն ժողովուրդը, որ ունի իր գեղարվեստը, որովհետև ժողովուրդ մը, որ գեղարվեստ չունի, կնշանակե թե զգալու կարողությունը չունի։ Եվ ինչ է ժողովուրդ մը, որ չի զգար։

Բարեբախտաբար ժամանակը ցույց տվավ, թե Ստեփանե եպիսկ. անիրավ էր իր կարծիքին մեջ, որովհետև եկան հետո միտքեր՝ ցույց համեստ, թե մեր ժողովուրդը իր ծոցին մեջ գեղարվեստի ընդունակությունը պահած է։ Եկան Խրիմյաններ, Սրվանձտյաններ, և ավելի նոր ժամանակներս՝ Ջիթունիներ, որոնք ժողովուրդի ծոցեն դուրս քաշեցին գրական մարգարիտներ։ Այդ ապացույց էր, թե հայ ժողովուրդը արժանի չէ մեռնելու։

Կոմիտաս հետո ուղղակի ներբողը կըներ գավառին և անոր հոգեկան գանձին.

«Ցարդ գավառը մեր աչքին առջև լծորդված է խավարի հետ։ Մենք մեծ մասամբ գավառը կճանչնանք իր տգիտությունով և հետամնացությամբ։ Բայց գավառը իմ աչքիս առջևը կպատկերանա իբրև սրբավայրը հայ գեղարվեստի նշխարներու. հոն կտեսնեմ հայ երգը՝ հայ գեղջուկին շրթներուն վրա, հայ գութանը, հայ գեղջուկը՝ իր արորին ու մաճկալին հետ, ու քարերն անգամ նվիրականություն մը կհիշեցնեն ինծի։ Այդ քարի բեկորներն են մեր հայրենիքը, ազնիվ հանդիսականներ. հոն են շեշտերը մեր գեղարվեստին, և ոչ թե մայրաքաղաքներուն մեջ, ուրկե մենք այդ գավառը կդիտենք իբրև խավարի վայր»։

* * *

Ճիշտ այն օրերուն, երբ Կոմիտաս իր ապրիլ 20-ի (մայիս 3) համերգը կպատրաստեր, որ վերջինը պիտի ըլլար, ավա՜ղ, իր համերգներուն, Պոլսո մեջ խումբ մը մտավորականներ նախաձեռնությունն ստանձնեցին Հայաստանի ուսումնասիրության համար կազմակերպություն մը ստեղծելու։ Կոմիտաս մեկն էր նախաձեռնողներեն, և անոնց առաջին հանդիպումները իր տանը մեջ իսկ եղան։

Առաջին ժողովը տեղի ունեցավ մայիս 24/31-ին, որուն հրավիրված էին 18 անձեր՝ մտավորականներ հայ աշխարհի զանազան գավառներեն և տարբեր մասնագիտություններու պատկանող։ Հայաստանը ուսումնասիրելու առաջարկը ընդունվեցավ միաձայն, կարդացվեցավ պատրաստված նախագիծը և ընդունվեցավ հանձնախումբ մը, բաղկացած պրոֆ. Աստ. Խաչատրյանե, Հովհ. Հակոբյանե և է. Ակնունիե, հաջորդ ժողովին ներկայացնելու համար՝ արդեն մշակված կանոնագիրը։

Երկրորդ ժողովը տեղի ունեցավ մայիս 31-ին (հունիս 13), ուր և կարդացվեցավ ու մանրամասն քննութենե ետք՝ ընդունվեցավ հիմնական կանոնագիրը։

Ընկերությունը իրր նպատակ կորդեգրեր իրեն մասնագիտորեն ուսումնասիրել Հայաստանը՝ գլխավորապես աշխարհագրական-պատմական, տնտեսական-վիճակագրական, ազգագրական և հնագիտական-գեղարվեստական տեսակետով, հրատարակել ուսումնասիրությունները հայ և, եթե հարկ ըլլա՝ օտար լեզուներով ալ, Հայաստան ղրկել ուսումնասիրող խումբեր կամ անհատներ, կորուստե ազատել հնությունները և այդ նպատակով հաստատել թանգարան և կամ օգտվել եղածներեն, հարաբերություն հաստատել Եթովպիայի և Կովկասի այն ընկերություններուն հետ, որոնց նպատակն է ուսումնասիրել Արևելքը՝ մասնավորապես Հայաստանը։

Նույն ժողովին մեջ էր որ որոշվեցավ իսկույն պրոպագանդ սկսիլ այն գործին համար և նախնական խորհրդակցություն մը հրավիրել բոլոր անոնք, որ կփափաքեին Հայաստան մեկնիլ։ Այդ նպատակով ալ ընտրվեցավ առժամյա գործադիր մարմին մը, որուն կանդամակցեին պրոֆ. Աստ. Խաչատրյան, դոկտ. Պադիլ Խան, Հովհ. Հակոբյան, Գար. Փաստրմաճյան և է. Ակնունի։

Այնպես կհուսացվեր, որ աշնան լուրջ թափ պիտի ստանար նորակազմ ընկերությունը և իր շուրջը պիտի համախմբեր հայ մտքի բոլոր ներկայացուցիչները և հայ բնագավառի բոլոր բարեկամները։

Կոմիտասն ու Վարուժանը առաջիններեն եղան, որ գավառ մեկնիլ ուզեցին։ Կուզեին տեղվույն վրա երթալ փնտրել հայ ժողովուրդի հոգեկան գանձերը, իրենց ականջը տալ հայ ժողովրդի սրտի զարկին։ Ինչ գոհարներ պիտի բերեր Կոմիտաս Վանեն ու Մուշեն, ու Վարուժան ի՜նչ ներշնչումներ Սասունցի Դավիթին համար, զոր կուզեր անմահացնել մեծ դյուցազներգությամբ մը, իսկ Կոմիտաս օպերայի պիտի վերածեր զայն։

Սասունցի Դավիթը օպերայի մը նյութ դարձնելու մտածումը Կոմիտաս վաղուց է ուներ։

Մանուկ Աբեղյան կպատմե Կոմիտասի մասին իր հուշերուն մեջ, թե «Նրա երազներից մեկն էլ այն էր, որ միշտ պատրաստվում էր մի օպերա շարադրելու հայկական և ընդհանրապես արևելյան եղանակներու ոգով. դրա համար ամենից հարմար նյութը համարում էր մեր «Սասմա Ծռեր»-ը, և որքան գիտեմ, մի քանի եղանակ շարադրել էր։ Այդ միտքը հղացել էր նա ուսանողական ժամանակ, և բեմին ծանոթանալու համար նա իր պրոֆեսորի միջնորդությամբ մի քանի անգամ Բեռլինում նույնիսկ բեմ էր ելել. չեմ

*Հիշում, թե որ ասպարային խմբի մեջ, իբրև խորիստ։ Այս մասին նա շատ քչերին էր պատմում»*[23]։

*Ոչ Կոմիտաս կրցավ մեկնիլ, ոչ ալ Վարուժան։ Տարբեր հոգեր գիրենք Պոլիս կպահեին այդ պահուն։*

*Երկու հոգի միայն վճռեցին մեկնիլ որևէ գնով,— Թերլեմեզն ու Ջեռկյուրյան։*

*Առաջին ծիծեռնակներն ըլլալու բախտը վիճակվեցավ ուրեմն անոնց, որովհետև քաջությունն ունեցան ճամփա ելլելու իսկույն, բայց չկրցան լրման հասցնել իրենց ուխտը։ Պատերազմը ծագեցավ ու կեցուց մարդոց ճիգերը մեկեն։*

*Ջեռկյուրյան Պոլիս դարձավ՝ հարևանցի պտույտ մը միայն ընելե հետո Հայոց երկրին մեջ, սակայն հոգին արդեն լեփ-լեցուն նոր տեսիլքներով։*

*— Նոր մարդ մը կդառնամ ետ, կըսեր ան մեզի։*

*Ատեն չունեցավ սակայն պատմելու մարդոց կախարդանքը, զոր միասին կբերեր։ Պիտի խառնվեր շուտով ինքն ալ սպանդ գացողներու դժխեմ կարավանին, սիրտը հույզերով լեցուն, ճիգերու դեռ ընդունակ։ Կես մնացած մը և ան, ինչպես շատ-շատերը, զորս ճիվաղը խեղդեց իրենց երկունքի պահուն։*

*«Խմորման օրեր էին այդ տարիները, 1913—1914,— կգրե Ջիթունի, որ մեկն էր եղեր ընկերակցության ամենեն ջերմ ջատագովներեն,— Արևելյան վեց նահանգներուն համար՝ Հոֆ և Վեսթենենկ մարդպան կնշանակվեր։* Վեսթենենկը Նույնիսկ Ոստանիկ *մկրտված էր ժողովրդի բերնին մեջ, դեռ իր պաշտոնին չանցած։ Ամեն հայու սրտին մեջ նշուլել կսկսեր ավելի լայն ու ազատ հայրենիքի մը ցնդեցիկ հեռապատկերը։*

*Կոմիտաս վարդապետի բնակարանին մեջ՝ հիմնադիրներուս անդրանիկ նիստը տեղի կունենար ու կկազմվեր՝* Հայաստանի Ուսումնասիրության Ընկերությունը, *ընդարձակ ծրագրով մը։*

*Շուտով առաջին շրջիկ առաքյալը՝ Տիգրան Ջեռկյուրյան, կմեկներ Հայաստան, ուրկե կվերադառնար ազգային հոգին ու ավանդությունները նոր մեռոնով մկրտված։ Ինծի կպատմեր անօրինակ խանդավառությամբ, թե ինչ անհման գմայլելի հեքիաթներ լսեր էր Վանա, Մուշի, Կարինի հայ գյուղացիներուն քով։*

*«— Հապա՛,— կհարեր ոգևորված,—* Լալուզարի Ճեմիաթը *պիտի պատմեմ իմ աշակերտներուս, զանոնք պիտի թողնեմ...»*[24]։

*Փանոս Վտն մնաց։ Աարիֆյան դեպքերը զայն հոն պիտի գտնեին։ Մահու և կենաց կռիվը, զոր հայ ժողովուրդը մղեց հոն, հին հայդուկը արթնցուցին արվեստագետին մեջ։ Գործոն մասնակցություն բերավ ինքնապաշտպանության այդ կռիվներուն, ու հայ ժողովուրդին հետ ինքն ալ թողուց հայ հողը, սրտով ու հոգվով խոցված։ Կրած հուզումները սուղ էին արժեր իրեն։ Ձեռքը կդողար։ Բայց ան երբեք վրձինը չթողուց ձեռքեն և երկու տասնյակ տարիներ դեռ նկարեց ան։*

*Կովկասեն Պոլիս, Պոլիսեն Ամերիկա ան թափառեցավ երփնապնակը միշտ ձեռքը, իր վերջին ներշնչումները երթալ քաղելու համար հայրենի հողեն ու այնտեղ ալ հանգչելու համար, Վանա կարոտը ներսը։*

*... Ջենով Օհանը լուռ մնաց այսպես...։*

[23] *«Ժամանակակիցները Կոմիտասի մասին», էջ 72—73։*

[24] Ջիթունի՝ *Կոմիտասին հետ, «Հայրենիք» ամսագիր, 1936, 12-րդ, էջ 85—86։*

(Շարունակելի)

# ԻՍԱՀԱԿ ԱՆԳԵՂՈՍ ԿԱՅՍԵՐ ՊԱՏԱՍԽԱՆ ՆԱՄԱԿԸ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳՐԻԳՈՐ ՏՂԱՅԻՆ *

*Թշնամական շրջապատի մեջ գտնվող Կիլիկիայի հայկական պետությունը ստիպված էր գործուն արտաքին քաղաքականություն վարել՝ իր անկախությունը պաշտպանելու և անվտանգությունը ապահովելու համար։ Առաջին հերթին նա պետք է բարեկամական հարաբերություններ հաստատեր Բյուզանդական Կայսրության հետ, Իկոնիայի սուլթանության թիկունքում հզոր դաշնակից ունենալու համար։ Այդ բանին դեմ չէր և Բյուզանդիան, որ իր հերթին ուզում էր Իկոնիայի սուլթանության թիկունքում դաշնակից ունենալ՝ ի դեմս հայկական պետության։ Եվ պատահական չէ, որ Մանվել Կոմնինոսը (1143—1180 թթ.) դեռևս Ներսես Շնորհալու օրով երեք անգամ դեսպանություն ուղարկեց Կիլիկիա՝ եկեղեցական միության համար։ «Մեծ արքայն Հոռոմոց ի սկիզբն աւուրց աթոռակալութեան մերոյ առաքելական Աթոռոյս,— գրում է Ներսես Շնորհալին,— առաքեաց առ մեզ արս պատուաւորս հանդերձ արքունական նամակօք, միանգամ և երկիցս և երիցս՝ յաղագս սիրոյ և միաւորութեան եկեղեցւոյ ըստ նախնեացն ժամանակի, և բառնալոյ ընկամուտ պատճառս երկպառակութեան ի միջոյ երկաքանչիւրոց ազգացս»[1]։*

*Հանրահայտ է, որ այդ բանակցությունները հաջողություն չունեցան այն պատճառով, որ Բյուզանդական Կայսրությունը ձգտում էր իրեն ենթարկել Հայոց եկեղեցին, վերացնել հայ եկեղեցու ուղղափառությունն ու ինքնուրույնությունը, իսկ միջնադարի պայմաններում եկեղեցին ենթարկել՝ որոշ իմաստով նշանակում էր նաև տվյալ երկիրը քաղաքական կախման մեջ գցել, մի բան, որ շատ լավ էին հասկանում Կիլիկյան Հայաստանի աշխարհիկ և հոգևոր ղեկավարները։*

*Ներսես Շնորհալուց հետո Մանվել Կոմնենոսի և Կոստանդնուպոլսի պատրիարք Միքայելի հետ բանակցությունները շարունակեց Գրիգոր Տղան, բայց նույնպես ապարդյուն։*

*Հայ պատմագրության մեջ տիրող էր այն ենթադրությունը, որ Մանվել Կոմնենոսից հետո հայ-բյուզանդական բանակցությունները չշարունակվեցին, որ Իսահակ Անգեղոսը կայսրության սահմաններում սկսեց հալածել հայադավաններին, որի դեմ բողոքով հանդես եկավ Գրիգոր Տղան[2]։ Օրինակի հա-*

---

** Սույն հոդվածը հրատարակում ենք որպես պատմական հետաքրքիր փաստաթուղթ, որը ցույց է տալիս հայ եկեղեցու դերն ու նշանակությունը արևելքում՝ Բյուզանդական Կայսրության շրջանին, և այն քաղաքական անկախությունը, որ ունեին Բյուզանդիան հայ ժողովրդի դավանափոխությամբ, եկեղեցական միության քողի տակ։*

*[1] Ներսիսի Շնորհալւոյ Թուղթ Ընդհանրական, Էջմիածին, 1865, էջ 291։*

*[2] Իսահակ Անգեղոսի այդ հալածանքների մասին հիշատակում է Վարդան Արևելցին. «Ի վերայ Յունաց թագաւորեաց Փիլիկն, որ և Սահակ և յարոյց հալածանս և չարչարանս ի վերայ հայադաւան ազգաց, գի դարձցին յաղանդ նոցա։ Վասն որոյ գրէ առ նա աղէրսանս պատրիարգն Գրիգոր եղբօրորդի տեառն Ներ-*

...մսր. Մաղաքիա արք. Օրմանյանը այդ առթիվ գրում է, որ Մանվել կայսեր մահից ...հետո, որ տեղի ունեցավ 1180 թվականին, ...հույներու հետ միութենական բանակցությունները վերջնականապես փակվեցան։ Ալեքսիոս Մանուկ (1180—1183) և Անդրոնիկոս Բոնակալ (1183—1185) կայսրերը ...կարող իսկ չէին այսպիսի խնդիրներով զբաղվել, Իսահակ Անգեղոսն ալ 1185-ին գահակալելով, բոլորովին տարբեր ուղղությունից, ոչ ևս բանակցելով և համաձայնելով, այլ բռնությամբ և ուժգնությամբ հայերը քաղկեդոնականության հպատակեցնելով»[3]։

Հույն պատմաբան և բանասեր Պապադոպուլո-Կերամևսի հրատարակած մի փաստաթուղթը սակայն նոր լույս սփռեց հայ-բյուզանդական փոխհարաբերությունների պատմության վրա[4]։ Խոսքը բյուզանդական կայսր Իսահակ Անգեղոսի պատասխան նամակի մասին է, ուղղված հայոց կաթողիկոսին, որ հրատարակիչը թվագրում է 1185/1186 թթ., հետևաբար հասցեագրված է Գրիգոր Դ Տղային (1173—1193)։ Նամակից պարզվում է, որ Գրիգոր Դ Տղան իր բանակցությունները բյուզանդական արքունիքի հետ շարունակել է նաև Իսահակ Անգեղոսի թագավորության ժամանակ, որ եկեղեցիների միության հարցով դիմել է կայսեր և որ ինքը կաթողիկոսը, պատրաստակամություն է հայտնել անձամբ Կոստանդնուպոլիս ուղևորվելու և բանակցություններ վարելու համար։ Ինչպես հայտնի է հայկական աղբյուրներից, Գրիգոր Տղան Կոստանդնուպոլիս չգնաց, հասկանալի է ուրեմն, որ նրա բանակցությունները հենց սկզբում ավարտվեցին անհաջողությամբ։ Պատճառը անկասկած հայոց եկեղեցու և պետության անկախությունը պաշտպանելու ձգտումն էր, որի դեմ ոտնձգություններ էր կատարում Բյուզանդիան։ Որ հայերը չէին ուզում դավանության հարցում զիջող լինել, պարզ երևում է Իսահակ Անգեղոսի այս նամակից, որտեղ վկայություն կա, որ հայոց կաթողիկոսը, կայսեր գրած նամակում քաղկեդոնականությունը համարել է «այլադավանություն»։ Այդպես մտածող գործիչը, հասկանալի է, ոչ մի դեպքում չի հրաժարվի իր դիրքերից։ Պարզ է դառնում, որ Կիլիկյան Հայաստանը 12-րդ դարի երկրորդ կեսում ամենևին էլ չէր ձգտում եկեղեցիների միության, հույների հասկացած ձևով, այլ պարզապես քաղաքական դաշնակցության Բյուզանդիայի հետ։ Եկեղեցիների միության մասին խոսքերը պարզապես մի շղարշ էին իրենցից ներկայացնում։

Իսահակ Անգեղոսի պատասխան նամակը, բացի երկու պետությունների և եկեղեցիների փոխհարաբերությունների ուսումնասիրության համար աղբյուր ծառայելուց, հետաքրքրական է նաև իր փաստերով Կիլիկյան հայկական պետության դիվանագիտության վերաբերյալ։ Պարզվում է, որ Կիլիկյան պետության մեջ դիվանագիտական հարցերում օգտագործվել է հայերեն և արաբերեն լեզուները հավասար չափով, որ բյուզանդական կայսեր հասցեագրված նամակը գրվում էր ոչ թե հունարեն, այլ հայերեն և արաբերեն (արաբերենը, հավանաբար, հայերեն բնագրի պատճենն էր), երբ, հասկանալի է, Կիլիկիայում հունարեն իմացողների պակաս չկար։ Հետաքրքիր է նաև այն, որ կաթողիկոսին իր ճանապարհորդությանը դեպի Կոստանդնուպոլիս պետք է ուղեկցեր բյուզանդական արքունիքի պաշտոնյաներից մեկը, որ հատուկ դրա համար ուղարկվում էր Կիլիկիա։ Սա հին սովորություն էր։ Դեռևս Հուստինիանոս Ա կայսեր ժամանակ պարսկական դեսպանին Կոստանդնուպոլիս էր ուղեկցում բյուզանդական բարձրաստիճան մի պաշտոնյա։

* * *

Իսահակ Անգեղոսի պատասխան նամակի քաղաքական պատմության հարցերին վերաբերող առանձին հատվածներ մենք թարգմանաբար հրատարակել էինք «Բանբեր Մատենադարանի» 4-րդ գրքում։ Գտնելով, որ նամակի դավանաբանական հարցերին նվիրված մասը ևս հետաքրքրություն կներկայացնի հատկապես հայոց եկեղեցու պատմությամբ զբաղվող մասնագետներին, նպատակահարմար գտանք նամակը հայերեն թարգմանությամբ ներկայացնել ամբողջությամբ։

Հ. Մ. ԲԱՐԹԻԿՅԱՆ

---

...ևսի և Գրիգորի կաթողիկոսացն Հայոց, խաղաղանալ ...ընդ ժողովրդեանն Աստուծոյ. և ոչ լուաւ նմա, այլ ...զբազումս դարձոյց ի կրօն իւր և զայլս յայտնապէս արարս (Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 133)։ Այս հալածանքների մասին, ինչպես և Գրիգոր կաթողիկոսի բողոքի մասին, պարզ ու հստակ խոսվում է Իսահակ Անգեղոսի սույն պատասխան նամակում։

[3] Մ. արք. Օրմանյան. Ազգապատում, Կոստանդնուպոլիս, 1912, հատ. Ա, սյունակ 1482։

[4] Հրատարակվել է Կոստանդնուպոլսի Հունական Բանասիրական Ընկերության կողմից դեռևս 1884 թվականին։

# ՊՐՈՏՈԱՍԵԿՐԵՏ ՏԵՐ ՆԻԿԵՏԱՍ ՎԱԼԱՆԻՏԵՍԻ ՇԱՐԱԴՐԱԾ ԳԻՐԸ. ՈՐ ՏԵՐ ԻՍԱՀԱԿ ԱՆԳԵՂՈՍ ԿԱՅՍՐԸ ՈՒՂԱՐԿԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

*Իսահակ ի Քրիստոս Աստված հավատացյալ թագավոր, աստվածապսակյալ, արքա հզոր, միշտ օգոստոս, ինքնակալ հռոմեոց Անգեղոս, հայոց ամենապատվական կաթողիկոսին, [հայցում ենք] նրա շնորհքը և բարի կամքը։*

Աստվածային ամենամեծ քարոզիչ Պողոսը, իր սրբազան թղթերի մեջ ամենուրեք սերն է փառաբանել և չեչտել նրա մեծ նշանակությունը։ Որպես Քրիստոսի՝ առաջին և խոշորագույն ուսուցչի աշակերտ և նրա իմաստության մեկնիչ իր հետևորդների համար նա հավատամք դարձրեց սերը, որպեսզի սերը լինի նրանց բնորոշ գիծը, ինչպես զինվորների համար սխրանքը պատերազմում։ Մի տեղ (սերը) նա անվանում է «լրումն օրինաց և մարգարէից» (Հռոմ., ԺԳ, 10), մի այլ տեղում էլ ավելի հստակ ընդգծում է, որ առանց (սիրո) ամեն մի սխրանք անկատար է, և ասում. «եթէ զլեզուս մարդկան խօսիցիմ և զհրեշտակաց, և սէր ոչ ունիցիմ, եղէ ես իբրև պղինձ որ հնչէ, կամ իբրև զծնծղայս որ ղօղանջեն։ Եւ եթէ ունիցիմ զմարգարէութիւն, եւ գիտիցեմ զխորհուրդս ամենայն և զամենայն գիտութիւն և եթէ ունիցիմ զամենայն հաւատս մինչև զլերինս փոփոխելոյ, և սէր ոչ ունիցիմ, ոչինչ եմ։ Եւ եթէ շամբիցեմ զամենայն ինչս իմ աղքատաց, և մատնիցեմ զմարմինս իմ յայրումն, և սէր ոչ ունիցիմ, ոչինչ օգտիմ» (Ա. Կորնթ., ԺԳ, 1—3)։ Իսկ Գաղատացվոց ուղղած (թղթում), բացատրելով, թե ինչ է տրվում Հոգու կողմից նրանց, ովքեր կենցաղավարում են Հոգուն հաճելի ձևով, ամենից բարձր է դասում սերը, ասելով. «պտուղ Հոգւոյն այս է. սէր, խնդութիւն, խաղաղութիւն» (Գաղ. Ե., 22)։ Նա ամենից առաջ սերն է հիշատակում և հետո ավելացնում նմանները։

Մեզ հայտնի դարձավ, որ պատվականությունդ լի է Հոգու այդ պտուղով, իմանալով այդ մասին նրա գրած և Թագավորությանս ուղարկած նամակներից։ Թեև մենք դեռ չենք ճաշակել այն, անձամբ էլ դեռ չենք հանդիպել միմյանց, բայց գիտենք ավետարանական ասացվածքը, թե «ծառը իր պտուղից է ճանաչվում» և, ինչպես ասված է սուրբ գրոց մեջ, նա «պտուղ իւր ի ժամու տացէ» երկնային մշակին, մաքրված, մակաբույծներից ազատված։ Այդ մասին շատ լավ վկայություններ կան այնտեղ։

Դու Թագավորությանս ուղարկեցիր երկու նամակ, մեկը գրված քո՝ հայերեն լեզվով, իսկ մյուսը՝ արաբերեն։ Այդ երկու նամակով մի բան հայտնեցիր, որ վառվում է քո սիրտը մեզ հետ միանալու սիրով, որ շատ ուրախ ես այդ առթիվ։ Քո սիրո, խաղաղասիրության և միաբանության մասին վկայում է նախ և առաջ այն, որ դու քո վրա ես վերցնում այնքան երկար ճանապարհ կտրելով անձամբ մեր, խաղաղության ավետողներիս մոտ գալու հոգնությունը, բանակցություններ վարելու մեզ հետ, մեզ բան ասելու և այստեղ մի քիչ հանգստանալուց հետո վերադառնալու. և որ այն ճանապարհն այս, որպես յամենայն ի մեծութեանս հրճվեցիր (Սաղմ. ՃԺԸ, 14)։ Դեռ ավելին՝ Դու գրել էիր նաև, որ ճանապարհին տառապանքներից վախճանվելու վտանգն էլ աչքի առաջ ունենալով չես վարանում քեզ ենթակա ժողովրդին փրկել, նրան մեզ հետ միացնել՝ որպես բարի հովիվ՝ այդ ես սովորելով աստվածային քարոզիչ Պողոսից, որ նույնիսկ իր եղբայրների համար, արյունակից բարեկամների համար չէր հրաժարվում Քրիստոսից։ Մաղթում եմ, որ հաշտվի քո նախանձախնդրությունը և անհապաղ ճանապարհվես Աստուծո ուղեկցությամբ և երկուսս միասին վերացնենք մեր և ձեր միջև գոյություն ունեցող վիհը, և մի սրտով ու լեզվով խոստովանենք Աստծուն ամեն ինչի մասին և այն բանի մասին, որ այլևս մենք բաժան-բաժան չենք անում մի Հովվի հոտը, որ այլևս երկու ժողովուրդ չենք, այլ մեկը և ընտրյալը, որ այլ ծագում չունի Հուդան, ոչ էլ Իսրայելը, որ տարբեր տեղերում չեն գտնվում Երուսաղեմը և Սամարիան, որ բաժանելի չէ Բարձրյալի կողմից գործված ճշմարտության պատմուճանը, որ մեկ Քրիստոսը զանազան մասերի, տարբեր դավանությունների չի բաժանվում, այլ մենք կազմում ենք մեկ ոգի, մեկ հոգի, մեկ բան ենք ընդունում, հավատում սրտանց և խոստովանում ի փրկություն՝ արդարություն, որը և վարդապետում ենք ուրիշներին։

Ուրախ է պատվականությունդ Թագավորությանս մասին ստացած բարի լուրերով (պատվականությունդ այդ մասին գրեց և Թագավորությունս հավատում է դրան։ Դրա վրա ավելանում է և հոգևոր պտուղը՝ ուրիշի հաջողությունների վրա ուրախանալը, ուրախացողների հետ ուրախանալը, ինչպես Առաքյալն է խրատում), բայց անհամեմատ շատ է նա ուրախանալու, երբ լինի մեզ մոտ, երբ լսածին ականատես լինի։ Երկու կողմերի համար էլ ուրախությունը կատարյալ կլինի, եթե լուծվեն բոլոր վիճելի հարցերը և գնայաց միաբանությամբ ի տուն Աստուծոյ գոհություն հայտնելու մեր մեջ հաճոյացած Աստծուն։ Թագավորությունս ասում է այն, ինչ Դավիթն իր փառավորման առթիվ, որ յոթն իմ եղբայրները բազում են և բարի, բայց նրանց չընտրեց Տերը, այլ ինձ՝ կրտսերիս։ Ես դուրս եկա մարտի՝ բռնակալի այլազգու զինակրի դեմ, որ գալիս էր գոռոզաբար, և մահացու հարված հասցնելով նրան, վերացրի խայտառակ բռնակալությունը Իսրայելի որդիների վրայից[1]։ Դեռ ավելին՝ Տերը այն աստիճան մեծացրեց մեզ, որ ամեն օր ժողովուրդներ և ազգություններ է մեզ ենթարկում, մեր ոտքերի տակ դնում։ Թագավորությունս այդ հաջողություններից ո՛չ մեծը, և ո՛չ էլ փոքրը իրեն չի վերագրում, այլ Աստ-

[1] Նամակի հեղինակը ամենայն հավանականությամբ ակնարկում է իր նախորդի՝ Անդրոնիկոս Ա Կոմնենոսի եղերական վախճանը և իր գահ բարձրանալը։

...տուն, որ թագավորեցրեց Նրան և փառքից փառք ...փոխադրում իր անճառելի մարդասիրությամբ։ Դրա համար նա մեղմաձայն ու՝ անվերջ Նրան է վերառ-...նում սաղմոսը. «Մի՛ մեզ, Տէր, մի՛ մեզ, այլ անուան քում տուր զփառս» (Սաղմ. ՃԺԵ, 1)։ Նա անդադար փառավոր գործեր է կատարում մեր միջոցով, իր գործերով առավել ևս փառավորվում։ Դրա համար թագավորությունս ուրախությամբ ու գոհունակությամբ, երգմամբ կրկնում է հաղորդության ժամին ինչպես ...քեղ, այնպես և Քրիստոսի անունը կրող բոլորի հետ, ասելով. «Եկայք լուարուք ինձ, և պատմեցից ձեզ, ...որ ինչ արար անձին իմոյ» Աստված Հրաշքների (Սաղմ. ԿԵ, 16), «որն փրկեաց ի բերանոյ առիւծու ...ծ ի ձեռաց շանց» (Սաղմ. ԻԱ, 21), ամբողջ մարդկային ցեղից մնացած միամորիս (Սաղմ. ԻԱ, 21), «որ ...ած իւղով ուրախութեան» (Սաղմ. ԽԴ, 8) և վերստին ...ծնեալ կոչեց մահամերձիս, ով վճռով բռնավորի համարվեց «ընդ այնոսիկ որ իջանեն ի գուբ»։ Երկրի վրա մեր դեմ նյութվում էր վերջին դատապարտությունը, բայց երկնքում հանվում էր որոշում բարձրացման։ Այստեղ մեր դեմ երկաթ էր կոփվում, աչքերը փորելու համար, ձեռքի և ոտքերի կապանքների համար և բանտ՝ խավարոտին տարտարոս, և շատ ավելի վատ բան։ Բայց ...ստվածուստ՝ թագ արքայական, պայծառություն ինքնակալական, ազատություն և բանտի կապանքների մեջ ...կապյալների ազատագրում, ճանապարհ դեպի բարգավաճում, դեպի ազատության լույս և այլ շատ բան, որ նախատեսվել է մեր մասին Տիրոջ կողմից մեր աղոթներով։ Արյունարբու և նենգ մարդիկ հատուցում ստացան իրենց լափած չափերով. Քրիստոսի արդար ...նշ...աքարերով, իսկ մենք փրկվեցինք և այժմ ուրիշներին ենք պատմում մեր վրա կատարված հրաշքների մասին[2]։ Բայց այս բոլորը՝ մեզ համար քո՝ ով Աստված հղած մաղթանքների, որոնց մասին դրել էիր մեզ հաղորդած քո նամակների մեջ, մասը կազմեն։ Դու տես, թե ինչքան մեծ է օգուտը քո ուղերձության դեպի մեզ։ Ըստ առաքելական ասացվածքի փոքրը մեծից է օրհնվում։ Այս դեպքում դու չե՞ս գնահատի ...եկեղեցիների մոր՝ Նոր Սիոնի օրհնությունը, եթե արժանանաս դրան, երբ այնքան երկար ընդմիջումից հետո վերադառնաս մոր մոտ, որ վաղուց էր ցանկանում քո վերադարձը։ Դու դիմիր նրան, մոտեցիր նրան և գրկիր որդիաբար, իսկ նա կողջագուրի քեզ և արժանավայել հյուրընկալելով, մոր պես օրհնելով կդասի ժառանգավորաց դասը, կուրախանա, որ այլևս հեռացած չես մորից, որ Նրա հարազատ որդին ես, Նրա երկնածը և ծնունդը հոգևոր։ Ուրախություն կլինի նաև երկնքում։ Եկեղեցին տոնելու է իր ավագ որդիների երկրային համերաշխությունը և միությունը, հրեշտակները նվագելու են նվագն ուրախության և խաղաղության Աստվածը հրճվելու է դրանից։ Եվ այդ բարի գործի՝ պատվականությանդ ջանքերով ավարտելուց հետո, ինչպիսի՜ վարձ է սպասում քեզ հայտնության օրը։ Նաև մեծ, անճառելի մեծ։ Միաբանությունը գլուխ բերելը թագավորությանս կարծիքով դժվար չէ և շատ ճիգերի կարիքը չի զգացվի. դա շատ դյուրին է և ես ամբողջ հոգով ցանկանում եմ այդ։ Սակայն, ինչքան ավանդություններ, որ գոյություն ունեն մեզ մոտ և որոնց Հայրերի սուրբ սինոդներին կամ սուրբ կանոններին բացահայտ չեն հակասում, թող մնան, զուգե և վերանայված Փա՛ռք Աստուծոյ, և առանց հապաղելու, այդ գործը կատարողներին։ Որովհետև չնչին բանը, որպես այդպիսին թեև ուշադրության չի արժանանում, բայց և այնպես պետք է ուղղվի, որովհետև այդ չնչիններից մեծ փորձանքներ են գալիս։ Մի փոքր խճացար տեղից խախտվելով կարող է մի ամբողջ գետ շարժման մեջ դնել, և մի խճի հանելը կարող է պատճառ դառնալ մի ամբողջ շենքի փլուզման։ Մորեխն ու բզեզը և այլ նման փոքր միջատներ մարդկանց մեծ վնասներ են պատճառում, ավելի մեծ, քան կարող են պատճառել այրուձին կամ զորքը։ Իզուր չէ, որ նրանց իրենց ամենավնասակար բնության պատճառով համարվել են Աստուծո մեծ պատիժը։ Արդ, ցանկալի չէ, որ եղբայրների մի մասը երբ տխուր է և պաս պահում, մյուս մասն ուրախանա և տոնախմբությամբ զբաղվի։ Ցպետք է միս ուտել, երբ այդ բանը եղբորը վրդովեցնում է, ոչ էլ ազալ և ծոմ պահել, եթե դա նույնպես վրդովմունք է առաջացնում հոգևոր եղբայրներին, այլ պետք է, որ միասին ուրախանալ և միասին սգալ։ Մեր արիշտները չե՞ն ծաղրի մեզ և մեր պատճառով չի՞ տուժի ճշմարտությունը, եթե հրեշտակը սքանչելի հղության մասին ավետիսը ամենասրբուհի կույսին ըստ ոմանց բերի մի ժամանակ, իսկ ըստ մյուսների՝ մի այլ։ Երբ մենք տոնում ենք մի տոն և նշում Տիրոջ մի հրաշքը, իսկ դուք՝ ոչ, երբ մենք տոնում ենք մի տոնածին որ Փրկչի ծնունդը և մի այլ որ էլ Աստվածահայտնությունը, իսկ դուք երկուսն էլ՝ նույն օրը։ Այդ հարցի շուրջ եղած մեր տարաձայնությունը հենց նրանց էությունն է կասկածի տակ դնում, հակառակ որ այդ բոլորը ի սկզբանե անտի ճշմարիտ են։ Արդ, եթե լուծենք այդ հարցերը, հաշտությունը կատարյալ կլինի և ամեն տեսակետից էլ օգտակար։ Հակառակ դեպքում թող այս փակենք փոքրի վրա մեծ գործը գլուխ բերելու համար, ինչպես որ ասել է Թագավորությունս, անտեսենք երկրորդականը՝ կարևոր գործը հաշտությամբ լուծելու համար։ Ո՞րն է դա։ Դա դավանության հարցում համերաշխ լինելն է։ Եթե մյուս հարցերում բծախնդիր լինելու անհրաժեշտություն կա, ապա ինչքա՞ն ավելի այս հարցում։

Պատվականությունդ իր երկու նամակների մեջ շարադրել էր սուրբ Մարդեղության մասին իր եկեղեցու դավանանքը և գրել հետևյալը. «Աստված և Փրկիչ մեր Հիսուս Քրիստոսը (Նրա անվանը փառք) մարմնացավ մեր մարմնով և յուր մարդասիրությամբ մարդեղացավ՝ ինչպես մենք։ Նա մարդկային մարմին առավ և յուր աստվածությունը խառնեց մեզ։ Ինչպես ներկա-

[2] Իսահակ Անգեղոսը այստեղ ակնարկում է իր գահ բարձրանալու դեպքերը։ Անդրոնիկոս կայսրը ուզում էր Իսահակին ձերբակալել, բանտարկել և ապա սպանել։ Բայց դեպքերի ընթացքը շրջանվեց Անդրոնիկոսը, և գահին տիրացավ Իսահակ Անգեղոսը։ Այդ մասին մանրամասն տե՛ս Nicetae Choniatae Historiae, Bonnae, 1835, էջ 414 և հտ.։

յարքին մեզ՝ նման գրությունների թարգմանները։ Մնացած հարցերում էլ մեր կարծիքով հստակություն չկա, իսկ խառնման (συγκράσεως) մասին հարցը ցո պատվականությունը ճշգրտությամբ չի շարադրել, որովհետև ստացվում է, որ Քրիստոսի մեջ անշփոթ կերպով միացած երկու բնությունները շփոթվել են։ Ճիշտ է, այդ մասին գրել է մեծ Հայր Գրիգոր Աստվածաբանը, բայց ո՛չ ի միջի այլոց, այլ ավելացնելով և բացատրություն տալով։ Նա պարզաբանում է հիացմունք հայտնելով. «Ո՜վ նոր խառնմանս, ով սքանչելի խառնուածոյս (ὢ τῆς καινῆς μίξεως, ὢ τῆς παραδόξου κράσεως) ամենաիմաստուն կերպով ուսուցանելով, որ Քրիստոսի մեջ երկու բնությունների խառնումը պարզ խառնում չէր, այլ նոր և սքանչելի, որովհետև այդ երկու (բնությունները) միմյանց մեջ անցան անճառապար. նրանք կողք-կողքի չդրվեցին, ինչպես խառնվելու ընդունակ նյութերը, որ հնարավոր լինեն նորից իրարից բաժանել, քանզի անբաժանելի են նրանք, իսկ խառնումն էլ՝ սքանչելի։ Նրանք իրար չմիացան ինչպես խառնման ընդունակ նյութերը, քանզի անշփոթ են նրանք, և յուրաքանչյուրն իր հատկությունները պահպանում է կատարյալ և աննվազ կերպով, թեև նրանք միացան ըստ էնթակայության (καθ' ὑπόστασιν)։ Հեղուկները խառնվելով իրար փոփոխում են իրենց հատկությունները, սակայն նրանք մնացին անփոփոխ, մարմինը մարմին է, և ո՛չ աստվածություն, թեև դարձավ Աստուծո մարմին։ Այպս և Բանը, ինչպես մարմինը, Աստուծո է, թեև տնօրինաբար սեփական մարմին ստեղծեց։

Թեև Գրիգոր Աստվածաբանը այդ մասին ուրիշ տեղ էլ է խոսել, բայց իր ասածից ծագած թյուրիմացությունը կատարելապես չվերացրեց, ինչպես և (իր մոտ) շփոթման մասին թվացող առկայության (ենթադրությունը)։ Նա սովորաբար այնքան էլ բծախնդրությամբ չէր մոտենում բառերին և մի անգամ ներկայացնելով իր դավանանքը, այլևս կարևոր չէր համարում դրա շուրջը մանրանալ։ Սակայն ուրիշ աստվածակիր հայրեր բացահայտ կերպով մերժեցին խառնումը (σύγκρασις) համարել որպես շփոթում (σύγχυσις)՝ Մեդիոլանի (Միլանի) ամենասուրբ արքեպիսկոպոս Ամբրոսիոսը, մեկնաբանելով սուրբ հավատամքը, ասում է այսպես. «Տիեզերական և առաքելական եկեղեցին մերժում է նրանց, ովքեր ասում են, թե Քրիստոսի երկու գոյացությունները (οὐσία) խառնվելով շփոթվել են և առաջացել է մեկ գոյացություն, ովքեր չեն խոստովանում, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսը երկու անշփոթ գոյացություններից է և մեկ անձնավորություն (πρόσωπον), հետևաբար մեկ Քրիստոս, մեկ Որդի»։ Իսկ Աղեքսանդրիայի լուսատու, ավելի ճիշտ համայն տիեզերքի լուսատու Կյուրեղը, աղեքսանդրացվոց ուղղված իր կոչ-ճառում հստակ կերպով արտահայտվում է այսպես. «Ես չեմ ընդունում շփոթումը, քանզի օտարոտի է առաքելական դավանանքին և Քրիստոսի ճշմարիտ ավանդության։ Քանզի շփոթումը բնությունների (φύσις) վերացում է, իսկ անճառելի միությունը (ἕνωσις) որ խոստովանում են ուղղափառները, պահպանում է երկու բնություններն էլ անշփոթ և մեզ հայտնված մեկ Քրիստոսի մեջ մնանում երկու (բնություն) Աստված և միաժամանակ մարդ, և ոչ երկու Քրիստոս՝ այլ մեկ՝ միացած, բայց ոչ շփոթված (բնություններով)։ Որովհետև եթե երկու բնությունները լինելով տարբեր գոյացություններ (ἑτεροούσιοι) շփոթվեն մեկ խառնման մեջ, դրանցից և ոչ մեկի (էությունը) չի պահպանվի, այլ երկուսն էլ շփոթվելով կդադարեն որպես այդպիսին գոյություն ունենալուց»։ Մի քիչ հետո նա ասում է. «Թեև քանդվում է տաճարը[3] երեքօրյա թաղման ժամանակ, բայց իր կամքով նա կրկին հարություն առնելով միանում է նրան՝ անճառելի և անպատմելի ձևով, լինելով ոչ թե իր մեջ շփոթյալ կամ մարմնափոխյալ, այլ իր մեջ անշփոթ կերպով պահպանելով երկու բնության հատկությունները (ἰδιότης) քանզի երկու բնություններն այդ անճառելի և անխառն միության ժամանակ չեն շփոթվում»։ Նա «Հավատո մասին» ճառում ասաց այսպես. «Միածինը երբեք չհեռացավ իր աստվածությունից, թեև իրեն տվեց մարդու կերպարանք. նա սուրբ և կուսական արգանդի մեջ իր համար հոգևոր և կատարյալ տաճար ստեղծեց, որն զգենալով և անճառելի կերպով միանալով նրան, հանդես եկավ երկու բնություններն էլ իր մեջ պահպանելով ոչ շփոթված»։ Իսկ Նիկիայի ժողովին մասնակցած երեք հարյուր տասնութ աստվածակիր հայրերի մեջ ամենաերևելին, ամենամեծն Աթանասն ասաց. «Բնությամբ տարբեր և անհավասար երկու (գոյացություններ) մասնակցեցին խառնման գործում, այսինքն Աստվածը և մահկանացու մարմինը, ընդ որում ոչ (մարմինը) դադարեց գոյություն ունենալուց, ոչ էլ (աստվածությունը) մարմնացավ, այլ տեղի ունեցավ երկու տարբեր գոյացությունների անճառելի և անպատմելի միություն, բնությունների, որոնք երկուսն էլ կան մեկ Քրիստոսի՝ Աստուծո Որդու մեջ, և որոնք ոչ շփոթվում են, ոչ վերանում, ոչ բաժանվում միմյանցից»։

Ահա հանպատրաստից, սրբազան գրքերից օգտվելով, համառոտ գծերով պատվականությանդ հաղորդեցինք հիշեցնելու համար միայն, թե ինչ են ասել խառնման հարցի շուրջը տիեզերքի՝ մեզ համար հասարակաց լուսատուները և ուսուցիչները։ Իսկ եթե Աստված կամենա և մենք անձնապես իրար հանդիպենք, այդ մասին ավելի մանրամասն կխոսենք. պատվականությունդ պարզորոշ կերպով կհաղորդի իր սկզբունքները, մենք էլ՝ մեր։ Այդ բոլորից ոչ պիտանին ու անհիմնը աստվածաշունչ սուրբ գրքերի քուրայում կոչնչանա, իսկ ճշմարիտը՝ կհաստատվի։

Պատվականությունդ գրեց նաև, որ Ֆիլիպուպոլսի շրջանում ապրող հայերին տեղի եպիսկոպոսը հավատափոխ է անում՝ թագավորության հրամանին համաձայն, հակառակ իրենց կամքին։ Բայց դա իրականությանը չի համապատասխանում և այդ մասին պատվականությանդ ճշմարտությունը չի հաղորդվել։ Ճիշտ է, ասված է, որ «արքայությունն երկնից բռնադատի» (Մատթ. ԺԱ, 12), սակայն պետք չէ, որ (արքայություն) մտնենք բռնի, այլ միանգամայն կամավոր

[3] Այսինքն Քրիստոսի մարդկային բնությունը։

...ը այդ նեղ (դռնից)։ Քո պատվականությունը ...արժե, որ բռնությամբ են նրանց բերում մեր ...նքն մեր վարդապետությունը նրանց ձգում է և ...ում և կամ նրանց սեփական մղմամբ են անց... ...ւր կողմը, ապա չի կարելի մեզ մեղադրել բռնու... ...ներ, այլ պետք է գովատել նրանց, ովքեր դերա... ...են ավելի լավը, բայց ամենից առաջ պետք է ...ում հայտնել նրանց ձգողին, քանզի «ոչ ոք ...գալ առ իս, եթէ ոչ Հայրն, որ զիս առաքեաց ...զնա» (Յովհ. Զ, 44)։ Նման հարցերում մարդ... ...բռնության համար տեղ չկա։ Բայց ինչպե՞ս ես ...մեղադրում) մեր դավանությունը այլ, որին բռնի ...ում ենք մեզ մոտ ապրող հայերին, երբ մեր ...ները, ինչպես դո՛ւ ես վկայում, նույնն է և մեկ ...ոսին, որ հերրորդություն դավանում են և՛ ...որը, և՛ հայերը։ Արդ, որպեսզի ամեն մի թյու... ...ություն վերանա, քո պատվականությունը քեզ ենթակա ընտրյալ մարդկանց հետ թող անհապաղ մեզ մոտ գա, որպեսզի այդպիսի բարի գործը մահվան կամ որևէ այլ արգելքի պատճառով հանկարծ անավարտ չմնա, և երկուսս էլ չզրկվենք այդ գործի համար ակնկալվող վարձից։ Թագավորությունս պատվականությանդ ուղին մաքրել է ամեն մի խոչընդոտից և հայտնել ազնվագույն ասպետներին՝ թե՛ Իկոնիայի, և թե՛ Եգիպտոսի, որպեսզի քեզ ենթակա երկիրը անվնաս պահպանվի և դու առանց դժվարության անցնես քո մարդկանց հետ միասին, ուղևորվելով դեպի իմ թագավորությունը։ Այդ բանի համար քո պատվականությանը ուղարկեցի ներկա վեստիարիտես Կոստանդին Ամասիացուն պետք եղածը կարգավորելու համար և քեզ հետ միասին գալու դեպի իմ թագավորությունը։ Եվ եթե դու անես դա, թեև այս աշխարհում ձեռք կբերես անցողիկ պատիվ և օգուտ, բայց Աստուծո մոտ՝ հավիտենական։



Ս. Ա. ԱՎԱԳՅԱՆ
(Հայկ. ՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտ. աշխատող)

# ՄՈՐՈ ՁՈՐՈ ՎԱՆՔԸ ԵՎ ՆՐԱ ՎԻՄԱԳՐԱՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

Կասկածից վեր է, որ Մորո ձորո վանքի ս. Աստվածածին եկեղեցին կառուցվել է շատ ավելի վաղ, քան նրա պատերին պահպանված վիմագրաձանագրությունները, որոնք բոլորն էլ վերաբերում են հուշարձանի՝ վերակառուցումից հետո եկող շրջանին և ընդգրկում մոտ 60—70 տարվա ժամանակամիջոց (12-րդ դարի երկրորդ կեսից մինչև 13-րդ դարի առաջին տասնամյակները)։

Հավանական է ենթադրել, որ 7—8-րդ դարերում կառուցված վանքը ավերվել ու ամայացել է արաբական տիրապետության ժամանակաշրջանում և միայն հետագայում, 12-րդ դարի երկրորդ կեսերին, Մահկանաբերդի Արծրունիների և Զաքարյանների կողմից մի քանի անգամ հիմնովին վերանորոգվելով՝ դարձել է այս գավառի հնագույն ու նշանավոր հոգևոր կենտրոններից մեկը։

Որոշ հետազոտողներ Մահկանաբերդի Արծրունիների հնագույն կառուցվածքն այս շրջանում համարում են Մակարավանքի այսպես անվանված Հին եկեղեցին, որը հուշարձանախմբի հնագույն կառուցվածքն է, թեև շինության թվականը ստույգ որոշված չէ⁵։ Վերջերս հայտնաբերվեցին այս Հին եկեղեցու և Մակարավանքի Փոքր եկեղեցու արևելյան գլխավոր խորանների կիսակլոր պատերի երկու ընդարձակ արձանագրություններ, որոնք հավաստում են այս հուշարձանների կառուցման ժամանակամերձ լինելը (12-րդ դարի վերջերը), քանի որ նրանց երկուսի շինությունը նպաստավորողների մեջ հիշատակված է միևնույն Ականց իշխանը⁶։ Իսկ ինչպես հայտնի է, Փոքր եկեղեցին, ըստ արևտմյան դռան ճակատակալի շինարարական արձանագրության, կառուցել է Մակարավանքի մեզ հայտնի առաջին առաջնորդ Յոհանէսը Ռխէ (1198) թվականին⁷։

Ինչպես նշել ենք, Մորո ձորո վանքի պատմության միակ վկաները նրա պատերի վրա փորագրված հիշատակագրություններն են, որոնք հասնում են մինչև 13-րդ դարի առաջին կեսերը, որից հետո վանքի հետագա կյանքի մասին տեղեկություններ չեն պահպանվել։ Պետք է ենթադրել, որ շուտով վրա հասած մոնղոլական ավերիչ արշավանքների և դաժան հարկահանության հետևանքով վանքը զրկվել է ձեռք բերած արտոնություններից, քայքայվել և, կորցնելով իր առաջնակարգ վիճակը Մահկանաբերդ գավառում, հետագա դարերում շարունակել է իր գոյությունը իբրև գյուղական սովորական եկեղեցի, որպիսին նրան տեսնում ենք 19-րդ դարավերջին։

Մորո ձորո վանքի փոխարեն հետագայում Ամիր Քրդի հետնորդների տիրապետության ժամանակաշրջանում կառուցվում են նոր հոգևոր ու մշակութային կենտրոններ և ընդարձակվում հները։ Այս տեսակետից ա-

---

* Նարունակված «Էջմիածին» ամսագրի 1967 թվականի № 9-ից։

5 Գ. Սարգսյան, Մակարավանք, «Էջմիածին», 1954 թ., № 3, էջ 19։

6 Այդ նորահայտ վիմարձանագրությունները հրատարակված չեն։

7 Գ. Սարգսյան, Մակարավանք, «Էջմիածին», 1954 թ., № 5, էջ 52։

…անձնապես բեղմնավոր են աթաբեկ ամիրսպասալար Սադուն Բ-ի և նրա որդի Խութլուբուղայի իշխանության տարիները (13-րդ դարի երկրորդ կեսը), երբ ծավալվում է Մակարա Առաքելոց, Կիրանց և ուրիշ վանական կոմպլեքսների ընդարձակման աշխատանքները և կառուցվում ու բարձր դարգացման է հասնում հռչակավոր Առաքելի հիմնադրած Դեղձուտի վանքը[8]։

Անցնենք Մորո ձորո վանքի վիմարձանագրությունների քննությանը։

## ՎԻՄԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մորո ձորո վանքը բավականին հարուստ է վիմական արձանագրություններով։ 13 արձանագրություններ էլ …նչյան բացառությամբ պահպանվել են անվթար վիճակով, ընթերցվում և վերծանվում են հաջողությամբ։

Ավելի շատ են տուժել և դժվարությամբ են վերականգնվում մեր համարածուի №№ 1, 5, 9, 11 բնագրերը, իսկ աթաբեկ Իվանեի ընդարձակ արձանագրության յոթ քարերից 4-րդի տառաշարքերը ստիպված ենք եղել վերստեղծել զատողության ուժով։

Թվագիր ունեցող արձանագրությունները երեքն են՝ №№ 1, 3, 11, որոնցից հնագույնը նախայինն է՝ ՈԽԶ (1197) տարեթվով։ Անթվագիր բնագրերի ժամանակը ևս ավել կամ պակաս ճշտությամբ որոշվում է դրանցում հիշատակված պատմական անձերի ժամանակագրության տվյալներով։

Հուշարձանի հնագույն արձանագրությունները, անկասկած, վրաց Գեորգի Գ թագավորի և Ամիր Քուրդ Արծրունու շատ կարևոր արձանագրություններն են, որոնց հավանական ժամանակը որոշել ենք Գեորգի Գ-ի գահակալության տարիներով (1156—1184 թթ.)։

Մորո ձորո վանքի վիմագրությունը մեծ մասամբ նվիրատվական է. բացառություն են կազմում աթաբեկ Իվանեի և իր քրոջ՝ Նանայի արձանագրությունները, որոնք վերաբերվում են վանքի կառուցվածքների շինությանն ու վերանորոգմանը (№№ 1, 11), ինչպես նաև վանահայր Գրիգորիսի հիշատակագրությունը՝ վանական տնտեսությունը ընդարձակելու մասին (№ 10)։

Հուշարձանի վիմարձանագրություններից Մ. Բարխուդարյանը նախկինում հրատարակել է միայն երեքը. մեր համարածուի №№ 2, 3, 8, սակայն նրա վերծանությունները հեռացել են բնագրից, թերի են և ունեն զգալի անճշտություններ։

Վանքի վիմագրությանը անդրադարձել է նաև Հ. Ոսկիազարյանը՝ Իջևանի շրջանի պատմական հուշարձանների «Ուղեցույց»-ում։ Թեև հեղինակի նպատակից դուրս է եղել արձանագրությունների ընդօրինակումն ու հրատարակումը, սակայն մի քանի բնագրերի բովանդակությունը վերապատմելիս թույլ են տրված որոշ սխալներ ու տարընթերցումներ. այսպես, նշվում է, որ վրաց Գեորգի Գ թագավորը և սպասալարների տոհմի ականավոր դեմքերը «նոր կալվածքներ» և այլ ընծաներ են տալիս վանքին, մինչդեռ, ինչպես հայտնի է դառնում այդ արձանագրությունների վերծանությունից (սույն համարածուի №№ 1, 7, 8, 11), այստեղ նվերների մասին ոչինչ չի ասված և դրանք բնավ էլ նվիրատվական ակտեր չեն, ինչպես կարծել է հեղինակը։

Մյուս արձանագրությունները սրանով առաջին անգամ են ներկայացվում բանասիրությանը։

Մորո ձորո վանքի վիմագրությունը ուշագրավ է նաև իր հնագրական հատկություններով. տառաձևերը մեծ մասամբ կանոնավոր բոլորագիծ երկաթագիր են, ավելի երկարավուն, սովորական տառակցումներից բացի հանդիպում են միայն այս միջավայրին հատուկ միացումներ (Գ+Է, Տ+Է, Թ+Թ)։ Արձանագրությունների մեծ մասում Ա գրի աջ ոտքին ներքևից բարակ գծիկով աղեղ է փորագրված, որը իր տարբեր ձևերով հատուկ է ինչպես նախնագույն, այնպես էլ 10—11-րդ դարերի վիմագրությանը։

Վիմագրությունների լեզուն գրաբար է, բարբառային, մոտ խոսակցական լեզվին։

Վերծանության մեջ աշխատել ենք ըստ ամենայնի հարազատ մնալ բնագրին։ Մեր կողմից կատարված բոլոր համալրումները կամ եղծված ու պակասող հատվածների վերականգնումները առնված են փակագծերի մեջ, ինչպես այդ ընդունված է վիմագրական հուշարձանների գիտական հրատարակություններում։ Բնագրերի բովանդակությունն ավելի մատչելի դարձնելու նպատակով վերծանության մեջ ավելացրել ենք տրոհության մի քանի նշաններ։

### 1. Եկեղեցու արևելյան խաչթևի թաղի կենտրոնական ճատվածի վրա, քանդակազարդ գոտուց մի շարք վերև, 7 տող

1 Ի ԹՎ(ԻՆ) Հ(ԱՅՈՑ)։ ՈԿԶ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵ(Ա)ՆՆ ԳԻԱՒՐԳԻ, ՄԵՔ՝ ՈՐ(ԴԻՔ ԱՄԻՐ-
ՍՊԱ)ՍԱԼԱՐ ՍԱՐԳՍԻ։ ԱԹԱ(ԲԱ)Կ ԻՒԱՆԷ ԵՒ(ԱՄ)ԻՐ ՍՊԱՍԱԼԱՐ
2 ԶԱՔԱՐԵ։ ՌՌԱՔ ԶԵՐԿԻՐՍ ՀԱՌՑ ՑԱՆԱՒՐԷՆԱՑ ԵՒ ՇԻՆԵ (ԶԱՔ ԶՎԱՆՔՍ). ՈՐ
ՎԱՂՈՒՑ ՀԵՏԷ ԱՒԱՐ(ԵԱ)Ի ԿԱՑՐ ԶԱՒՐ(ՈՒ)Թ(ԵԱՄ)ԲՆ ԱՑ։ ԱՐԴ,
3 (ՑՈՐԺԱՄ) ՍԻՐԵԱՑ ԶՆԱ ԱԾ ԵՒ ԱՌ ԻՆՔ ՏԱՐԱՒ ԵՒ Զ(ՍՈՒՐԲ ԵԹՈՂ ՏՐ) ՏՄԱԼԻ ԵՄ՝
ԱԹԱԲԱԿ ԻՒԱՆԷ ԵՏ(ՈՒ) ՆՈՐՈԳԵԼ ԶՍՔ
4 ԱԾԱԾԻՆՍ Վ(Ա)Ս(Ն) ՑԵՐԿԱՐԿԵՆԴԱՆՈՒԹԵ(ԱՆ) ԱՒԱԳԻՆ ԵՒ Շ(ԱՀՆՇԱՀԻՆ ԵՒ ԵԴԻ
ԼՈՒ)Ծ Ի ՎԵՐԱ ՍՊԱՍԱՒՈՐԱՑ ՍՈՐԱ ԶԱՒ(ՈՒՐՆ) ՄԵԾԻ ԶԱՏԿԻՆ

[8] Պ. Մուրադյան, Դեղձնուտի վանքը և նրա վիմագրությունը, «Էջմիածին», 1953 թ., № 4, էջ 33—43։

5 Ա ՋճՐԱԳԼՈՒԹԻՆ ԺԱՄՆ ԻՄ ՀԱՐԱԶԱՏԻՆ ԿԱՏԱՐԵ(Լ ՄԻՆՋԵՒ ԳԱԼՈՒ)ՍՏՆ ՔԻ։ ԿԱ-
ՏԱՐԻՉՔ ՀՐԱՄԱՆԱՑ (Մ)ԵՐՈՑ ԱՒՐՀՆԵՍՑԻՆ.

6 ՈՐ ԽԱՓԱՆԵԼ ՋԱՆԱ ՄԵՐ ԱԶԳԻ ՄԵՂԱՑՆ ՊԱՐՏԱԿ(ԱՆ Է։ ՆՈՐՈ)ԳԵՑԱՒ ՍԲ ԱԾԱ-
ԾԻՆՍ ՑԱՌԱՋՆ(Ո)ՐԴՈՒԹԵ(ԱՆ) ՀԱՒՐ

7 ԵՒԱԳՐԻ ՀԵՋԻ ԵՒ ԽՈՆԱՐՀԻ ԵՒ ՀԱՍՏԱՏԵՑԻ ՉՍԱ ԱՌԱՋՆՈՐԴ ՑԱԶԳԷ ՑԱ(Զ)Գ.
ՄԻՆՋԵՒ ՑԱՒԻՏԵԱՆ։

Ծանոթություն.— Արձանագրությունը փորագրված է եղել արևելյան խաչթևի թաղի կենտրոնական հատվածի 7 քարերի վրա, քիվի ձևավոր գոտուց մեկ շարք վերև։ Ներկայումս այդ քարերից իրենց տեղում են առաջին երեքը և վերջին 7-րդը, իսկ միջամասի 3 քարերը պոկվել, ընկել են։ Սրանցից երկուսը՝ 5-րդը և 6-րդը, գտնվում են քիվի վրա. Նրանց երեսների գրերը պահպանվել են քիչ թե շատ անաղարտ վիճակում, և բովանդակությունը վերականգնվում է ոչ մեծ ջանքերով։ Այսպիսով, 7 քարերից պակասում է միայն մեկը՝ ,4-րդը։ Բացի դրանից, տեղում պահպանված 3-րդ քարի տողավերջի և վերջին քարի տողասկզբի մասերը, մոտ 2—3 տառերի չափով ջարդվել են, գրերը եղծվել, ուստի և նրանց տառաշարքերը դժվար են կապակցվում հարևան քարերի համապատասխան տողերի հետ։

Արձանագրության ամբողջությունը վերականգնելու համար անհրաժեշտ էր առանձին հատվածների պահպանված տառաշարքերը իրար մոտեցնել, կատարել հնարավոր նախնական բառանջատում, որը հնարավորություն կտար վերստեղծել անհայտացած՝ 4-րդ քարի բնագիրը, ինչպես նաև 3-րդ և 7-րդ քարերի վնասված մասերի առանձին գրերը և այսպիսով շարահյուսական կապ ստեղծել արձանագրության առանձին հատվածների միջև։

Այսպիսով, այս վերականգնումով բանասիրության ուշադրությանն է ներկայացվում Զաքարյան եղբայրների՝ մինչև այժմ անհայտ երկարաշունչ և ուշագրավ արձանագրությունը, որն արժեքավոր տեղեկություններ է հաղորդում այդ տոհմի կառուցողական գործունեության և հոգևոր կենտրոնների մասին.

Արձանագրության հրատարակմամբ ճշտվում է ամիրսպասալար Զաքարիայի մահվան թվականը՝ ՈԿԲ (1213 թ.)։

Վերծանվող բնագիրն իր կառուցվածքով հիշեցնում է Զաքարիա և Իվանե եղբայրների մի այլ նշանավոր արձանագրությունը Հաղարծնի գավթի վրա, որը թեև անթվագիր, սակայն ստուգապես նույն ժամանակի է։

Երկու դեպքում էլ բնագրի առաջին մասը շարադրվում է երկու եղբայրների անունից և պատմում նրանց 26-ամյա ազատագրական արշավանքները հայոց երկիրը «յանաւրէնաց» ազատելու և «փառահեղ ավերեալս» վանքերը վերանորոգելու մասին։ Երկրորդ մասը Իվանեի անունից է։ Այստեղ խոսվում է Զաքարիայի մահվան «յորժամ սիրեաց զնա Աժ եւ առ ինք տարաւ...») և նրա հիշատակը հավերժացնելու մասին։

Ուշագրավ է վերծանվող արձանագրության վերջաբանը, անեծքի բանաձևին հետևող մասը. Իվանեն Մորո ձորո վանքի առաջնորդ է հաստատում «հեզ եւ խոնարհ հայրս Եվագրին», ըստ որում հաստատում է «յազգէ ցազգ, մինչև հաւիտեան»։ Որքան մեզ հայտնի է, սա աննախընթաց դեպք է, գոնե վիմական արձանագրություններում, երբ աշխարհիկ իշխանը սահմանում է ժառանգական իրավունք հոգևոր հիերարխիայի համար։

## 2. Եկեղեցու արևելյան խաչթևի թաղի կենտրոնական մասը, քանդակազարդ գոտուց վերև, 5 քարերի վրա, 5 տող

1 ՑԱՆՈՒՆ ԱՑ, ԵՄ՝ ՍԱՍՆԱՑՍ ՄԻԱՅՐԱՆԵՑԱՑ ԻՄ ՈՐԴԱՒՔՍ ՄՈՐՈՑ՝
2 ՋՈՐՈՑ ԱԾԱԾՆԻՍ, ԵՒ ՀԱՅՐՍ ԳՐԻԳՈՐ ԵՒ ՍՅԼ ՄԻԱՅՐԱՆՔՍ ԵՏՈՒՆ
3 ԻՆՁ(Ի) ՏԱՐԻՆ։ Բ։ ԺԱՄ ԶՎԱՐԴԱՅՎԱՐԻՆ ՇԱԲԱԹՆ ԱՒՐՆ ԵՒ ԶԿԻՐԱԿԷՆ.
4 Զ։ Ա։ ԱՒՐՆ՝ ԻՆՁ, ,Ա,՝ ՇՈՒՇԿԱՆ։ ՈՎ ԽԱՓԱՆԷ ՄԵՐ ՄԵՂԱՑՆ ՊԱ
5 ՐՏԱԿԱՆ Է. ԵՒ ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆԻՆ ՅԱՑ։

ա. Նվիրատուի անունը՝ Սասնայ, Աճառյանի բառարանում (հտ. 7, էջ՝ 400) տեղավորված է նույն անունների շարքի վերջում՝ հիմք ընդունելով Մ. Բարխուդարյանցի վերծանությունը, առանց նշելու դրան մոտավոր ժամանակը։

Թեև արձանագրությունն անթվագիր է, սակայն նրա ժամանակը հեշտությամբ կարելի է որոշել Մորո ձորո վանքի առաջնորդ Գրիգորիսի վանահայրության տարիներով, որ երևում է № № 10, 13 բնագրերի ծանոթ., ինչպես հաստատել է 1197 թվից մինչև 1213 թիվը։

Որոշեմն այս Սասնան անձնանվան նախնագույն հիշատակությունն է, քանի որ մինչ այս հնագույնը համարված Բաղնայրի Սասնան ավանդված է 1229 թվից։

բ. 2-րդ և 3-րդ տողերում «միայրանեցա», «միայրանքս» և «վարդայվարին» բառերում յ կիսաձայնը ավելադրությամբ է գործածված. թողնում ենք անփոփոխ, քանի որ այս երևույթը պարզում է յ հնչյունի ուղղագրության վիճակն այդ դարերում (12—13 դդ.)։ «Զվարդայվարին» բառում անդրադարձված է ո հնչյու-

...ի փափկացումը, որը կարող էր տեղի ունենալ տեղա-...յան խոսվածքների ազդեցությամբ։ Այս բառը 12—13 ...դարերի վիմագրության մեջ շատ հաճախ գործածվում «վարդավառ», «վարդայվառ» ձևերով։

### 3. Եկեղեցու արևելյան խաչթևի թաղի հյուսիսային մասը, քանդակազարդ գոտուց վերև, մի քարի վրա, 9 տող

1 (Ի)։ Թ(ՎԻՆ)։ ՈԿՋ
2 ԵՄ ՄԽԻԹԱՐ ԵՒ ԱՄ
3 ՈՒՍԻՆ ԻՄ ՄԻԱԲԱՆ
4 ԵՑԱՔ ԵԿԵՂԵՑՈՑՍ. ԵՒ Ե
5 ՏՈՒՆ ՄԵՋ ԺԱՄ ԱՃ ԱՃ
6 ՆԻՆ։ Բ։ ՄԻՆ՝ ԻՆՁ. ։Ա՝ ՀԱ
7 ՐԿԵԽՈՐԻՆ։ ՈՐ ԽԱՓԱՆ
8 Է ԻՄ ՄԵՂԱՑՆ ՊԱՐՏԱԿԱՆ(Է)
9 ԳՐԱԾԷ Ի ԽԱՂԻՆ ԱՐԾԱԹԻ։

Ծանոթություն.— Արձանագրությունը փորագրված է ...Միակտուր սրբատաշ քարի վրա, պահպանվել է անեղծ, ...ընթերցվում և վերծանվում է անսխալ։ Տարակարծու-թյան տեղիք է տալիս վերջին տողը, որը ինքնուրույն, անկախ նախադասություն է։

Այդ շարքի բոլոր տառաձևերը նորից ստուգելով տե-ղում և լուսանկարի վրա համոզվեցինք, որ բնագիրը ...ստարածակ ճիշտ է արտագրված։ Արդ, ի՞նչ է նշա-նակում «Գրած է ի խաղին արծաթին»։

Այս արձանագրության միակ հրատարակիչ Մ. Բար-խուդարյանցը համաձայն կարդացել է «Գրած աղին ար-ծաթղին» («Արցախ»—342), որ ոչ միայն հեռու է ...րականից, այլև չի արտահայտում զանե որևէ մտա-ծոր իմաստ։

Այս նախադասությունը կարող էր մատնացույց անել ...ուն արձանագրության ժամանակը, բայց այդ էլ հաս-կանալը կթարգմանվեր «գրված է արծաթի խաղի ժա-մանակ (ներքը)», ուր «արծաթի խաղը» գրմական գոր-ծառնություններ է նշանակում։ Սակայն նման ենթա-դրությունը, որքան էլ հավանական, հանդիպում է 2 ...տուր առարկություն.

ա. Արձանագրությունը հենց սկզբից թվագրված է՝ ՈԿՋ (1217 թ.), ուստի անհավանական է, որ նրա հեղինակները անհրաժեշտություն զգային այս ոչ մեծ բնագրի վերջում նորից շեշտելու նվիրատվության ժա-մանակը, այն էլ առանձին նախադասությամբ։

բ. Կարելի էր տի խաղին արծաթին համարել ակնարկ ժամանակի մասին, եթե նվերները դրամական չլինեին (դահեկան, սպիտակ) և նվիրատուները հարկ համա-րեին հատկապես նշելու այդ դրամների՝ տվյալ ժա-մանակահատվածում ունեցած արժեքի մասին։

Հարցը բարդանում է նաև նրանով, որ «գրած է ի խաղին արծաթի» կապակցությունը անսովոր է տվյալ ժամանակի համար նաև իր քերականական կառուց-վածքով. ստորոգյալն արտահայտված է հարակատար դերբայով, որ հազվադեպ է այս դարերի վիմագրու-թյան մեջ։

Ավելի ուշադիր քննելով արձանագրության տառաձևե-րը նկատում ենք, որ «խաղին» տառաշարքի մեջ շղագիրը այնքան էլ նման չէ այս բնագրի մյուս դ-երին և հնարավոր է այն կարդալ նաև՝ չ կամ շ։ Տ կարդալու դեպքում քննարկվող նախադասությունը կդառնա՝ «գրած է ի խուշին արծաթի», որ մենք ամե-նից ավելի հավանական ենք համարում, ենթադրելով, որ փորագրողը կարող էր չ գիրը գծել դ-ի նման։

Այսպիսով, արձանագրության հեղինակներն այս տողն ավելացնելով ուզում են ընդգծել, որ նույն բնագիրը գրված է նաև վանքի սրբություններից մեկի՝ արծաթի խաչի վրա։

Նվիրատվության և հառուցման գործարքը համեր-ժական ու անխախտ դարձնելու նպատակով կատարվող նման երկրորդումը անսովոր չէ հայ վիմագրության համար։

### 4. Եկեղեցու արևելյան խաչթևի թաղի հարավային մասը, քանդակազարդ գոտուց վերև, 2 քարի վրա, 7 տող

1 ✠ ՑԱՆՈ Ն ԱՑ, ԵՄ ՅՈՎԱՆԷՍ ՄԻԱՑ-ԲԱՆՆ
2 ՑԱՑ ԱԾԱԾՆԻՍ ԵՒ ՀԱՑՐՍ ԴՐԻԳՈՐ ԵՒ ԱՑԼ
3 ՄԻԱԲԱՆՈՒՍ ԵՏՈՒՆ ԻՆՁ։ Ե։ ԺԱՄ ՁԼԿԵ
4 ՂԵՑԻՍ Ի ՆԱԻԱՍԱՐԴԻ։ Ա։ ՁՅՈՎՍՆՈՒ ՏԱԻՆ(ԻՆ)
5 ԵՒ։ Դ։ ԱՒՐ՝ ՀԵՏ ԻՒՐ։ ԱՑԼ։ Գ։ ԻՆՋ ԵՒ։ Բ ԱՄ
6 ՈՒՍՆՈՑ ԻՄՈՑ։ ՈՐ ԽԱՓԱՆԷ ՄԵՐ ՄԵՂԱ
7 ՑՆ ՊԱՐՏԱԿԱՆ Է։ ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆ-Ի(Ն) ԹԱՑ։

Ծանոթություն.— Արձանագրության ժամանակը պետք է որոշել Գրիգորիսի առաջնորդության տարիներով (1197—1213 թթ.).

ա. 3-րդ տողում «... Ետուն ինձ։ Ե։ ժամ զէկեղեցիս» ակնհայտ է փորագրողի սխալը, զ նախդիրի փոխարեն պետք է լիներ յ։ Նույն բառի մեջ առաջին Ե-ի դիմաց գրված է Է։ Այս գրերի նման շփոթումը, որ շատ հա-ճախակի է 11—12 դարերի վիմագրության մեջ, ցույց է տալիս, որ սրանց վաղուց արդեն տարբեր հնչյուններ չէին պատկերում, ինչպես այդ դիտվում էր հին գրա-կան հայերենում։

բ. 4-րդ տողում «... Ա։ ՁՅովանու տաւնին» տեղի է ունեցել ա. կետում նշված սխալը՝ զ նախդիրը անհար-կի է գործածված։

գ. Նվիրատուին խոստացված 5 պատարագամամերից մեկը պետք է կատարվի Յովանու տոնին, իսկ մնացած չորսը՝ «հետ իւր», դրանից հետո։ «Այլ։ Գ՝։ ինձ ևս Բ՝։ ամուսնոյ իմոյ» այստեղ «այլ» նշանակում է՝ «նաև», «բացի դրանից»․ քանի որ պատարագների քանակը ար-դեն մեկ անգամ ստորաբաժանված է ըստ նրանց կա-տարման ժամանակի, ուստի այստեղ նոր, ըստ պատ-

*կանխիկության բաժանումից առաջ գրված է «այլ» շաղկապը։*

**5. Եկեղեցու արևելյան խաչթևի հարավային մասը, մի ղեղնավուն քարի երկու երեսներին, կիսաեղծված, 7 տող**

*1 ԵՍ՝ ԱԲՈՒՂԱՄՐ ԵՒ (ԻՄ)*
*2 ԵՂԲԱՅՐՍ ԳՐԻԳՈՐ Մ(ԻԱ)Յ*
*3 ԲԱՆԵՑԱՔ ԱԾԱԾ(ՆԻ)Ս, ԵՒ*
*4 ՆՈՔԱՅ ԵՏՈՒՆ ԻՆՁ .. ԱՒ*
*5 Ր ԺԱՄ(Ի) ՆՈՐ ԿԻՐԱԿԷ(Ն)Ւ(Ո)Վ*
*6 ԽԱՓԱՆԷ ԻՄ ՄԵՂ(ԱՑԱՆ)*
*7 ՊԱՐՏԱԿԱՆ (Է)։*

Ծանոթություն.— *Արձանագրված քարի աջ անկյունը ամբողջ բարձրությամբ ջարդվել է, որի հետևանքով արձանագրության տողավերջերի գրերը չեն կարդացվում։*

*ա. 2-րդ և 4-րդ տողերում «միայբանեացս», «նոքայ» բառերում յ-ն ավելորդություն է, որ հաճախ է հանդիպում այս դարերի վիմարձանագրություններում։*

*Բնագիրը չենք ուղղում, քանի որ այդ երևույթը անդրադարձնում է յ կիսաձայնի ուղղագրության վիճակը տվյալ ժամանակաշրջանում։*

*բ. 4-րդ տողում նվիրատուին տրվելիք պատարագամների քանակը հնարավոր չէ վերականգնել, որովհետև այդ մասը ջարդված է։*

**6. Եկեղեցու հյուսիսային խաչթևի կամարի վրա, ներքուստ, շարունակությունը աքսիդի թաղի վրա, 6 տող**

*1 (ԵՍ Ա)ՌԱՆ ՄԻԱՅԲԱՆԵՑԱ ԱԾԱԾ(Ն)ԻՍ․ Ի,*
*2 ԴԱՀԵԿՆՈՎ, ՄԻԱԲԱՆՔՍ Ի ԴԱՒԹԻ ԵՒ ՅԱ*
*3 ԿՈԲԱ ՏԱՒՆԻՆ, Ա̄,*
*4 ԺԱՄ ԳՐԵՑԻՆ ԻՆՁ,*
*5 ՈՎ ԽԱՓԷ ԴԱՏ*
*6 Ի ՅԱ̄Յ ✠։*

Ծանոթություն.— *ա. Առաջին տողում նվիրատուի անունը դժվար է վերականգնվում, տողասկզբին ջարդված է 2—3 տառատեղ՝ հաշված նաև հավանական ես—ը, այսպիսով, պակասում է միայն մի գիր, որ և համարում ենք Ա-ն, Ուրեմն անձնանունը վերծանում ենք Առան, որը հազվադեպ է հայ իրականության մեջ։*

*բ. 2-րդ տողում դահեկան բառի վերջընթեր ա—ն գործիական հոլովում շեշտափոխության հետևանքով հնչյունափոխության է ենթարկվել և սղվել (դահեկնով)։*

*Ա կայուն հնչյունի հնչյունափոխությունը կամ սղումը դասական հայերենում չի դիտվում, սակայն այս երևույթը ժողովրդական հնչման ազդեցությունը պետք է համարել, պայմանով, եթե բացառվի փորագրողի սխալը։*

**7. Եկեղեցու հյուսիսային խաչթևի թաղի արևմտյան մասը, ծնավոր քիվից վերև, 4 քարի վրա, 5 տող**

*1 ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹ(ԵԱՄ)Բ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԳԻՒՈՐԳԷ*
*2 ԵՍ՝ ԱՄԻՐ ՔՈՒՐԴՍ ԱՌԻ ԳԻՐ ԱԶԱՏՈՒԹԵ(ԱՆ) Ի ԹԱԳ(ԱՒՈՐԷ)*
*3 ՍԲ ԱԾԱԾՆԻՍ ՄՈՐՈ ՁՈՐ(Ո) ՀԱՒՐՆ ՅՈՎԱՆԻՍԻ ԵՒ ՆԱ ԵՏ ԻՆՁ*
*4 Ի ՏԱՐԻՆ, Ա̄, ԺԱՄ ՁԾԱՌՁԱՐԴԱՐՆ, ՈՎ ԽԱՓԱՆԷ*
*5 ԴԱՏԻ ՅԱՅ,*

**8. Եկեղեցու հյուսիսային խաչթևի թաղի արևելյան մասը, նախորդի շարունակությամբ վրա, 4 քարի վրա, 6 տող**

*1 ԱՆՈՒԱՄԲ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ԱՅ, ԵՍ՝ ԳԻ-ԱՒՐԳԻ, ԹԱԳԱՒ*
*2 ՈՐԱՑ ԹԱԳ(ԱՒՈՐ) ԵՏՈՒ ՁՄՈՐՈ ՁՈ-ՐՈ ՎԱՆՔՍ ՀԱՒՐՆ ՅՈՎԱՆԻՍԻ,*
*3 ԵՒ ԱՐԱՐԻ ԱԶԱՏ ՅԱՄԵՆԱՅՆ ՀԱՐԿԷ, ԱՄԻՐ ՔՐԴԻՆ ՀՈԳ*
*4 ՅՈՂՈՒԹ(ԵԱՄ)Բ, ՈՐ ԻՆՁ ԱՂԱՒԹՔ ԱՐՆԵՆ, ՈՐ ՄԵՐ ՀՐԱՄԱՆԱՑՍ ՀԱ*
*5 ԿԱՌԱԿ ԼԻՆԻ, Ա(ՍՏՈՒԾՈ)Յ ՀՐԱՄԱՆԻՆ Է ՀԱԿԱՌ, ՀԱՍՏԱՏ Է ԳԻՐՍ*
*6 ԱՆՈՒԱՄԲՆ ԱՅ,*

Ծանոթություն.— *Համարյա նույն բովանդակության այս արձանագրությունները Մորո ձորո վանքի հնագույն հիշատակություններն են։ Թեև նրանք չեն թվագրված, սակայն ժամանակը որոշվում է նրանցում հիշատակված անձերի ժամանակագրությամբ։ Հայտնի է, որ վրաց Գեորգի Գ թագավորը գահակալել է 1156—1184 թթ.։ Այս նույն ժամանակներում էր գործում նաև Կայենո և Մահկանաբերդի իշխան Ամիր Քուրդ Արծրունին, Զաքարիայի և Իվանեի մորեղբայրը, աթաբեկ ամիրսպասալար Սարգիս Բ-ի մեծ պապը։ Ամիր Քուրդը վիթխարի հեղինակություն ուներ վրաց արքունիքում, որի շնորհիվ Գեորգի Գ-ի ժամանակ հասել էր Թիֆլիսի ամիրապետի բարձր դիրքին։*

*Վերծանված բնագրերից հայտնի է դառնում, որ Մորո ձորո վանքը 12-րդ դարի երկրորդ կեսին հասնելով բարձր զարգացման, հանդիսանում էր Մահկանաբերդի իշխանների հնագույն ու նշանավոր հոգևոր ու մշակութային կենտրոններից մեկը։*

*Այդ է պատճառը, որ Ամիր Քուրդը իր «հոգեգոդությամբ» հատուկ թագավորական արտոնագիր («գիր ազատության») է բերում Գեորգի Գ-ից Մորո ձորո վանքին, որով «թագավորաց թագաւորը» վանքն ազատում է «յամենայն հարկէ» և հանձնում հայ Յովանիսի առաջնորդությանը։*

(Շարունակելի)



# ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

**Հայաստանի Գերագույն սովետի յոթերորդ գումարման առաջին նստաշրջանը.**—Մարտի 19-ին տեղի ունեցան Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի ընտրությունները։ Գերագույն սովետի դեպուտատ ընտրվեցին 310 մարդ։

Ապրիլի 14—15-ը տեղի ունեցավ նորընտիր Գերագույն սովետի 7-րդ գումարման անդրանիկ նստաշրջանը։ Գերագույն սովետը քննության առավ առողջապահության գործի դրվածքը Հայաստանում և ընդունեց ընդարձակ որոշում՝ այդ գործը բարելավելու համար։ Այնուհետև նստաշրջանը հաստատեց դեպուտատների լիազորությունները։

Կազմվեցին Գերագույն սովետի մշտական գործող հանձնաժողովներ և հաստատվեցին Գերագույն սովետի նախագահության վերջին չորս տարում ընդունված հրամանագրերը։ Ապա ընտրվում է Գերագույն սովետի նախագահություն՝ բաղկացած 19 հոգուց։ Նախագահության նախագահ է վերընտրվում Ն. Խ. Հարությունյանը։

Գերագույն սովետը քննարկեց ու հաստատեց Հայաստանի հանրապետության կառավարության կազմը և ընտրեց հանրապետության Գերագույն դատարանի կազմը։ Նշանակված են 29 մինիստրներ, պետական յոթ կոմիտեների նախագահներ և ութ գլխավոր վարչությունների պետեր։

Մինիստրների սովետի նախագահ վերընտրվեց Բ. Հ. Մուրադյանը։

**Հայաստանը Մոնրեալի ցուցահանդեսում.**—ՍՍՀՄ բոլոր 15 հանրապետությունները Մոնրեալի ցուցահանդեսի սովետական տաղավարում ունենալու են իրենց առանձին սրահները։ Հանրապետություններից յուրաքանչյուրը կունենա իր ազգային օրը։

Հայաստանի ազգային օրը նշանակված է մայիսի 20-ին։ Օրվա հանդիսավոր բացմանը ներկա է լինելու Հայաստանի պատվիրակությունը։ Հայկական սրահում ցուցադրվելու է Սովետական Հայաստանի նվաճումները արդյունաբերության, գիտության, շինարարության, մշակույթի ու արվեստի բնագավառներում։ Այնտեղ ներկայացվելու են հայ նկարիչների ու քանդակագործների աշխատանքները, հայ գրողների ու գիտնականների երկերը։

Ազգային օրվա առթիվ կցուցադրվեն հայկական ֆիլմեր։ Մայիսի 20-ին ցուցահանդեսում կտրվեն հայկական երաժշտության համերգներ, որոնք կձայնասփռվեն ու կհաղորդվեն Կանադայի ռադիոյով ու հեռուստատեսությամբ։ Համերգներին կմասնակցեն Հայաստանի լավագույն դերասանական ուժերը։

Ցուցահանդեսի հայկական տաղավարում կարելի է ձեռք բերել հայկական հետաքրքիր հուշանվերներ։

**Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ.**—Հայկական գրեթե բոլոր ձեռագրերը վերջում ունենում են ընդարձակ կամ համառոտ հիշատակարաններ, որոնք գրված են տվյալ ձեռագրերը արտագրողի կողմից։ Այդ հիշատակարանները շատ դեպքերում կրում են տարեգրության բնույթ, պարունակելով իրենց մեջ հետաքրքիր տեղեկություններ տվյալ ժամանակաշրջանի վերաբերյալ։

Մեր պատմության որոշ շրջանների համար, որոնք հարուստ են պատմագրական երկերով, այդ հիշատակարանները այնքան էլ կարևորություն չունեն։ Սակայն 14—16-րդ դարերի պատմության ուսումնասիրության համար դրանք անփոխարինելի սկզբնաղբյուրներ կարող են լինել։

Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի տեսուչ, դոկտ.-պրոֆ. Լ. Խաչիկյանը կազմել է 15-րդ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների 3-րդ հատորը, որը լույս տեսավ վերջերս գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ։ Հատորը պարունակում է 814 հիշատակարան և ընդգրկում է 1481-ից մինչև 1500 թվականը։

Առաջիկայում հրատարակվելու են Մատենադարանի բոլոր ձեռագրերի հիշատակարանները։

**Հետաքրքիր մենագրություն.**—Լույս է տեսել հնագետ Էմմա Խանզադյանի հետաքրքիր մենագրությունը՝ «Հայկական լեռնաշխարհի մշակույթը 3-րդ հազարամյակում» խորագրով։

Աշխատությունից իմանում ենք, որ հեռավոր անցյալում մեր լեռնաշխարհում բնակվող ցեղերը ունեին

զարգացած տնտեսություն և բարձր մշակույթ։ Անհիշելի ժամանակներից ի վեր Արարատյան դաշտի բնակիչները զբաղվել են այգեգործությամբ և անասնապահությամբ։ Օգտակար հանածոներով հարուստ լեռնաշխարհը մետաղի հումք է մատակարարել իր հարևան երկրներին։ Շատ տարածված է եղել Հայաստանի օբսիդաքարը։ Պեղումների ժամանակ հայտնաբերված նյութերը ցույց են տալիս, որ հայկական լեռնաշխարհի բնակիչներին քաջ ծանոթ է եղել մետաղագործությունը, խեցեգործությունը, կաշեգործությունը, քարակոփությունը և այլ արհեստներ։

**Գիրք Հովհ. Այվազովսկու մասին.**—Հայաստանի պետական կենտրոնական արխիվի մի խումբ աշխատակիցներ պատրաստել են «Այվազովսկի» խորագրով հետաքրքիր մի գիրք՝ աշխարհահռչակ ծովանկարչի կյանքի և գործի վերաբերյալ։ Գիրքը լույս կտեսնի նկարչի ծննդյան 150-ամյակի առիթով, որը լրանում է այս տարվա հուլիս 30-ին (նոր տոմարով)։

Գրքում օգտագործված են շուրջ 300 փաստաթղթեր, որոնցից շատերը առաջին անգամ են հրատարակվելու։ Այդ փաստաթղթերից մեկը վերցված է Թեոդոսիայի հայոց եկեղեցու մատյանից, որը վկայում է, թե «Գևորգ Այվազյանի որդի Հովհաննեսը ծնվել է 1817 թվականի հուլիսի 17-ին (հին տոմարով)։

Զետեղված են մեծ թվով նամակներ՝ գրված Հ. Այվազովսկու կողմից Ներսես Աշտարակեցուն, Նորայր Բյուզանդացուն, Պետրոս Ադամյանին, Հարություն Տայանին և ժամանակի այլ հայ հասարակական գործիչներին։ Նամակները վկայում են մեծ նկարչի ջերմ հայրենասիրության մասին, որը նա տածում էր դեպի հայ ժողովուրդը և նրա մշակույթը։

**Հայաստանի գիտությունների ակադեմիայի տարեկան ժողովը.**—Վերջերս Երևանում տեղի ունեցավ Հայաստանի գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը, որը քննության առավ ակադեմիայի 1966 թվականի գործունեության արդյունքները։

Ժողովը ներածական խոսքով բացեց ակադեմիայի պրեզիդենտ Վ. Համբարձումյանը՝ նշելով հայ գիտնականների նոր հաջողությունները ֆիզիկայի, աստղաբաշխության, քիմիայի, երկրաբանության, կիբեռնետիկայի և գիտության այլ ճյուղերի բնագավառներում։

Ակադեմիայի տարեկան գործունեության հաշվետու զեկուցումով հանդես եկավ ակադեմիկոս-քարտուղար Ս. Մկրտչյանը։

Ժողովի վերջում տեղի ունեցավ մասնակի ընտրություններ։ Ակադեմիայի փոխ-պրեզիդենտներ ընտրվեցին Ս. Մկրտչյանը և Ա. Հովհաննիսյանը։ Ակադեմիկոս-քարտուղար ընտրվեց Գ. Դավթյանը։ Համալրվեց ակադեմիայի նախագահության կազմը և հաստատվեց բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղարների ու ինստիտուտների դիրեկտորների կազմը։

Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատվավոր անդամներ ընտրվեցին ծովակալ Հովհ. Իսակովը և ֆրանսահայ պատմաբան-աշխարհագրագետ Զ. Խանզադյանը։

**«Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին».**—Այսպես է կոչվում այն մատենաշարը, որի հրատարակմանը ձեռնամուխ է եղել Հայաստանի գիտությունների ակադեմիան։ Վերջերս լույս տեսավ այդ մատենաշարի 5-րդ հատորը։ Գիրքը իր մեջ պարունակում է 6-րդ դարի բյուզանդական պատմաբան Պրոկոպիոս Կեսարացու մի քանի աշխատությունները Հայաստանի մասին։ Հիշատակության արժանի են «Պատերազմների մասին», «Կառուցումների մասին» և «Գաղտնի պատմություն» աշխատությունները, որոնցից հայերին վերաբերող առանձին գլուխներ [illegible] են գտնել գրքում։ Զետեղված են նաև Հուստինիանոս կայսեր հրովարտակները Հայաստանի մասին։

Գրքում զետեղված նյութերը թարգմանել է Հ. Բարթիկյանը։

**Գիտության կաճառը.**—Երևանի պետական համալսարանը իր գոյության 46 տարիների ընթացքում տվել է 18000 մասնագետներ, որոնց կեսը հասարակական գիտությունների գծով։

Համալսարանի 11 ցերեկային, 8 երեկոյան և 4 հեռակա բաժիններում սովորում են մոտ 10000 ուսանողներ։ Նրանցից 1300-ը այս տարի կավարտեն։ Համալսարանն ունի 678 դասախոս, որոնցից 15[illegible]-ը ակադեմիկոսներ, դոկտորներ ու պրոֆեսորներ են։

**Երևանի հիմնադրման թանգարան.**—Շուրջ 15 տարի է, ինչ Արին-Բերդում կատարվում են հնագիտական պեղումներ, որոնց շնորհիվ հայտնաբերված են մեծ քանակությամբ պատմական հետաքրքրություն ներկայացնող նյութեր։

Այդ նյութերը վկայում են, որ Արին-Բերդ եղել է նախնական այն բնակավայրը, որից սկիզբ է առել Երևանը։ Այսպիսով ապացուցվում է, որ Երևանը հիմնվել է մեր թվագրությունից առաջ 782 թվականին։

Կառավարական մարմինների որոշմամբ Արին-Բերդը դառնալու է Երևանի հիմնադրման թանգարան։ Կառուցվելու է գեղեցիկ ձևավորված թանգարանային շենք, որը միաժամանակ կպաշտպանի հայտնաբերված վեմերն ու շինությունները բնական արհավիրքներից։ Շենքի շրջակայքը բարեկարգվելու է ու կանաչապատվելու, կառուցվելու է նոր ճանապարհ։

**Մի նոր հսկա էլեկտրակայան.**—Հրազդանում (Ախտա) կառուցվում է մի նոր հսկայական էլեկտրակայան, որը կունենա 800000 կիլովատ ժամ կարողություն։ Դա ավելին է, քան Սևանի բոլոր 6 և Տաթևի ջրային էլեկտրակայանների հզորությունը միասին վերցրած։

Նոր կայանը, ինչպես Երևանի, Կիրովականի ու Հրազդանի ջերմաէլեկտրակայանները, աշխատելու է գազով կամ մազութով։ Տարբերությունն այն է, որ ստացված գոլորշին հատկացվում է էլեկտրականության արտադրության, մինչդեռ ջերմաէլեկտրակայա-

նում գտնվող մի մասը գործածվում է արդյունաբերության այլ կարիքների համար։

Նոր էլեկտրակայանը լրիվ թեռնվածությամբ կսկսի աշխատել 1970 թվականին։

**Քարաձուլման գործարան.**—Բազալտ քարից ձուլվածքների պատրաստելը նորություն չէ Հայաստանում։ Այդպիսի փորձեր շատ են կատարվել, որոնք միշտ էլ դրական արդյունք են տվել։

Մինչև այժմ այդ աշխատանքները կատարվել են փորձնական ձևով, լաբորատոր եղանակով։ Այժմ նախապատրաստական աշխատանքներ են տարվում բազալտի ձուլման խոշոր գործարան կառուցելու։ Գործարանը կառուցվելու է Արազած երկաթուղային կայարանի մոտ։ Այն տարեկան արտադրելու է 25000 տոննա զանազան ձուլվածքներ բազալտից։

Բազալտե ձուլվածքներն իրենց հատկություններով գերազանցում են մետաղյա ձուլվածքներին և ավելի երկար են դիմանում ամեն տեսակի քիմիական նյութերին։ Այդ ձուլվածքները օգտագործվելու են արդյունաբերության տարբեր ճյուղերի և շինարարության մեջ։

**Նոր մարզադաշտ.**—Հրազդանի ձորում, Ծիծեռնակաբերդի բլուրի մոտ, սկսվել են Երևանի նոր մարզադաշտի կառուցման աշխատանքները։ Այն կունենա ֆուտբոլի դաշտ 70000 հանդիսականների համար և մի շարք մարզական կառույցներ ու հարմարություններ՝ սպորտային բոլոր ձևերի խաղերի համար։

Ապագա մարզադաշտը, որը կոչվելու է «Հրազդան», մասն է կազմելու Ծիծեռնակաբերդի զբոսայգու, ուր այժմ կառուցվում է Եղեռնի հուշարձանը և սպորտի պալատը։ Զբոսայգին հետագայում կկազմի քաղաքի կենտրոնական մասերից մեկը։ Կառուցվելու են դեպի մարզադաշտ տանող նոր ճանապարհներ՝ ինչպես օդային, այնպես էլ ավտոմոբիլային երթևեկության համար։

**Հետաքրքիր թվեր.**—Ներկայումս Հայաստանում գործում են 280 զանազան հիվանդանոցներ՝ ավելի քան 18000 մահճակալով։ Բացի այդ, գործում են 258 տարբեր տեսակի բուժարաններ և 229 մանկաբարձական հաստատություններ, որոնցից 42 ծննդաբերական հիվանդանոցներ։

**Արվարձանի բարեկարգումը.**—Երևանի արվարձաններից նախկին Նոր Սեբաստիան և Նոր Մալաթիան, որոնք այժմ վերամիավորված են Շահումյան շրջանի մեջ, փռված են բլուրների լանջերին։ Բլուրների գագաթները լերկ են, ամայի ու աննրապույր։

Ամբողջ շրջանի բարեկարգման հետ միասին, բարեկարգվելու են նաև բլուրները։ Նրանցից մեկի գագաթին կառուցվում է պալատ՝ շրջանի պիոներների համար։ Պալատը կունենա ձմեռային այգի, մարմնամարզական դահլիճ, լողարան, հանդիսասրահ, պլանետարի, գրադարան և երաժշտական դպրոց։

Մեկ ուրիշ գեղատեսիլ բլրի վրա կառուցվում է աստղաձև ճաշարան, որի սրահներից կերևա քաղաքի համայնապատկերը։ Էջմիածնի ճանապարհին գտնվող 3 բլուրները ամբողջովին անտառապատվելու են և կծառայեն իբրև զբոսայգի։ Շուտով կավարտվի ջրմուղի շինարարությունը։

**Օտարերկրյա զբոսաշրջիկներ 1967 թվականին.**—Տարեց-տարի ավելինում է Հայաստան այցելող զբոսաշրջիկների թիվը։ 1956 թվականին այդ թիվը կազմել է մոտ 90, իսկ անցյալ՝ 1966 թվականին Հայաստան են այցելել ավելի քան 12000 զբոսաշրջիկներ՝ 74 տարբեր երկրներից։

Այս տարի սպասվում են ավելի շատ զբոսաշրջիկներ, քանի որ Սովետական Միության համար հոբելյանական տարի է։ Տենդագին նախապատրաստություններ են տեսնվում զբոսաշրջիկներին ընդունելու, տեղավորելու և սպասարկելու։ Ստեղծված են նոր ավտո-հետիոտն երթուղիներ՝ Երևան-Բյուրական-Ամբերդ, Երևան-Դիլիջան-Հաղարծին և այլն։

Օտարերկրյա զբոսաշրջիկների համար ներկայումս Երևանում կառուցվում են երեք խոշոր՝ 12—14 հարկանի հյուրանոցներ, որոնցից յուրաքանչյուրը կարող է ընդունել 500 մարդ։ Այս տարի կսկսվի «Արմենիա» հյուրանոցի 4-րդ հատվածի շինարարությունը, որը կլինի 10 հարկանի և իր մեջ կընդգրկի երաժշտական կոմեդիայի թատրոնի շենքը։ Սևանի ափին, Ծովագյուղի մոտ և Երևանյան լճի ափին կառուցվելու են մոտելներ՝ սեփական ավտոմեքենաներով երթևեկող զբոսաշրջիկների համար։ Նրանցից յուրաքանչյուրը կարող է ընդունել 200 մարդ և մեքենա։

Հոկտեմբեր ամսին «Արմենիա» ջերմանավով կազմակերպվելու է զբոսապտույտ դեպի Մերձավոր Արևելքի երկրները։ Պտույտին կմասնակցեն ավելի քան 900 երևանցիներ։

